



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

ՊԱՏՎԵՐԱՀԱՅՐԻ  
ԱՇԽԱԲԱԴԻ ԱՐԵՎԱԿԱ  
ՊՈՂԱԿԱՆ ԹԱՅԻ ՀԱՅՐԱՎՈՒՄ

Տ ԳԵՅԻ ՋԱՎՈՐՈՒՅՑ

Տ Պ Ա Յ

Ա. Մ. Պ Ա Վ Ո Վ Ա Խ Ա Խ Ա

6982

6983


6984

Ի ԺՈՂՈՎԻ ՅԱՎՈՐՈՒՅՑ Վ Ա Յ Ա

1886

91(~)

Գ-34



# ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Բ Ն Ա Կ Ա Ն

ԸՆՏ ՆՈՐԱԳՈՅՆ ՏԵՂԵԿՈՒԹԵԱՆՑ

Գ Ր Ե Ց

Ա. Մ. ԳԱՐԵԳՈՒՅՆԱՆ

معارف نظارت جلیله سنك ۳۲۴ نومر ولی رخصتنا مه سیمه طبع او نشادر



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՅԱՎԱԽԵԱՑ ԳԱՎԱՖԵԱՆ

—  
1885

# ԱՅԻԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ

~~~~~

ԴԱՍ Ա.

Հ. Բնական աշխարհագրութիւնն ինչ բանի վրայ կը խօսի :

Պ. Բնական աշխարհագրութիւնը կը խօսի  
Ա. Երեք երեսին, Բ. Թնալորովն կամ ուղարկած վրայ  
որ զերկիրս կը պատէ և երկրիս կը վերաբերի,  
ինչպէս նաև մթնոլորտին մէջ տեսնուած երե-  
սայիներու վրայ, և Գ. Երկիրս բաղկացնող և  
անոր երեսին վրայ գտնուած անդորժարու և  
գործարանաւոր մարմնոց. ինչպէս քարերու,  
հանքերու, բուսոց և չնչաւորաց վրայ:

Ա. ԵՐԿՐԻՍ ԵՐԵԾԼ

Հ. Երկրիս երեսն ինչ նիւթերէ կը բաղկա-  
նայ :

Պ. Երկրիս երեսը կը բաղկանայ ցանուէ և  
ջուրէ :

Ց Ա Մ Ա Ք

12012

Հ. Ցամաքն ինչ ձեւերով կ'երեւի մեզ:

Պ. Ցամաքը երեւի մեզ իբրեւ բաշու, լու-  
նու, հովտ, կերճ, լուս, պարանոց, ևն. որոց

52341 - 14. հ.



գ. 39564-67

վրայ՝ խօսուած է քաղաքական աշխարհա-  
գրութեան մէջ։

Հ. Երկրիս երեսին վրայ ցամաքն ի՞նչպէս  
բաժնուած է։

Պ. Հիւսիսային կիսագունտին վրայ ցամա-  
քը գրեթէ երեք անգամ աւելի է քան հա-  
րաւային կիսագունտին վրայ։ Նոյնպէս Ափ-  
րիկէի արեւմտեան եղերքէն ակսելով՝ արեւե-  
լեան կիսագունտին վրայ ցամաքը երկիցս ա-  
ւելի է քան արեւմտեան կիսագունտին վրայ։

Հ. Թէ հին և թէ նոր ցամաքին վրայ եր-  
կիրս ի՞նչ ձեւ ունի։

Պ. Թէ հին և թէ նոր ցամաքին վրայ երկ-  
րիս ձեւը շատ անկանոն է։ Ցամաքին գրեթէ  
ամէն կողմէն դէպ ՚ի ծով կ'երկնան մեծ և  
փոքր մասեր, այսինքն ցամաքակղղիք և թե-  
րակղղիք։ և նոյն իսկ երկրիս չորս մասերն,  
Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ և Ամերիկա մէն մի  
մեծ ցամաքակղղի են։

Հ. Ցամաքին երեսն ի՞նչպէս է։

Պ. Ցամաքին ի՞նչպէս եղերքը, նոյնպէս ե-  
րեսն ունի բարձրացեալ և խորացեալ մասեր,  
այսինքն, լեռներ և հովիտներ կամ դաշտեր։  
Նոյնպէս իմա կղղեաց համար։

## ԴԱՍ Բ.

### Խ. ԼԵՐԻՆՔ

Հ. Լեռներն ի՞նչպէս են երկրիս վրայ։

Պ. Լեռներն երկրիս երեսին վրայ ընդհան-  
րապէս աւելի կամ նուազ երկայն գոտիներ



ԼԵՐԻՆ ՏԵՍԱՐԱՆ

են, և գրեթէ ամէն տեղ կ'երթան ընդ եր-  
կայնութիւն ցամաքին։ զորօրինակ յեւրոպա՝  
Ալպեան, կարպաթեան, Պիւրենեան, Պալ-  
դանեան գոտիներն կը ձգուին արեւելքէն  
արեւմուտք։ Նոյնպէս են ցամաքակղղեաց վր-  
այ, այսինքն ընդ երկայնութիւն ցամաքա-  
կղղւոյն, ի՞նչպէս Քէօլէն կոչուած գոտին՝

Սկանտինաւեան ցամաքակղղւոյն վրայ , իբեր-  
եան գօտիք՝ Սպանիական ցամաքակղղւոյն  
վրայ , Ապենինեան գօտին՝ Խտալական ցամա-  
քակղղւոյն վրայ , և Հելլենական գօտին՝ Թուր-  
քոյ-Հելլենական ցամաքակղղւոյն վրայ :

Հ. Ասիոյ մէջ լեռներն ի՞նչ ուղղութիւն  
ունին :

Պ. Նոյն ուղղութիւնն ունին նաեւ Ասիոյ  
լերինք , այսինքն ցամաքին վրայ՝ արեւել-  
քէն արեւմուտք , ինչպէս Արդայի , Հիմալայա ,  
Ճաւրոս , Սդանաւոյի կոչուած գօտիք . և հիւ-  
սիւսէն հարաւ՝ ցամաքակղղեաց վրայ , ինչպէս  
Հնդկաստանի և Քոչինչինի գօտիք :

Հ. Ափրիկէի մէջ ի՞նչ ուղղութիւնն ունին :

Պ. Նոյն ուղղութիւնն ունին նաեւ Ափրի-  
կէի գլխաւոր գօտիք , զորօրինակ , Աղլաս ;  
Քօնկ և Լուսնոյ լերանց գօտիք , այսինքն ա-  
րեւելքէն արեւմուտք : Հարաւային մասին վր-  
րայ միայն որ գրեթէ ցամաքակղղի է , լերինք  
կ'երթան ՚ի հիւսիսոյ ՚ի հարաւ , ինչպէս Հո-  
դէնդոդիոյ և Քաֆրաստանի լերինք :

Հ. Ամերիկայի մէջ ի՞նչ ուղղութիւնն ունին  
լերինք :

Պ. Ամերիկայի մէջ որ իբրև մեծ ցամաքա-  
կղղի է , լերինք կ'երթան ՚ի հիւսիսոյ ՚ի հա-  
րաւ , ինչպէս Ալլեկանի գօտին՝ արեւելեան  
կողմը , Ապառաժուտ և Անդեան գօտիք՝ ա-  
րեւմուեան կողմը :

Հ. Երկրիս Երեսին վրայ լեռներն ի՞նչ բարձ-  
րութիւնն ունին :




ԿՎԵՐԵՍԹ ԼԵՌԵ

Պ. Երկրիս վրայ լեռներուն բարձրութիւնը  
միօրինակ չէ . այս բարձրութիւնը ծովին ե-  
րեսէն 1,400է մինչեւ 8,500 մեդրոյ կը համնի:  
Այս վերջին բարձրութիւնն ունի Հիմալայա  
գօտին , առաջինը՝ Գաղիոյ Վուժ կոչուած  
գօտին : Մնացեալ գօտիներուն բարձրութիւ-  
նըն այս երկուքին մէջտեղն է :

Հ. Լերանց զառ ի վայրը կամ շեղութիւնն  
ի՞նչպէս է :

Պ. Ընդհանրապէս լերանց մի կողմը շատ  
սեպ և ուղղորդ է , և միւսը՝ շատ մեղմ .  
զորօրինակ , Ալպեան լերանց Խտալիոյ կողմն

աւելի սեպ է քան ջուկցերայի կողմը . զիւ-



բենեան լեռանց հարաւային կողմն աւելի սեպ  
է քան հիւսիսային կողմը :

չ. լերինք երկրիս ուրիշ մասերուն նայե-  
լով ի՞նչպէս են :

Պ. լերինք երկրիս գեղեցկագոյն մասն  
են . ունին հանքեր , մետաղներ , անտառներ ,  
սառուցեալ և ձիւնապատ գագաթներ , ա-  
հեղ գահաւանդներ , հովասուն և զուարճալի  
հովիտներ . երեւոյթն անգամ նոցա հիա-  
նալի է :

Հ. լերանց մէջ յիշուելու արժանի ի՞նչ  
կայ :

Պ. լերանց մէջ յիշուելու արժանի են այ-  
րեւ , որ երկրաշարժէ և ուրիշ բնական պատ-  
ճառներէ բացուած ծակեր են այլ և այլ մե-  
ծութեամբ և ձեւով :

Հ. Այրերէն ոմանց մէջ ի՞նչ զարմանալի  
բան կը տեսնուի :

Պ. Այրերէն ոմանց մէջ զարմանալի են  
Սրբագրէր և Սրբագրէր կոչուած պաղած սիւ-  
ները որ այրին կամարէն կաթող ջրոյ կայլակ-  
ներէ կը կազմուին : Երբեմն այս երկու սիւ-  
ները վերէն և վարէն իրարու կցուելով այրին  
մէջ գեղեցիկ սիւներ կը յօրինեն : Ջրոյ կա-  
թիլներուն այսպէս կարծրանալուն պատճառ  
ջրոյն մէջ խառնուած կիրն է :

Հ. Հրաբուղիսք ի՞նչ են :

Պ. Հրաբուղիսք լեռներ են որ կ'արձակեն  
քար , մոխիր , աւաղ , բոց և ծուխ , երբեմն  
նաեւ ջուր և ցեխ :

Հ. Հրաբուղիսք միշտ բորբոքած են :

Պ. Ոմանք մարած են , այլք դեռ վառ են :



ԱՏԵԱ ԼԻՇԱ

— 11 —

Այս վերջիններուն թիւը բոլոր երկրիս վրայ հիմա 500 է, 14՝ յերոպա, 127՝ յԱսիս, 204՝ յԱմերիկա, և 171՝ յՈվկիանիս։ Հրաբուղիներուն երկու երրորդը կղզիներու վրայ են. անոնք որ ցամաքի վրայ են՝ ընդհանրապէս մօտ են ծովերու։



ԵՐԵԲՈՍ ԼԵՇԱ

## ԴԱՍ Գ.

### 2. ԴԱՇՏՔ


Հ. Երկրիս ցամաքին վրայ դաշտերն ուրիշ մասներուն հետ Բնչ համեմատութեամբ են։

Պ. Երկրիս ցամաքին վրայ դաշտային մասը գրեթէ հաւասար է լեռնային մասին, բայց երկրիս խրաքանչիւր մասին, այսինքն Եւրպայի, Ասիոյ, Ափրիկէի, Ամերիկայի և Ովկիանիոյ վրայ՝ այլև այլ համեմատութեամբ։

Հ. Եւրոպայի մէջ Բնչպէս է։

Պ. Եւրոպայի մէջ դաշտային մասն աւելի

Է քան լեռնայինը : Միջին Եւրոպայի հիւսիսակողմը , Գաղիոյ հիւսիսային կողմէն մինչև Բուսիոյ արեւելեան սահմանը , դաշտաձեւ է , բլուրներ միայն կան ուրեք ուրեք , մինչ բուն հիւսիսային և հարաւային Եւրոպա համակ լեռ-




Թէնէրիք Անոնի Լեռնաստրը

նային է . Հոն եւս կան դաշտեր , բայց ոչ այն պէս ընդարձակ :

Հ . Ասիոյ մէջ Բնչպէս է :

Պ . Ասիոյ մէջ դաշտային մասն այն ցամաքին գրեթէ մէկ երրորդն է : Միջին Ասիոյ մէջ կան անհուն դաշտեր , ինչպէս յեզերս գանգեսի և խնդոսի : Պարսկաստանի և Արարիոյ տափարակներն անապատ են մանաւանդ քան դաս :



ԹՈՒՐՔԻՍՏԱՆԻ ԴԱՇՏԸ

Հ . Ափրիկէի մէջ Բնչպէս է :

Պ . Ափրիկէ ունի ահագին աւազուտ անապատներ : Երկրիս այս մասը գեռ քաջ ծանօթէ , կը կարծուի սակայն թէ հոս տափարակ մասն աւելի է քան լեռնայինը :

Հ . Ամերիկայի մէջ Բնչպէս է :

Պ . Ամերիկայի արեւելեան և արեւմտեան եզերքը լեռնայինն են , իսկ միջոցը գրեթէ բոլորովին դաշտային , թէպէս Աղլանդեան ովկիանոսի ափանց վրայ ևս կան տափարակներ : Երկրիս այս մասին վրայ եւս դաշտային մասն աւելի է քան լեռնայինը :

Հ . Ովկիանիոյ մէջ Բնչպէս է :

Պ . Ովկիանիոյ կղղիք ընդհանրապէս լեռնա-

յին են : Աւստրալիոյ հարաւային մասը միայն ունի պաղաքեր դաշտեր և աւազուտ անապատներ : Ներսը դեռ անձանօթ է :

**Դ Ա Ս Գ .**

Յ Ա Զ Ի Ք .

Հ. Կղղիք Բնչ են :

Պ. Կղղիք ընդհանրապէս ծովին երեսէն դուրս ցցուած գլուխներ են լերանց , մերթ ցամաքին մօտ , ինչպէս Եւրոպայի , Ասիոյ և Ամերիկայի կղղիք , և մերթ ցամաքէն հեռու , ինչպէս Ափրիկէի և Ովկիանիոյ կղղիք :

Հ. Կղղիք Բնչ ձեւ ունին :

Պ. Ոմանք , իբրեւ լերանց շղթայի գլուխներ , կարգաւ են , ինչպէս Ալէութեան , Փոքր Անդիլեան և Գուրիլեան կղղիք . այլք լերան մը ողն են երկայնաձեւ , ինչպէս Գուպա , Սումաղրա , Գորսիդա , Եւրէա (Նէկրէբոն) , Մատակասգար . ոմանք եւս առանձին լերան մը գլուխ են , ինչպէս Արքիալեղագոսի , Անդիլեան և Ովկիանեան կղղիներէն շատերը . դարձեալ ոմանք փոքր ցամաք երկիրներ են լեռներով , դաշտերով և գետերով , ինչպէս Աւստրալիա , Մեծն Բրիտանիա , Իրլանտա և Իսլանտա :

Ովկիանոսի վերաբերեալ կղղիներ են նաեւ , Հարաւային Արևանտեան ովկիանոսի մէջ՝ Սուրբ Հեղինէ և Համբարձման կղղիք ,

Խաղաղական ովկիանոսի մէջ՝ Յովհաննու ֆէրնանտէզ և Զաթհամ , Հնդկային ովկիանոսի մէջ՝ Քէրկուէլէն , Պուրազոն և Մաւրիտիոս և այլք :



ՍՈՒՐԲ ՀԵՂԻՆԵ ԿՈՉԻՆ

**Դ Ա Ս Ե .**

Զ Ո Ւ Բ

Հ. Երկրիս երեսին վրայ ջուրերը քանի՞ են :

Պ. Երկրիս երեսին վրայ ջուրերն երկու են , Ա. Ցամաքային և Բ. Ծաղկային :

Ա. ՑԱՄԱՔԱՅԻՆ ԶՈՒՐՔ

Հ. Ցամաքային ջուրերն որո՞նք են :

Պ. Ցամաքային ջուր են աղիւր+ կամ ականչ+ , չերեր և ծովաներ :

x. ԱԿՈՒՆՔ

Հ. Ակունք կամ աղբերակունք Բնչ են :

Պ. Անձրեսի ջուրը լերանց մէջ կը ժողվուի, և երբ ծակ կամ ճեղքուած կը դըտնէ, կը վազէ դուրս : Այս են ակունք :


Հ. Ակունք ուր կը բղիսեն :

Պ. Ակունք կը բղիսեն ընդհանրապէս լերանց կողէն կամ ստորոտէն, երբեմն նաեւ դաշտերու վրայ, և անտտեն բղիսող ջուրը շատ անդամ վեր կը ցայտէ աւելի կամ նուազքարձրութեամբ :

Հ. Յիշուելու արժանի քանի տեսակ ջուր կայ :

Պ. Յիշուելու արժանի են,

4. Տար Հուրեւը որ ջերմուկ կը կոչուին, և



ԽՈԼԱՆՏԱՑԻ ԶԵՐՄՈՒԿՆԵՐԸ

այլեւայլ տեսակ քրէական կամ հանքային նիւթեր պարունակելով, շատ ախտերու դարման են : Այս ջուրերէն ոմանք շատ տաք են, Շատ տաք ջերմուկներէն մին է Գաղիոյ Շօտէկի ջերմուկը որոյ տաքութեան աստիճանն է  $80^{\circ}$ , հարիւրաստիճանեայ ջերմաչափով :

Խալանտայի մէջ երկու քառակուսի տեղւոյ վրայ աւելի քան հարիւր ջերմուկներ կան, Ըստ Ցէնայի, ասոնց շատրուանի պէս ջուր ցայտեցնելուն պատճառն է գետնին տակ այրերու մէջ դոյացեալ շոգին :

2. Քարացուցիւ Հուրեւ որ կը պարունակեն գայլախաղի շատ մանր մասունք : Երբ փայտ և ուրիշ նիւթեր դարերով կը մնան այս ջուրերուն մէջ, գայլախաղի մասունք մտնելով այն նիւթոց ծակերը կը քարացունեն այն նիւթերը, Այսպիսի է իրանտայի ՆԵՓ կոչուած ծովակին և Դանուբի ջուրը :

3. Այն ջուրերը որ հողացն կամ հրացն նիւթ կը պարունակեն : Երբ մարմին մը այս ջուրերուն մէջ կը դրուի, այն հողային կամ կրային նիւթէն կեղեւով մը կը պատի : Այսպիսի է Թուրքանայի Սուլր Փիլիպպոսի բաղանիք կոչուած ջուրն և ուրիշ ջուրեր :

4. Վարոն Հուրեւ, որ առատ կազային նիւթ պարունակելով կը բորբոքին ինքնին, կամ, երբ վառած մարմին մը կը մերձենայ անոնց :



ԴԱՍ

Տ. ԳԵՂԵՐ

Հ. Երկրիս հինգ մասերուն մէջ մեծագոյն գետեր որո՞նք են :

Պ. Եւրոպայի մեծագոյն գետն է Վոլկա, 2,000 մղոն երկայն .

Ա. Միոյ մեծագոյն գետն է Եանկցէքեանկ, 2,500 մղոն երկայն .

Ո. Փրիկէի մեծագոյն գետն է Նեղոս, 3,000 մղոն երկայն .

Ա. Մերիկայի մեծագոյն գետն է Միսիսիբի, 4,350 մղոն երկայն .

Ա. Աստրալիոյ մեծագոյն գետն է Մըրրէյ, 1,000 մղոն երկայն :

Հ. Երկրիս գլխաւոր գետերուն մէջ մեծագոյնը և փոքրագոյնը որո՞նք են :

Պ. Երկրիս գլխաւոր գետերուն մէջ մեծագոյն է Միսիսիբի, 4,350 մղոն երկայն, և գոյն է Փարագ, 220 մղոն երկայն :

Հ. Գետերուն մէջ յիշուելու արժանի ինչ կայ :

Պ. Գետերուն մէջ յիշուելու արժանի են ջրվէժեր :

Հ. Ո՞րչափ ջրվէժ կայ, և երեւելիներն ո՞րո՞նք են :

Պ. Երկրիս բոլոր մասերուն մէջ մեծ և փոքր շատ ջրվէժներ կան : Եւրոպայի մէջ երեւելի է Նորուեկիոյ Բիւքան-Ֆօսսէնի ջրվէ-

Ժը որ 265 մեդրոյ բարձրութենէ կը թափի, և Շուետի մէջ՝ Լուլէայի ջրվէժը որ կը թափի 200 մէդրոյ բարձրութենէ :

Ա. Միոյ մէջ երեւելի են Նուբարի ջրվէժն Եփրատայ մէջ, և Երասխայ ջրվէժները :

Ա. Փրիկէի մէջ անուանի են Նեղոսի ջրվէժները, և Օրանժ գետոյն ջրվէժը որ 160 մէդրոյ բարձրութենէ կը թափի :


Երեւելի են մանաւանդ Ամերիկայի ջրվէժ-



ԹՐԵՆԹՈՒԻ ՋՐՎԵԺԸ

Ները գլխաւորապէս Գանատայի մօտ Նիակարայի ջրվէժը որ 48 մէդրոյ բարձրութենէ կը թափի, բայց շատ լայն է :

Թրէնթոն կոչուած ջրվէժը որ Նիւ-Եօրք Նահանգին Մոհագ անուն գետոյն մէկ ճիւ-



Մ Ե Ծ Գ Ա Խ Ե Ծ

զին վրայ է՝ 180 ոտք բարձր գահէ մը վար կը թափի իրարու ետեւ չորս կարդ :

Զրվէծներէ առաջ եկած գետերուն մաշեցումը

Այն գետ արագութեանը համեմատ իւր ափունքը կը մաշեցնէ, այնպէս որ երկար ժամանակ ետքը կը փոխէ ձեւը. Եթէ ափունքը և յատակը կարծր քարէ են, փոփոխութիւնը քիչ կ'ըլլայ, եթէ կակուղ քար կամ հողէ է, փոփոխութիւնը մեծ կ'ըլլայ:

Այսպէս եղած է Գոլորատոյ գետոյն յատակին վրայ Մեծ-Գանեռն կոչուած փոսն որուն խորութիւնն է 3,000 էն մինչեւ 6,000 ոտք, և ունի իր 300 մղն տարածութիւն :

### Գ Ա Ս Ե .

#### Յ. ԽՈՎԱԿԵՆԵՐ

Հ. Մովակներու, այսինքն մեծամեծ լիճերու վրայ Բնչ ընդհանուր գիտելիք կայ :

Պ. Նախ կան ծովակներ որ իրենց մէջ գետեր կ'ընդունին, առանց դուրս տալու ջուր, և չեն յորդեր, վասն զի արեգական ջերմութիւնը գոլորշացնելով անոնց ջրոյն մի մասը չտար յորդել: Այսպիսի ծովակներու ջուրն ընդհանրապէս աղի է, ինչպէս կասպից ծովուն, Մեռեալ ծովուն, վանայ և Ուրմիոյ ծովերուն: Քաղցր է Ասիոյ մէջ Պալգաչի, Ափ-

ըլիկէի մէջ՝ ջատի, և Ամերիկայի մէջ Դիդի-  
գագայի ջուրը :

Երկրորդ՝ կան ծովակներ որ առանց ըն-  
դունելու գետ իրենց մէջ, գուրս ջուր կու-  
տան և չեն նուազիր : Ասոնք փոքր ծովակներ  
են որոց ջուրը մէջէն կը բղիսէ :

Երրորդ՝ կան ծովակներ որ մօտ են ծովուն  
և ծովուն հետ հաղորդութիւն ունին, ինչ-  
պէս Գոմաքքիոյ լիճն Խոտալիոյ մէջ՝ Ադրիա-  
կան ծովուն հետ, և Մէլար Շուէտի մէջ՝  
Պալդիկ ծովուն հետ : Ասոնց կարգը կրնայ  
համարուիլ վենետիկ : Կը կարծուի թէ այս  
տեսակ ծովակներ ժամանակաւ խորշ էին ծո-  
վուն որոյ աւազէն փակուած և առած են  
ծովակի ձեւ :



ՏՈՐՃ ԽՈՎԱԿ

Հ. Երկրիս վրայ կայ ամէն տեղ ծովակ :  
Պ. Կան տեղեր ուր շատ ծովակներ կան,  
զորօրինակ Եւրոպայի մէջ Բուսիոյ հիւսիսային  
արեւմտեան մասը, Զուլցէրա, և յիտալիա՝  
Ալպեան լերանց ստորոտը : Գերմանիա ունի  
քիչ ծովակ, իսկ Գաղիա և Սպանիա գրեթէ  
ամենեւին չունին :

Ասիոյ հիւսիսային կողմը կան ծովակներ  
բաւական մեծ, նոյնպէս Աֆրիկէ, բայց Երկ-  
րիս հինգ մասերէն Ամերիկա մանաւանդ ունի  
շատ ծովակ :

Նիւ-Եօրք Նահանգին մէջ են Շամբլէյն և  
Ճօրճ, և Օզիկիոյ գետէն Յնժէրիոյ ծովակը  
վաղող Յնայտա, Քէյուկա և Սննեկա ծո-  
վակները :

Հաշուուած է որ Միացեալ Նահանգաց  
հիւսիսային մեծ ծովակներուն ջուրը բոլոր  
Երկրիս երեսին վրայ գտնուած անոյշ ջրոյ  
կէսն է :

Հ. Մեծադոյն ծովակ որո՞նք են :

Պ. Մեծադոյն ծովակներ են,

1. Կասպից ծովս Ասիա՝ 1,200 քիլոմէտր  
Երկայն և 300 քիլոմէտր լայն :

2. Միւրիւրիբը Ամերիկա՝ 580 քիլոմէտր  
Երկայն և 300 լայն . Եւրոպայի մեծադոյն ծո-  
վակն է Լատոկա, և Աֆրիկէինը՝ Զատ :

Հ. Ծովակներուն բարձրութիւնը ծովին ե-  
րեսին հետ ինչպէս է :

Պ. Ծովակներն ընդհանրապէս քան ծովուն  
երեսը ցած են : Այսպէս կասպից ծովը 30 մէտ-

ըոյ վար է քան Սեւ ծովուն երեսը . Մեռ-  
եալ ծովը 400 մեդրոյ վար է քան Միջերկ-  
րական ծովուն երեսը :

Հ. Ծովակներուն ջրոյն աղութիւնը և ծան-  
րութիւնն ինչպէս է :

Պ. Աղի ծովակաց ջրոյն աղութիւնը և ծան-  
րութիւնն աւելի է քան Ովկիանոսի ջուրերու-  
նը . այսպէս են ջուրք Մեռեալ ծովուն , Ուր-  
միոյ և Վանայ ծովակներուն :

Հ. Ծովակներու ջրոյն պայծառութիւնը և  
առողջաբարքութիւնն ինչպէս է :

Պ. Ծովակներէն ոմանց , ինչպէս ձինեւրա-  
յի ծովակին և Շուէտի Վէդէր ծովակին  
ջուրը շատ յատակ և առողջ է . մինչեւ 20  
գիրկ խորութեան մէջ դահեկան մը կրնայ  
տեսնուիլ Վէդէրի մէջ . բայց ծովակներէն  
շատերուն ջուրը կը պարունակէ շատ բորա-  
կածին և թթուածին կազ , ուստի անմա-  
քուր և վասակար է : Դիպէդի մէջ կան բո-  
րակի ծովակներ : Ընդհանրապէս գետերու և  
մանաւանդ անձրեւի ջուրն աւելի առողջա-  
րար է :

Հ. Ծովակներուն խորութիւնը ո՞րչափ է :

Պ. Ծովակներուն խորութիւնը միօրինակ  
չէ : Ուամկական կարծիք է թէ կան ծովակներ  
որ յատակ չունին : Բայց կան շատ խոր ծո-  
վակներ : Եղան գիտունք որ Մեռեալ ծովուն  
մէջ մինչեւ 300 գիրկ խորը չափ իջեցուցին ,  
և չհասան յատակը :

## ԴԱՍ Է .

Բ. ԽՈՎԱՅԻՆ ԶՈՒՐՔ ԿԱՄ ԽՈՎԵՐ

Հ. Ծովին համեմատութիւնն ինչպէս է ցա-  
մաքին հետ :

Պ. Ծովին համեմատութիւնը ցամաքին հետ  
է իբրեւ 276 առ 100 , այսինքն երկու ամ-  
բողջ և երեք քառորդ անգամ աւելի քան  
ցամաքը :

Ա.յս պատկերը  
կը ցուցնէ երկ-  
րագունատին կի-  
սուն նեղքին ե-  
րեսը :


Ա. Երկրիս բոր-  
բռեալ միջավայրն է .

Բ. Երկրիս կե-  
ղեն է :

Ը. Զուր է :

Դ. Օդ է :

Ե. Ե. Ե. Ցա-  
մաք է :




Հ. Երկրիս ո՞ր մասին վրայ աւելի է ծովը :

Պ. Հարաւային կիսագունատին վրայ աւելի  
է իբր չորս անգամ քան հիւսիսային կիսա-  
գունատին վրայ :

Հ. Ծովերն ինչ մասնաւոր օգուտ ունին :

Պ. Ծովերուն օգուտաներն են . նախ՝ իբենց  
մօտ գտնուած ցամաքին օդը կը մեղմացու-  
նեն , այսինքն եթէ կլիման շատ տաք է , կը  
զովացնեն , եթէ շատ ցուրտ է , կը ջերմացու-



ԳԼՈՒԽ ՀՈՇԱ

Նեն . Երկրորդ՝ իրենց մէջ գտնուած անասնոց , մանաւանդ ձկանց բազմութեամբ մեծ հարստութիւն են աշխարհի . Երրորդ՝ են դիւրին և հասարակաց ճամբայ երթեւեկութեան և առեւտրոյ :

Հ. Ծովերուն խորութիւնն ինչպէս է :

Պ. Ծովերուն մէջ կան շատ խոր տեղեր : Ծովուն միջին խորութիւնը կը կարծուի 300 մէդրոյ , թէպէտ կան տեղեր որոց խորութիւնն աւելի է քան 8,500 մէդրոյ :


Հ. Ծովին թանձրութիւնը երկրիս կեղեւին քամերժորդ ման է :

Պ. Թէպէտ այսչափ խորութիւն ունի ծու-

լը , բայց և այնպէս երկրիս կեղեւին հազարին չորսը միայն (<sup>4</sup><sub>1000</sub>) բռնած է :

Հ. Ծովին յատակն ինչպէս է :

Պ. Ծովին յատակը երկրիս երեսին պէս անհարժ է :



Վերի պատկերը կը ցուցնէ Մեքոիգոյէ մինչեւ Ափրիկէ ձգուող ծովուն յատակին ձեւը՝ հիւսիսային արեւմուտքէն դէպ հարաւային արեւելք ձգուած գծի մը վրայ : Այս պատկերին մէջ կը տեսնուի ցամաքին մասերէն ոմանց բարձրութիւնը ծովին երեսէն , և ծովին յատակին մասերէն ոմանց խորութիւնը :

Նաեւ ծովին մէջ կան լեռներ , ձորեր , ապառաժներ յորոց ոմանք ծովին երեսին շատ մօտ կամ ծովին երեսէն դուրս ելած են , ինչպէս նաեւ ծանծաղ և աւազուտ տեղեր : Ապառաժը և աւազուտը վտանգաւոր

Են նաւարկութեան : Ծովին մէջ կան նաև դաշտեր , անտառներ , անոյշ ջրոյ աղբիւզք և հրաբուխներ :

Հ. Ծովին ջուրն ինչ գոյն ունի :

Պ. Ծովին ջուրն քաղցր ջրոյ պէս թափան . ցիկ և անգոյն է ինքնին , բայց ծովերն ընդհանրապէս կապոյտ կերեւին : Ասոր գլխաւոր պատճառն այս է որ ջուրը լուսոյ կապոյտ շառաւիղներն աւելի կը ցոլացնէ : Հասարակածին կողմերն ծովը կանաչագոյն կ'երեւի , և այս կ'ընծայուի այն ծովերուն յատակին առատ կանաչութեան : Այլեւայլ պատճառներ , ինչպէս հողը , ճճիներ , յաճախ մէգ և ալէ . կոծութիւն , ինչպէս նաեւ մօտակայ անտառաշատ լեռներ և սառնամանիք , ծովերէն ումանց գեղին , կարմիր , սև , սպիտակ գոյն կու տան , ուստի կայ գեղին , կարմիր , սեւ և սպիտակ ծով :

Հ. Ծովի ջրոյ պայծառութիւնն ինչպէս է :

Պ. Ծովի ջուրն այնպէս պայծառ է հանդարտութեան ժամանակ , որ իբր քսան գիրկ խորութեան մէջ որոշ կը տեսնուին առարկաներ : Դիտողութեան արժանի է որ առարկայք այնչափ աւելի յատակ կը տեսնուին ծովին մէջ , որչափ նայողը ծովին երեսէն վեր է : Այս պատճառաւ անծանօթ ծովերու մէջ նաւարկող նաւապետք , ծովին մէջ ժայռերը քաջ տեսնելու համար , կայմին վրայ կ'ելլեն :

## ԴԱՍ Թ.

Հ. Ծովին երեսն ինչպէս կը տեսնուի երեմն :

Պ. Ծովին երեսը կ'երեւի մերթ արծաթափայլ , մերթ իբրեւ ծծմբով և ձիւթով բորբոքեալ ամբաւ ծածկոց , երբեմն բոցոյ կայծակունք կը թուին արձակիլ ջուրէն գուրս , երբեմն ջուրը կ'երեւի սպիտակ իբրեւ կաթ , կամ իբրեւ գորշագոյն փոշի և կամ 'ի գոյն արեան : Այս երեւոյթները կընծայուին ծովին մէջ գտնուած փոսփորակիր ճճեաց և ժժմակաց , և կը տեսնուին ընդհանրապէս այրեցեալ գոտուոյն տակ , գուն ուրեք եւրոպային եղերքը :

Հ. Ծովի ջրոյ համն ինչպէս է :

Պ. Ծովի ջուրն աղի և շատ անախորժ համունի , և ասոր պատճառ այն ջուրին մէջ խառնուած տեսակ տեսակ քիմիական նիւթերըն են :

Հ. Օտար նիւթեք ինչ համեմատութեամբ են ծովի ջրոյն մէջ :

Պ. Ծնդհանրապէս ծովի ջրոյն 1.000 ին 37ն օտար նիւթեր են , մանաւանդ ծովային աղ , որ այնչափ է մինչեւ կը կարծուի թէ , եթէ որ այնչափ է մինչեւ կը կարծուի թէ , եթէ հնար լինէր ծովի ջուրէն բոլոր աղն հանել և դիղել , այն դէզն հինգ անգամ աւելի մեծ կըլլար քան Ալպեան լեռները :

Հ. Ծովի ջրոյ աղութիւնն ամէն տեղ միօ-  
րինակ է :

Պ. Բեւեռային կողմերը միայն քիչ մը  
նուազ է աղութիւնը . նոյնպէս ծովին խորն  
աւելի աղի է ջուրը քան երեսը , բայց ծովին  
երեսի ջուրն աւելի անախորժ է , և ասոր  
պատճառն է ծովին վրայ լողացող նիւթոց  
փոտութիւնը :

Հ. Ծովին երեսը լողացող սառոյցք աղի  
են :

Պ. Կան սառոյցներ որ աղի չեն , և այս կը  
ճանչցուի . աղի սառոյցք աւելի սպիտակ և  
ծակոտկէն են :

Հ. Ծովի ջուրին ուրիշ բնչ յատկութիւն ունի :

Պ. Ծովի ջուրը նաեւ քիչ մը մատղող , այ-  
սինքն կպչող է , ուստի և ծովի ջուրը թա-  
թախեալ լաթեր ուշ կը չորնան , եթէ յետոյ  
քաղցր ջրով լուացուած չեն :

Հ. Ծովի ջրոյ ծանրութիւնն բնչպէս է :

Պ. Ծովի ջուրը քան քաղցր ջուրն աւելի  
ծանր է , և համեմատութիւնն է իրը 103 առ  
100. բայց ծովակներէն ոմանց ջրոյն ծանրու-  
թիւնն աւելի է , զոր օրինակ , Մեռեալ ծո-  
վին ջրոյն ծանրութեան համեմատութիւնը  
քաղցր ջրոյ հետ է 114 առ 100 :

Հ. Ծովուն մէջ բնչ երեւոյթներ կան որ  
յիշուելու արժանի են :

Պ. Ծովուն մէջ յիշուելու արժանի երե-  
ւոյթներ են 1. Չուրեւուն իառացիք և 2. յույնիք :

## ԴԱՍ Ժ.

### Խ. ԽԱՂԱՑՔ ԶՈՒՐՑ

Հ. Խաղացք ջուրց բնչ է :

Պ. Խաղացք կ'ըսուի ծովի ջուրին տեղ տեղ  
քաշուիլ և նորէն դառնալը . առաջինը կը  
կոչուի ունակութեան բարձրութեան , և երկրորդը՝ հական բարձրու-  
թեան :

Հ. Տեղատուութեան և մակրնթացութեան  
ատեն ջուրը որչափ կ'իջնէ և կը բարձրանայ :

Պ. Ամէն ծովի մէջ միօրինակ չէ ջրոյ այս  
շարժումը . հասարակածին կողմն աւելի է ,  
Միջերկրական ծովին մէջ՝ նուազ , իսկ բեւեռ-  
ներուն մօտ ծովերուն մէջ գրեթէ անզգա-  
վի է , քանզի արեգակն և լուսնի ազգեցու-  
թիւնը , հեռաւորութեան պատճառաւ , այն  
կողմերուն ջուրերուն վրայ շատ տկար է :

Հ. Յիշուելու արժանի տեղատուութիւնը  
ուր են :

Պ. Նշանաւոր է Հնդկաստան Գամպէյ կո-  
չուած ծոցին տեղատուութիւնը : Խարսխի  
վրայ գտնուած նաւեր յանկարծ կ'իջնեն ա-  
ւազին վրայ : Նշանաւոր է նաեւ Եւրիպոսի  
նեղին խաղացը , ի մէջ Եւրէա (Նէկրէբոնդէ)՝  
կղղւոյն և Յունաստանի արևելեան ծովեղեր .  
ծովին ջուրն հոն օրը մինչեւ Երկոտասան ան-  
գամ կ'եցէ և կ'իջնէ նոր լուսնի ժամանակ :

Հ. Տեղատուութիւնն ուրիշ պատճառ չու-  
նի :

Պ. Հովերը երբեմն կը հեռացունեն ջուրե-

ըլ ծովեղբէն այնպէս, ինչպէս կ'ըլլայ տեղա-  
տուութեան ատեն : Այսպէս կարմիր ծովուն  
մէջ, Սուէզի ծոցը, հիւսիսային հովէն ջուրը  
15 կամ 20 հաղարամէդր քաշուելով, կը թո-  
ղու ընդարձակ աւաղուտ, և ահագին պարա-  
նոցը կ'ըլլայ փոքր առու. երբ հովը կը դադ-  
րի, ծովը կու գայ նորէն իւր առաջին տեղը :

## Դ Ա Ս Ժ Ա .

### Զ. ՅՈՐՁԱՆՔ

Հ. Ծովին մէջ յորձանք ինչ են :

Պ. Ծովին մէջ յորձանք կ'ըսուին ջուրի հո-  
սանք, որ իբրեւ մեծամեծ գետեր, կը վա-  
զեն ծովին մէջ այս ինչ կամ այն ինչ կողմ,  
և նաւերուն կ'օգնեն արագ երթալու, եթէ  
անոնց ճամբան մի և նոյն ուղղութեամբ է :

Հ. Ո՞րբ են գլխաւոր յորձանք :

Պ. Գլխաւոր յորձանք են նախ՝ բեւեռա-  
յին յորձանք որ կը բերեն բեւեռաց ջուրերը  
դէպ ի հասարակած . երկրորդ՝ արեւադարձի  
յորձանք որ կը հոսեն յարեւելից յարեւ-  
մուտս : Ասոնք ընդհանուր յորձանք են Աս-  
լանդեան և Խաղաղական ովկիանոսի մէջ .  
կան մասնաւոր յորձանք երկրորդական ծո-  
վերու և ծոցերու մէջ շատ անգամ ցամաքին  
մօտ, ինչպէս Միջերկրականին մէջ, Սեւ ծովին  
յորձանքը որ կ'անցնի կոստանդնուպոլսոյ կամ

Բոսփորի նեղցէն, Մարմարայի ծովէն, Տար-  
տանելէ և Արքապեղագոսէ :

Հ. Մի և նոյն ուղղութիւնն ունին յոր-  
ձանք :

Պ. Ոչ . կան յորձանք որ իրարու հակա-  
ռակ ուղղութեամբ կ'երթան : Երբ այսպէս  
երկու յորձանք հակառակ ուղղութեամբ ի-  
րարու կը հանդիպին, կը կազմեն ահագին  
շրջան որ պայման կը կոչուի են Քառէբ-  
րէ կոչուած պտոյսն ի մէջ Սիկիլիոյ և Խտա-  
լիոյ, և Մալտրէօս կոչուածն՝ Նորուեկիոյ հիւ-  
սիսային արեւմտեան կողմը : Այսպիսի պտոյս-  
ներ կան ուրիշ ծովերու, մանաւանդ Զինու և  
Ճարբոնի ծովերուն մէջ, և շատ վտանգաւոր  
են նաւերու :

Հ. Յորձանաց պատճառն ինչ է :

Պ. Յորձանք շատ պատճառներ ունին,  
գլխաւոր պատճառն է ջուրերուն գոլորշանա-  
լը : Հասարակածին կողմը սաստիկ ջերմութե-  
նէ ծովին ջուրը գոլորշանալով կը նուազի,  
ուստի բեւեռներուն կողմէն հոն կը վաղէ  
ջուրը՝ հաւասարակշռութիւնը նորէն հաստա-  
տելու : Յորձանաց պատճառ կը կարծուին  
նաեւ երկրիս թաւալումը և հողմունք :

Հ. Յորձանաց օգուտն ինչ է :

Պ. Յորձանք ոչ միայն օգտակար են նա-  
ւարկութեան, եթէ նաւապետք գիտնան ծա-  
ռայեցունել զնոսա ինքեանց, այլ և շատ եր-  
կիրներու օդը կը մեղմեն, զոր օրինակ, շերմ  
կամ ցուրտ տեղերէ եկող յորձանք կը ջեր-

մացունեն կամ կը զովացունեն ծովեղերեայ  
երկիրներուն օդը զորս կը թանան :

Յ. ԲԱՐՁՐՈՒԹԻՒՆՔ ԿՈՀԱԿԱՑ

Հ. Կոհակի մը բարձրութիւնը Բնչ բանի  
համեմատ է :

Պ. Կոհակաց բարձրութիւնը համեմատ է հոլին  
սաստիկութեան և ծովին խորութեանը :

Հ. Իրարու ետեւ եկող երկու կոհակաց  
իրարմէ հեռաւորութիւնը ո՞րչափ է :

Պ. Սքորէսպի և Ֆիցրոյ նաւապետները  
շափեցին Աղլանտեան ովկիանոսի կոհակները .  
առաջինը գտաւ երեսնէն մինչև քառասուն  
ոտք, երկրորդը՝ մինչև վաժոււն ոտք բարձր  
կոհակ, բայց երբ հովը սաստիկ չէ, կոհա-  
կաց բարձրութիւնը կը համնի հազիւ մինչեւ  
վեց ոտք : Փորձիւ հասկցուած է որ իրարու  
ետեւէ եկող երկու կոհակաց իրարմէ հեռաւ-  
ութիւնն անոնց մէկուն բարձրութեան վեց ան-  
դամէն մինչեւ տասն անդամն է : Խւրաքան-  
չիւր վեց ոտք բարձրութիւն ունեցող երկու  
կոհակաց իրարմէ հեռաւորութիւնն է 60 ոտք :

Հ. Ծփանաց ազգեցութիւնը ովկիանոսի  
խորութեան մէջ մինչեւ ո՞ր աստիճան կը  
համնի :

Պ. Անոնք որ հետամուտ են ստուգելու թէ  
ծովուն մէջ մինչև որչափ խոր կազդէ ջուրին ծը-  
փանը, կըսեն թէ այն շարժումը 450էն մին-  
չև 620 ոտք խորը հասած գտած են :

Հ. Ծփանաց շարժման արագութիւնն Բնչ  
բանի համեմատ է :

Պ. Ծփանաց արագութիւնը կոհակին բարձ-  
րութեան և գտնուած տեղւոյն խորութեան  
և տարածութեանը համեմատ է (\*) :


Յ. ԲԵԿԵԱԼ ԿՈՀԱԿ

Հ. ԲԵԿԵԱԼ կոհակ Բնչ է :

Պ. Խոր ծովու ծփանը երբ կը համնի  
ծանծաղ տեղ, կոհակներուն ստորոտի ջրոյն  
մասնիկներուն շարժումը կը կենայ, և գլուխ-  
ները միայն յառաջ կ'երթան, ուստի և այն  
վերի մասն հարկաւ կը բեկանի, և այսպիսի  
կոհակներ կը կոչուին բեկեալ կոհակ :

Բեկեալ կոհակը պարսպի պէս սեպ ուղղորդ-  
կ'երեւայ, և տեղ տեղ շատ բարձր և սաս-  
տիկ է :

(\*) Փորձով տեսնուած է որ եթէ կոհակները տասուերկու  
ոտք բարձր են, ծփանը կը տարածուի ժամը տասուերկու  
մղոն, եթէ կոհակները տասերեք ու կէս ոտք բարձր են,  
ծփանը կը տարածուի ժամը տասնեւինը մղոն . 1854 ին  
ձարոնի երկրաշարժէն յառաջ եկած ծփանը տասուերկու  
ժամու եւ տասնուվեց րապէի մէջ տարածուեցաւ Խաղաղա-  
կան ովկիանոսի մէջ, այսինքն ժամը 400 մղոն տեղ : Մէջ  
անուն երեւելի բնազէտը յիշեալ ծփանաց արագութենէն կո-  
հակներուն բարձրութենէն եւ ովկիանոսի տարածութենէն  
հետեւցնելով, այն ծովին միջին խորութիւնը հաշուեց իբր  
22,000 ոտք :



ՄԱՅՆՈԹ 1.ԵԶ 1.ԱՊՏԵՐԸ

Այս պատկերին մէջ կը տեսնուի Պոսթոնէն  
քսան մզոն հեռու Մայնոթ Լէճ անուն ապառա-  
ժի մը գլուխը շինուած լապտեր մը երկաթի ձո-  
ղերու վրայ որոց իւրաքանչիւրին տրամադիծն էր  
տասը մատ, և բարձրութիւնը՝ վախուն ոտք :  
Այս լապտերը 1851ին փոթորկի ատեն բեկեալ  
կոհակէ մը խորտակելով ինկաւ :

## ԴԱՍ ԺԲ.

### 2. Մ Թ Ն Ո Լ Ո Ւ Յ

Հ. Ի՞նչ է մթնոլորտն :

Պ. Մթնոլորտ կը կոչուի օդը որ երկրի  
շուրջ կը պատէ մինչև այս ինչ չափ բարձրու-  
թեան :

Հ. Մթնոլորտն ինչ օդուտ ունի երկրիս :

Պ. Մթնոլորտը կամ օդը երկրիս վրայ  
կենդանութեան պատճառ է : Առանց օդոյ  
ոչ մարդ, ոչ անասուն և ոչ տունկ կրնար  
ապրիլ երկրիս վրայ, ոչ արեգական ջերմու-  
թիւնը կ'աղդէր երկրիս վրայ, ոչ հով կարելի  
էր, և ոչ օդերեւոյթք, ինչպէս անձրեւ,  
ձիւն, եւայլն . ուստի և առանց մթնոլորտի  
երկրս լինէր ցամաք, կամ անբեր և անբը-  
նակ հողոյ և քարերու զանդուած :

### ԿԼԻՄԱՑ

Հ. Մթնոլորտը երկրիս վրայ միեւնոյն աղ-  
դեցութիւնն ունի :

Պ. Մթնոլորտին աղդեցութիւնը երկրիս  
այլեւայլ մասերուն վրայ տարբեր է, և երկ-  
րի մը մթնոլորտին որպիսութիւնը կը կոչուի  
այն երկրին կէման :

### ԶԵՐՄՈՒԹԻՒՆ

Հ. Կլիմաներու տարբերութեան գլխաւոր  
պատճառն ինչ է :

Պ. Կլիմաներու տարբերութեան պատճա-

ուը ջերմութեան աւելի կամ նուազ սաստկութիւնն է : Ըստ աստիճանի ջերմութեան կամ ցրտութեան զոր ունի երկիր մը , այն երկրին կիման կ'ըլլայ ջերմ , ցուրտ , բարեխառն :

Հ. Ջերմութեան պատճառն ի՞նչ է :

Պ. Արեգակն է գլխաւոր պատճառ ջերմութեան , որ ընդհանրապէս այնչափ աւելի սաստիկ է երկրիս այս կամ այն մասին մէջ , որչափ ճառագայթք արեգական ուղղակի կիման երկրին այն մասին վրայ : Ուստի հարկաւ հասարակածին կողմերը կիման տաք է , իսկ դէպ ՚ի բեւեռները՝ տակաւ ցուրտ : Նաև երկրիս կեդրոնին ջերմութիւնը բաւական կ'ազդէ երկրիս երեսին :


### ԴԱՍ ԺԳ.

Հ. Տեղւոյ մը ջերմութիւնը միօրինակ է բոլոր օրը :

Պ. Ոչ . ընդհանրապէս ջերմութիւնն ըստ բաւականին կը նուազի գիշերները : Նոյն իսկ հասարակածին կողմերը աեղ կայ ուր գիշերներն այնչափ զով են որչափ ցերեկները տաք : Նաև ամէն աեղ բարձրերուն օդը քան վարի օդը զովագոյն է : Այս տարբերութիւնն է , ըստ գիտնոց , 10 (մէկ աստիճան) առ խրաքանչիւր 225 մէդրոյ դէպ ի վեր :

Հ. Եռվուն երեսէն դէպ ի վեր ջերմութիւնն ի՞նչ չափով կը նուազի :

Պ. Բարձրութեան աստիճանն (ծովին երեսէն) ,



որչափ կը բարձրանակ , այնչափ կը նուազի օդին ջերմութիւնը : Առ խրաքանչիւր 350 ոտք բարձրութեան ջերմութիւնը կը պակսի մի աստիճան : Բարձր լեռներ կամ օդապարկով օդին մէջ ելլողներուն փորձովը հաստատուած է այս : Ուստի երբ այրեցեալ գոտուոյն տակ բարձր լեռ մը կը սկսինք ելլել , օդին ջերմութիւնը երթալով կը պակսի այնպէս , ինչպէս կը պակսի երբ հասարակածէն

դէպ ի բեւեռները երթալով կ'անցնինք ջերմութեան տարբեր աստիճաններ ունեցող գոտիներէ :

Հ. Զեան սահմանն Բնչ է :

Պ. Սահման մը կայ որմէ անդին ձմեռը տեղացող ձիւնը չալիր ամառը . այս սահմանին բարձրութիւնը ծովին երեսէն տարբեր է լայնութեան այլև այլ աստիճաններուն տակ , և կը կոչուի ձեան սահման : Երկու արեւադարձներուն մէջտեղ այս սահմանն աւելի բարձր է :

Հ. Տեղւոյ մը ջերմութիւնը ցորեկուան բուլոր ժամերուն մէջ միօրինակ է :

Պ. Նաեւ ցերեկը ջերմութիւնը տակաւ կը յաւելու և կը նուազի : Օրուան ջերմագոյն ժամը կէս օրէն 2 ժամ ետքն է , իսկ զովագոյն ժամը՝ կէս օրէն 9 կամ 6 ժամ առաջ է : Տեղւոյ մը օրուան միջին ջերմութիւնը Յունվարի մէջ է կէս օրէն երկու ժամ առաջ , իսկ Յուլիսի մէջ՝ կէս օրէն 5 ժամ առաջ : Միւս ամիսներուն մէջ այս ժամերուն մէջ տեղն է :

Հ. Տեղւոյ մը տարեկան միջին ջերմութիւնըն Բնչպէս կը գտնուի :

Պ. Տեղւոյ մը տարեկան միջին ջերմութիւնը կը գտնուի իւրաքանչիւր օրուան միջին ջերմութիւններն հաշուելով : Այսպէս գտնուած է որ հասարակածին տարեկան միջին ջերմութիւնն է . . . . . 27°,7

Գահիրէին . . . . . 22°,4

Հոռմին . . . . . 15°,4

Բէքինին . . . . . 12°,7

Նիւ Եորքին . . . . . 12°,4  
Բարիզին . . . . . 10°,8  
Լոնտոնին . . . . . 10°,4  
Վիէնային . . . . . 10°,1  
Պէրլինին . . . . . 8°,6  
Բէդրսպուրկին . . . . . 3°,5  
Հ. Տեղւոյ մը ջերմութիւնը միօրինակ է բոլոր տարին :

Պ. Տեղւոյ մը ջերմութիւնը բոլոր տարւոյն մէջ տակաւ կը նուազի և կը յաւելու : Աստիեն չորս եղանակներն , ամառ , ձմեռ , աշուն և գարուն : Ամառը ջերմագոյն եղանակն է , ձմեռը՝ ցրտագոյն , աշունը եւ գարունը բարեխառն , բայց աշունն , ամառուան յաջորդելուն համար , ընդհանրապէս աւելի բարեխառն է քան գարունը որ կը յաջորդէ ձմերան :

Հ. Երկրիս ամէն մասին վրայ կան այս չորս եղանակները չկան . զոր օրինակ , այրեցեալ գոտւոյն մէջ երկու եղանակ միայն կայ , մինչնշեայ , և միւսն՝ Երաշութեան : Ցրտային կամ սառուցեալ գոտիներուն մէջ շատ կարծ և տաք ամսուան մը վաղլազակի կը յաջորդէ երկար և խիստ ձմեռ : Կան եւս տեղեր ուր մշտնջենաւոր գարուն կամ հանապազորդ ձմեռ և կամ միշտ ամառ է :



ԴԱՍ ԺԴ.

Հ. Լայնութեան միևնոյն աստիճան ունեցող տեղերու կլիման միևնոյն է :

Պ. Լայնութեան միևնոյն աստիճանի տեղեր շատ անդամ տարբեր կլիմայ ունին և ասոր պատճառներն այլեւայլ են, այսինքն՝ ոչընդհանուր որ կը փշեն տաք կամ ցուրտ երկիրներէ, անյըւներու առաջարկ կամ նուազուննեալ, չոքին բարաւորունիւննը, Երկրին բարյըրունիւննը ծովին երեսէն, այլովքն հանդերձ : Այսպէս Նիւ-Եսորք և Նաբոլի որ գրեթէ միևնոյն աստիճանի լայնութեան մէջ են, շատ տարբեր միջին ջերմութիւն ունին .

Նիւ Եսորք  $40^{\circ}44'$  լայն .  $12^{\circ},1$  միջին ջերմ .  
Նաբոլի  $40^{\circ}50'$  »  $17^{\circ},4$  » »

Հ. Ծովերու բարեխառնութիւնը ցամաքին բարեխառնութեան հետ ի՞նչպէս է :

Պ. Ընդհանրապէս ծովերու վրայ օդը ոչ կարի ջերմէ և ոչ կարի ցուրտ, քանզի ծովս այնպէս արագ չտաքնար և պաղիր ինչպէս ցամաքը : Ծովին այս բարեխառնութիւնը կ'ազգէ նաեւ ծովեղերեայ ցամաքաց : Ուստի կղղիք և ծովափունք ոչ այնպէս տաք են ամառը և ոչ այնպէս ցուրտ ձմեռը որչափ ծովեղրէն հեռու տեղեր :

Հ. Ասոր պատճառն ի՞նչ է :

Պ. Ասոր մէկ պատճառը հովերն են . զոր օրինակ արեւմտեան հովս Ամերիկայի մէջ

ցամաքին վրայէն դալով ձմեռը շատ ցուրտ կ'ընէ հոն, մինչ նոյն հովը Եւրոպայի վրայ կու դայ Ադլանդեան ովկիանոսի վրայէն, ուստի և է, իբրեւ ծովային հով, մեղմ: Ուրիշ պատճառ են յորձանքը, զորօրինակ կըֆ-“Ռէն” կոչուած յորձանքը որ Ամերիկայի հասարակածին կողմէն կու դայ Եւրոպայի արեւմտեան ծովեղը, բաւական ջերմութիւն կը հաղորդէ այն ծովեղեր :



ԴԱՍ ԺԵ .

Հ. Լայնութեան որ աստիճաններուն մէջ կը սկսի տեսնուիլ սառոյց ծովին վրայ :

Պ. Դէպ ի 40րդ աստիճան հիւսիւսային լայնութեան՝ ծովին վրայ սառոյց շատ անօր է . 50րդ աստիճանին մէջ ափունք ովկիանու կը սառին : Իսկ ներքին ծովերու մէջ ցուրտն աւելի սաստիկ է . զորօրինակ Սեւ ծովը 43րդ աստիճանին մէջ սառոյց կը կապէ ծովեղրէն բաւական հեռու : 60րդ աստիճանին մէջ ծոցեր և ներքին ծովեր բոլորովին կը սառին, ինչպէս Պողնեան ծոցը : 70րդ աստիճանին տակ, գրեթէ ամէն եղանակի մէջ սառուցի ահազին կղղիներ կը լողան ծովին Երեսը, իսկ 80րդ աստիճանին մէջ կը դառնուին հաստատուն սառոյցք որ չեն համար սակայն մինչև ծովին յատակը : Այս հաստատուն կամ մշտնջենաւոր սառնամանեաց վրայ կը տեսնուին ըն-

դարձակ դաշտեր , հովիտներ , լեռներ և լեռանց կատարներ բիւրեղանման սպիտակ փայլուն :

### ԴԱՍ Ժ Զ .

Հ . Լեռանց վրայ ձեան և սառուցի սահմաններն ինչ են :

Պ . Որովհետեւ մթնոլորտին մէջ դէպ ի վեր ջերմութիւնը երթալով կը նուազի , բարձր լերինք , այսափ կամ այնչափ մէդրոյ բարձրութենէ վեր , մշտնջենաւոր ձեամբ կամ սառնամանեօք ծածկուած են : Սահմանը որմէ վեր ձիւն կամ սառոյց է՝ կըսուի ձեան և սառուցի սահման :

Հ . Մշտնջենաւոր ձեան սահմանը բոլոր լեռանց վրայ միեւնո՞յն է :

Պ . Մշտնջենաւոր ձեան սահմանն , ըստ կըլիմայի երկրին ուր է լեռը , և ըստ այլ պատճառաց , այլեւայլ է : Այրեցեալ գոտոյն մէջ լեռան ստորոտէն 4,800 կամ 4,500 մէդրոյ վեր կը սկսի մշտնջենաւոր ձեան սահմանը : Հիմալայա լեռանց վրայ կը սկսի 5,000 մէդրոյ վեր : Հիւսիսային լայնութեան 45<sup>րդ</sup> աստիճանին մէջ այս սահմանը կը սկսի 2,500 մէդրոյ վեր . 65<sup>րդ</sup> աստիճանին՝ 1,500 մէդրոյ . 71<sup>րդ</sup> աստիճանին , ինչպէս Սբիցպերկ , այս սահմանը դըրեթէ ծովուն երեսին հաւասար է :

Հ . Սառնոց ինչ է :

Պ . Սառնոց կըսուին լեռանց վրայ , մանա-

ւանդ լեռանց հովիտներուն մէջ , կոյտք սառնամանեաց որ կը կազմուին հալած ձեանէ : Ալպեան և Պիւրենեան լեռանց վրայ շատ կան այսպիսի սառնոցք : կան երեւելի գետեր , ինչպէս Ռենոս և Հռոդանոս , որ սառնոցներէ հոսող ջուրերէ կը կազմուին :

Հ . Սառնոցներուն վրայ շատ անգամ ինչ կը տեսնուի :

Պ . Սառնոցներուն վրայ կը տեսնուին շատ անգամ աւաղանման մանր մանր հատեր , որոց մէջ կ'ընկղմի սառին վրայ քալողին ոտքը , ինչպէս կ'ընկղմի աւազի վրայ քալողինը :

Հ . Սառնոցք կը մնան միշտ լեռանց մէջ :

Պ . Սառնոցք անգադար կը դիմեն դէպ ՚ի վար հովիտներու և ձորերու մէջ , և անոնց էջն ընդհանրապէս շառաչմամբ է :



### ԴԱՍ Ժ Է .

#### ՀՈՂՄ

Հ . Հողմը կամ հողմ ինչ է :

Պ . Հողմը կամ հողմ օդին շարժումն է : Երբ օդին մի մասը կ'անդայտանայ տաքէն , կամ կը խտանայ ցուրտէն , օդին հաւասարակշռութիւնը կը կորսուի , և իսկոյն շարժումը յառաջ կուգայ օդին մէջ : Օդին անգայտանալուն կամ խտանալուն սաստկութենէն կամ մեղմութենէն կախում ունի հովին սաստկութիւնը կամ մեղմութիւնը :

Հ. Հովը միշտ միենոյն արագութեամբ կը շնչէ :

Պ. Հովին արագութիւնը միշտ միօրինակ չէ : Մեղմ կամ քաղցրաշունչ է հովը, եթէ իւրաքանչիւր մանրերկրորդ զ մէդրոյ կ'երթայ . ուժգին կամ խստաշունչ է, եթէ իւրաքանչիւր մանրերկրորդ 10 մէդրոյ կ'երթայ . մըրիկ է, եթէ 22 մէդրոյ կ'երթայ իւրաքանչիւր մանրերկրորդ . ծառերն արմատէն հանող և շինուածներ կործանող փոթորիկ կամ ամպրոպ է, եթէ ամէն մանրերկրորդ 43 մէդրոյ կ'երթայ :

Հ. Քանի տեսակ հով կայ :

Պ. Հովերն ընդհանրապէս երեք կը բաժնուին, հաստատուած կամ ընդհանուր հովեր, պարբերական հովեր և փոփոխական հովեր :

Հ. Հաստատուած կամ ընդհանուր հովինչ է :

Պ. Հաստատուած կամ ընդհանուր կը կոչուի հովը որ բոլոր տարին կը փչէ : Այսպէս է աւելի կոչուած մեղմ հովը, որ հասարակածին երկու կողմը մինչև 38 աստիճան կը փչէ ցամաքին և մանաւանդ ծովուն վրայ, ընդհանրապէս արեւելքէն արեւմուաք :

Հ. Պարբերական հովս թնչ է :

Պ. Պարբերական կը կոչուի հով մը որ ամէն տարի որոշեալ ժամանակ կը սկսի փչել: Այսպիսի են, արաբերէն բառով, հուսոն կոչուած հողմունք որ վեց ամսէ վեց ամիս կը փչեն այրեցեալ գոտուոյն մէջ, այսինքն դարնան և աշնան :

Պարբերական հովեր կան նաեւ Միջերկրական ծովուն վրայ . զորօրինակ պէտք կոչուած հովը որ ընդհանրապէս կը փչէ ծովեզերեայ տեղեր ամէն 12 ժամ, առաւօտ և երեկոյ . առաւօտուն՝ ծովէն դէպ ի ցամաք, երեկոյին ցամաքէն դէպ ի ծով :

Հ. Փոփոխական հով թնչ է :

Պ. Փոփոխական կը սուխն այս հովերը որ երկնից մերթ այս և մերթ այն կողմէն կը փչեն, ստէպ փոխուելով: Այսպիսի հովեր կը փչեն ընդհանրապէս բարեխառն գոտիներու մէջ, ուր ակրոն հողմունք կը կոչուին այն հովերը որ քան զայլս յաճախ կը փչեն :

Դէպ ի հիւսիս հովերը փոփոխական են :

~~~~~

## ԴԱՍ ԺԷ.

Հ. Ի՞նչ է պատճառ որ հովերն աւելի կամ նուազ ցուրտ կամ ցուրտ կամ ջերմ են :

Պ. Ցուրտ երկիրներէ փչող հովերը ցուրտ են, ջերմ երկիրներէ փչողները՝ բարեխառն: Եւրոպայի մէջ ցրաագոյն հովը հիւսիսային հողմն է . իտալերէն ժակուրոյ կոչուած հիւսիսային հովը ոչ միայն ցուրտ այլ եւ ուժգին է : Ակրոն կոչուած հովն յիտալիա, և աւանա կոչուածն ի Սպանիա, հարաւային տաք և հեղձաւցիչ հովեր են, և կը թուփ թէ Ավրիկէէ կը փչեն: Հարաւային հով է նաեւ խաճախ կոչուած հովը որ կը չնչէ յեղիպտոս, յիսուն օր

գարնան գիշերահաւասարէն յառաջ և յետոյ :  
Սամ, այսինքն խորչակը որ Արաբիոյ անապատա-  
ներէն և Ափրիկէի հիւսիսէն կու գայ, է կի-  
զիչ և ահաւոր, և կը բերէ գեղին, կապոյտ  
կամ մանուշակադոյն աւազոյ և փոշոյ ամպ  
ծծմբահոտ :

Հ. Անձրեւաբեր հովեր որո՞նք են :

Պ. Անձրեւաբեր հովերն ամէն տեղ միեւ-  
նոյն չեն . այս ինչ տեղ հիւսիսային հովը կը  
բերէ անձրեւ, ուրիշ տեղ՝ հարաւային հովը,  
գարձեալ ուրիշ տեղ՝ արեւելեանը կամ արե-  
մոեանը :


Հ. Հովերն ի՞նչ ուղղութեամբ կը փշեն :

Պ. Հովերը կը փշեն ընդհանրապէս հորի-  
զոնական ուղղութեամբ, երբեմն նաեւ վերէն  
վար, կամ վարէն վեր :

Հ. Սաստիկ հովերն ի՞նչ կանուանուին :

Պ. Սաստիկ հովերը կը կոչուին հրեն, ժողորին,  
ամպոպ : Մըրիկը սաստիկ հով է և ստէպ կը  
պատահի բարեխսառն և ցրտային գօտիներուն  
մէջ. փոթորիկն յանկարծական մրիիկ է. ամպ-  
րովը քան զսոսա սաստիկ է, ծառեր կը հա-  
նէ արմատէն, շինուածներ կը տապալէ, և կը  
պատահի ընդհանրապէս այլեցեալ գօտուոյն  
մէջ : Անդիլեան կղղիք և Ափրիկէի կղղիք յա-  
ճախս կը կրեն այս սոսկալի հարուածը : Երկ-  
րիս այլեւայլ, մանաւանդ տաք մասերուն  
մէջ կը պատահին երկայն կամ կարճ տեւող  
մրիիկներ որ այլեւայլ անուն ունին, ինչպէս  
ուժուն կամ ուժունէ կոչուած սոսկալի ամպո-

պըն որ կը տիրէ Զինու ծովին մէջ երբեմն  
Յուլիսէ մինչեւ Հոկտեմբեր : Շատ կարճ փո-  
թորիկ են հատ և պառապակ կոչուած հովերը,  
մանաւանդ Բանառը որ և վէշո կը կոչուի :



Թ. Ա. Թ. Ա. Ա.

Հ. Թաթառն ի՞նչ է :

Պ. Թաթառն է տեսակ մը պտուտակ հով,  
որ կիջնէ վերէն կոնաձեւ կամ գլանաձեւ .  
յաճախ չպատահիր, բայց է զսասակար յոյժ,  
և պատճառը ծանօթ չէ :

Հ. Թաթառը քանի տեսակ է :

Պ. Թաթառը երկու տեսակ է, ծովայն և  
շամառայն : Ծովու թաթառը սոսկալի է . արագ  
արագ գառնալով կ'երթայ տեղէ տեղ, կը

քաշէ ծովուց կամ ծովակաղ ջուրը : Այս թա-  
թառը մեծ երկիւղ կուտայ նաւաստեաց , որ  
երբեմն թնդանօթոյ գնդակներով կը փա-  
րատեն այս ահագին սիւնը : Ցամաքի թա-  
թառն այնչափ մեծ չէ , բայց և այնպէս կը  
խլէ գետնէն ծառեր , կը քակէ տանց յար-  
կեր , կը վերցունէ մեծամեծ մարմններ , կը  
տապալէ որմեր , և վայրկենի մէջ մեծամեծ  
աւերումներ կը գործէ : Թաթառին հետ կը  
տեսնուին նաեւ հրեղէն դունտեր շանթար-  
ձակ , որոտաձայն : Այսպիսի ահեղ թաթառ  
մը տեսնուեցաւ 1845ին Գաղիա Բարիզու մօտ :

---

## ԴԱՍ ԺԹ .

ՕՐԵՐԵՒՈՅԹՔ

Հ. Օդերեւոյթք ի՞նչ են :

Պ. Օրեւեայն կ'ըսուի ինչ որ ժամանակ ժա-  
մանակ կը տեսնուի օդին մէջ :

Հ. Օդերեւոյթք քանի՞ տեսակ են :

Պ. Օդերեւոյթք երեք տեսակ են , 1. Զբա-  
յն , 2. Հրային և 3. Մաքնիսային :

1. Զրային օդերեւոյթք

Հ. Զրային օդերեւոյթք որո՞նք են :

Պ. Զրային օդերեւոյթք են ամառ , մայ-  
քս , յիւն , հաբիսար :

Հ. Զրային օդերեւոյթք ուստի կը դոյա-  
նան :

Պ. Զրային օդերեւոյթք կը դոյանան ջեր-  
մութեան միջոցաւ երկրէն ցոլացեալ գոլոր-  
շիէն : Այս գոլորշին ցորչափ թեթեւ է , կը  
մնայ օդին մէջ աւելի կամ նուազ թանձր ,  
այս է ամպ , և կամ կ'իջնէ երկրիս երեսը ,  
և կը կոչուի մէտ :

Հ. Ամպերն ի՞նչպէս կ'երեւան օդին մէջ :

Պ. Ամպերը կ'երեւան օդին մէջ մերթ թել  
թել , կամ ձեան տարափոյ նման . մերթ կոյտ  
կոյտ իբրեւ բամպակի գնտակներ , և մերթ  
օթոցի նման տարածուած , շատ անդամ նաև  
խառն , և միշտ նշանակ են օդոյ փոփոխու-  
թեան , մանաւանդ հողմոյ և անձրեւի :

Հ. Ամպերն երբ աւելի մօտ են երկրիս :


Պ. Ամպերն աւելի մօտ են երկրիս գեշերը  
քան ցերեկ , քանզի ջերմութիւնը որ ցերեկ  
աւելի է՝ անդայտացնելով վեր կը հանէ շոգին :

Հ. Մէգն ի՞նչ է :

Պ. Մէգը գոլորշի է որ յառաջ քան ելա-  
նեն օդը , խտանալով կը տարածի երկրիս ե-  
րեսը , ընդհանրապէս առաւօտուն և երեկո-  
յին , երբ օդը բաւական տաք չէ որ գոլորշին  
ելլէ վեր :

Հ. Անձրեւն ի՞նչ է :

Պ. Երբ ամպերը կը խտանան , գոլորշին  
լուծուելով ի ջուր , կը թափի երկրիս վրայ ,  
և այս է անձրեւ : Անձրեւը աւելի յաճախ  
են լեռնային և անտառային , քան դաշտային



ԶԵՒՔ ԱՄՊՈՑ

և բաց տեղեր, վասն զի անտառներն ընդհանրապէս իրենց կը ձգեն անձրեւը :

Հ. Անձրեւք ուր և թրբ աւելի յորդ են :

Պ. Անձրեւք աւելի յորդ են տաք քան ցուրտ տեղեր. զորօրինակ հասարակածին կողմերը քան բարեխառն գօտիներ. բարեխառն գօտիներ՝ քան բեւեռներուն մօտ. ամառը՝ քան թէ ձմեռը, ցերեկ՝ քան թէ զիշեր : Պատճառն այս է որ, որչափ աւելի տաք է գետինն, այնչափ աւելի շոգի կ'ելլէ երկրէն վեր :

ԴԱՍ Ի.

Հ. Այրեցեալ գօտւոյն մէջ անձրեւն ի՞նչ-պէս է :

Պ. Այրեցեալ գօտւոյն մէջ անձրեւք կը տեղան որոշ ժամանակներ մեծ յորդաթեամբ, և կը տեւեն ամիսներ. այս պատճառաւ այն երկիրներուն մէջ գետերն անձրեւի եղանակներ այնպէս կը յորդեն, որ ամբողջ երկիրներ կը ծածկուին, ինչպէս Եգիպտոս :

Հ. Այս յորդ անձրեւներն ո՞ր ամիսները կը տեղան այրեցեալ գօտւոյն մէջ :

Պ. Այրեցեալ գօտւոյն հիւսիսային մասին մէջ անձրեւք կը սկսին Ապրիլի մէջ մեղմով, Յունիսի և Յուլիսի մէջ կը սաստկանան . Սեպտեմբերի մէջ արդէն քաշուած է ջուրը և սկսած է կանաչութիւնը : Հոկտեմբերէ մինչև Ավգուստիլ կաթիլ մը անգամ անձրեւ չիյնար : Հարաւային մասին մէջ ասոր հակառակն է. Հոկտեմբերէ մինչեւ Մարտ է անձրեւի եղանակը, տարւոյն մնացեալ մասն երաշտութիւն է :

Հ. Բարեխառն գօտիներուն մէջ անձրեւն ի՞նչպէս է :

Պ. Բարեխառն գօտիներու մէջ անձրեւներն խառն պատճառներէ յառաջ կու գան, ուստի և տարեկան անձրեւներուն ժամանակն անյայտ է : Առհասարակ լուսինը կը կարծուի պատճառ օդոյ փոփոխմանց, բայց ըստ արդի գիտնոց այս կարծիքը սխալ է :

Հ. Ամպոտ ժամանակ միայն կ'անձրեւէ :

Պ. Այրեցեալ գոտուոյն մէջ երբեմն կ'անձրեւէ, մինչ երկինք պարզ և առանց ամպոյն են : Այն կողմերուն օդին բնութենէն, գուրզիք առանց ամպանալու յանկարծ խտանալով կը թափին վար :

Հ. Գունաւոր անձրեւը Բնչ են :


Պ. Երբեմն հովերը երկրէս այլեւայլ նիւթեր առնլով, ինչպէս ծաղկանց դեղին փոշին, հրաբուխներուն մօտէն ծծմբային հիւթելուն ամպերը : Այս նիւթերն են որ անձրեւին խառնուելով կ'իջնեն երկիր : Այսպիսի անձրեւներ կը կոչուին հարհէ անձրեւ, արեան և շահճոյ անձրեւ : Երբեմն անձրեւներու հետ կը տեղան նաեւ մանր մանր ճճիներ կամ գորտեր, ասոնց եւս պատճառը հովերն են : Բայց երբեմն այսպիսի անառունք անձրեւէն ետքը ելլելով իրենց ծակերէն կը տարածուին երկիրին վրայ, և տեսնողք վերէն տեղացած կը կարծեն զանոնք :

## ԴԱՍ ԻԱ.

Հ. Զիւնն Բնչ է :

Պ. Զիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ անձրեւ որ յուրտ եղանակին օդին մէջ սառելով վար կը թափի : Եթէ ձեան տարափները մթագոյն մարմնոյ մը վրայ հաւաքելով զննենք, կը տեսնենք որ այն տարափները գեղեցիկ և



կանոնաւոր ձեւով են, ինչպէս աս պատկերին մէջ կը տեսնուին : Զիւնն ընդհանրա-



պէս սպիտակ է, բայց բարձր լեռներու մէջ և բեւեռներուն կողմերը կը տեսնուին կարմէ յարճ ծածկուած տեղիք : Զեան այս գունաւորութեան պատճառն են ժժմակներ և մնկոյ տեսակ մանր մանր տունկեր :

Հ. Կարկուտն Բնչ է :

Պ. Կարկուտը ձեան պէս մթնոլորտին մէջ սառած ջրոյ կաթիլներ են, երբեմն բաւական մեծութեամբ : Կարկուտը կը տարբերի ձիւնէն, նախ վասն զի ընդհանրապէս ամառը կը տեղայ և տուընջեան ջերմագոյն ժամերը : Երկրորդ՝ վասն զի վասակար է բերոց երկրի, կարկուտ պատճառը դեռ



ԿԱՐԿՈՒՏ

Ըստ բաւարականին ճանչցուած չէ :

Հ. Ուրիշ թնչ ջրային օդերեւոյթներ կան :

Պ. Ուրիշ ծանօթ ջրային օդերեւոյթներ են, առև, եղեամ և թօն կամ ջաղբ :

Հ. Ցողն թնչ է :

Պ. Ցող երկրիս մօտ գոլորշին է որ պաղէն խոտանալով կը նստի ծաղկանց, խոտերու, և ուրիշ թեթեւ մարմիններու վրայ : Ցողն աւելի առատ է ծովեղերեայ տեղեր, և շատ օդտակար է բուսոց :

Հ. Եղեամն թնչ է :

Պ. Երբ երկրիս երեսին վրայ մէդ կայ, և յանկարծ կը ցրտանայ օդը, մէդը սառելով կը նստի ծառերու, խոտերու և ուրիշ մարմիններու վրայ ի ձեւ մանր ասղան կամ բըրդան :

Հ. Թօն թնչ է :

Պ. Թօն հողմախառն սաստիկ անձրեւ է, շատ անդամ որոտմամբ, կայծակներով, երբեմն նաեւ կարկտով. աւելի յաճախ լեռնային քան դաշտային տեղեր կը պատահի:

*Ե - Տարբերակ*

## ԴԱՍ Ի Բ.

### 2. Հրային օդերեւոյթը

Հ. Ո՞ր երեւոյթք կը կոչուին հրային :


Պ. Հրային կը կոչուին օդին մէջ փայլող կամ վառող երեւոյթք, ինչպէս են հայլուկ կայծակի :

Հ. Նաւորդաց լոյս, կամ Ա. Էլմոյի հուրն թնչ է :

Պ. Կան տեսակ մը անժնաս երեւոյթներ, որոց պատճառն է սաստիկ աստիճան ելեկտրականութեան : Երբ օդը շատ լցուած է ելեկտրականութեամբ, ինչպէս ուժգին ձեան և անձրեւի ժամանակ, օդոյ մէջ կը տեսնուին տժգոյն բոցեր որ կ'երերան ոչ հաղորդիչ մարմնոց կամ զատուցեալ հաղորդիչներու ծայրերը :

Նաւորդաց լոյսը կամ Ա. Էլմոյի հուրն այս տեսակ երեւոյթներէն է, և ընդհանրապէս բարենշան կը համարուի նաւաստիներէն : Այս երեւոյթը ճանչցուեցաւ կոլորպոսի և Մակէլանի նաւարկութեանց ատեն : Ֆորսին այսպէս կը նկարագրէ այս երեւոյթը զոր տեսաւ 1696 ին . «Երկինք ծածկուեցաւ յանկարծ թանձր ամպերով : Վախնալով թէ փոթորիկ պիտի ելնէր՝ ամփոփել տուի առադաստները : Նաւին վրայ տեսնուեցաւ աւելի քան երեսուն Ա. Էլմոյի հուր . մին կեցաւ մեծ կայմին առագաստակամին վրայ, և էր իբր իննեւտասն մատ երկայն : Նաւաստի մը դրկեցի բերել զայն : Երբ նաւաստին վեր ելաւ, լսեց ձայն մը նման ձայնի խոնաւ վառօդոյ որ կ'այրի : Հրամայեցի վար առնել առագաստակալը . նաւաստին կատարեց հրամանս, հուրը վերացաւ կայմին ծայրը . անկէ շարժել զնա անհնար էր :

Ամիթ ծովապետը կը նկարագրէ ուրիշ մը շոր տեսաւ 1807 ին նաւի մը վրայ բանամայի



ՆԱԽՈՐԴԱՅ ԿԱՄ Ս. ԷԼՄՈՅԻ ՀՈՒՐ

ծոցը , այնպէս փայլուն , որ նաւին մարդիկը  
կը տեսնէին իրարու երես՝ ի մթան :

Հ. Մոլի հուրն ի՞նչ է , և ուստի յառաջ  
կուգայ :

Պ. Մոլի հուր . այսպէս կը կոչուի այն դար-  
մանալի օդերեւոյթը , որ յառաջ կուգայ  
մանաւանդ այնպիսի տեղեր ուր կայ շատ  
փառութիւն և նեխութիւն լուծեալ մարմնոց :



ՄՈԼԻ ՀՈՒՐ

Կը տեսնուի պատերազմի գաշտերու մէջ ուր  
շատ մարդիկ ինկած են , ինչպէս նաեւ մօ-  
րուտ տեղեր , դողդոջուն , երերուն , քանի  
մը ոսկը վեր գետնէն , և շուտով աներեւոյթ  
կըլլայ : Կը կարծուի թէ այս երեւոյթին  
պատճառ են կազեր որ կելնեն անամոց և  
նոկոց փառեալ մարմիններէն :

Հ. Փայլակ և կայծակ ի՞նչ են :

Պ. Փայլակ այն կայծն է որ որոտման ժա-

մանակ արագ արագ կ'արձակի ամպերէն .  
իսկ կայծակ՝ ամպերէն դալով երկրիս զարնող  
կայծն է :

Հ. Այս երեւոյթին պատճառն Բնչ է :

Պ. Այս երեւոյթին պատճառն է Ելեկտրա-  
կանութիւնը որով աւելի կամնուազ լցուած  
է և շոգի փոխուած ջուն, որպիսի են ամպք :

Հ. Ելեկտրականութիւն Բնչ է :

Պ. Ելեկտրականութիւն կ'ըսուի մարմիննե-  
րուն այն յատկութիւնը որ շփմամբ կը գըրգ-  
ուի. այնպէս են ամպերն որոնք իրարմէ շըփ-  
ուելով կը փայլատակին : Ելեկտրականութեան  
վրայ կը խօսի Բնագիտութիւնը :

Հ. Ընդհանրապէս Երբ կը փայլատակէ :

Պ. Ընդհանրապէս կը փայլատակէ սաստիկ  
տաքէ ետքը : Կան սակայն երկիրներ, Բնչպէս  
Աւտրալիա, ուր ցրտագին և միդու ժամա-  
նակ կը փայլատակէ և կ'որոտայ :

Հ. Ոմէն երկրի կամ կիմայի մէջ կայ փայ-  
լատակել և որոտալ :

Պ. Այլեցեալ գօտւոյն մէջ յաճախ և սաս-  
տիկ են փայլատակունք և որոտմունք . Բերուի  
արեւմտեան եղերը միայն շտեսնուիր այս  
Երեւոյթը : Հիւսիսային լայնութեան 65° աս-  
տիճանէն անդին դուն ուրեք կը փայլատակէ  
և կ'որոտայ, իսկ 75° աստիճանէն անդին,  
մանաւանդ կղզիներու մէջ և ծովու վրայ, ոչ  
երբէք : Փայլատակել և որոտալ այնչափ յա-  
ճախ չէ ծովու, որչափ ցամաքի վրայ :

## ԴԱՍ ԻԳ.

Հ. Ուրիշ Բնչ երեւոյթ հրային կրնայ հա-  
մարուիլ :

Պ. Հրային օդերեւոյթ կրնայ համարուիլ  
նաեւ օդա+ար, որ երբեմն կ'ինայ երկրիս վը-  
րայ :

Հ. Կրնամաս համառօտիւ նկարագրել օդա-  
քարը :

Պ. Օդաքարը կը տեսնուի ի սկզբան օդին  
մէջ իրբեւ բորբոքեալ գունտ որ կու գայ մեծ  
արագութեամբ, կայծակներ արձակելով և  
լուսեղէն հետք թողլով ետեւէն : Քիչ ժամա-  
նակ վառելէն ետքը կը պայթի օդին մէջ հե-  
ռուն որոտաձայն, և կ'արձակէ քարեր որ  
ուժգին շառաչմամբ կամ սուլելով կ'ինան  
երկրիս վրայ հրաշէկ, սաստիկ ծծմբոյ հոտ  
արձակելով :

Հ. Օդաքարն Բնչ նիւթերէ կը բաղկանայ :

Պ. Օդաքարը կը բաղկանայ երբեմն զուտ  
երկաթէ, բայց ընդհանրապէս կը պարունակէ  
այլեւայլ քրէական (հանքային) նիւթեր, Բնչ-  
պէս գայլախազ, երկաթ, նկրէլ, դառնիճ  
հող (մագնեսիա), կիր, ծծումբ և սոցին նման  
նիւթեր :

Հ. Օդաքարն Բնչ պատճառի կ'ընծայուի :

Պ. Օդաքարը այլեւայլ պատճառաց կընծայ-  
ուին, բայց ըստ հաւանականագոյն կարծեաց  
ասոնք մանր մանր մոլորակներ են քանի մը

մէդրոյ տրամագ ծով , և իրենց շարժման մէջ  
երկրիս մօտ գալով կը ձգուին երկրէն և կ'իյ-  
նան :

ԴԱՍ Ի Դ .

3. Մազնիսական օդերեւոյքք

ԲԵԼԵՐԱԿԱՆ

Հ. ԲԵԼԵՐԱԿԱՆ ԲԻՆԸ Է :

Պ. ԲԵԼԵՐԱԿԱՆ այն զարմանալի լուսաւոր  
երեւոյթն է , որ կը տեսնուի երկրիս երկու  
բեւեռներուն , մանաւանդ հիւսիսային բեւե-  
ռին կողմը յաճախ , երբեմն նաև բարեխա-  
ռըն գօտիներու մէջ : ԲԵԼԵՐԱԿԱՆ ոչ միայն  
զարմանալի , այլեւ շատ կարեւոր է երկրիս  
բեւեռակողմանց համար , վասն զի այն երկիր-  
ներուն բազմօրեայ գիշերները կը լուսաւորէ  
շատ աւելի գեղեցիկ քան կազի լապտերներն  
մեր քաղաքաց փողոցները : Հիւսիսային բեւե-  
ռականը կը կոչուի հետապնդ , հարաւայինը՝ հա-  
շտապնդ :

Հ. ԲԵԼԵՐԱԿԱՆ ԲԻՆԸ պատճառի կ'ընծա-  
յունի :

Պ. ԲԵԼԵՐԱԿԱՆ պատճառ կը կարծուի  
մագնիսականութիւնը , քանզի այս երեւու-  
թին ատեն կողմնացուցին վրայ խառնակու-  
թիւն կը տեսնուի , և կողմնացուցին ասղան  
մէկ ծայրը կ'ուղղուի բեւեռականին դէպ ի  
կեդրոնը :

Հ. Մագնիսականութիւն ԲԻՆԸ Է :

Պ. Մագնիսականութիւն մարմիններուն ու-  
րիշ մէկ յատկութիւնն է որ մեծ նմանութիւն  
ունի ելեկտրականութեան հետ , և որոյ վրայ  
կը խօսի բնագիտութիւնը :

Հ. Կողմնացոյց ԲԻՆԸ Է :

Պ. Կողմնացոյցը նաւապետաց ծովուն վրայ  
ճամբայ ցուցնող գործիք է , որ կը բաղկանայ  
լիսրան (Ք) վրայ ամէն դի շարժող մագնիսաց-  
եալ երկաթի պարբէ : Այս պարբը կը կոչուի ա-  
ռել , որոյ ծայրերէն մին դարձած է միշտ դէպ  
ի հիւսիսային բեւեռ :



ԴԱՍ Ի Ե .

Գ. ԵՐԿՐՈՇՈՒՆՑԸ ԲՈՂԿԱՑՆՈՂ ԵԽ ԵՐԿՐՈՇ  
ԵՐԵԾԸ ԶԱՐԴԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՔ

Հ. Երկրագունուը բաղկացնող և երկրիս ե-  
րեսը զարդարող մարմինք քանի տեսակ են և  
ԲԻՆԸ կը կոչուին :

Պ. Երկրագունուը բաղկացնող և երկրիս ե-  
րեսը զարդարող մարմինք երկու տեսակ են ,  
1. Անդորձարան և 2. Գործարանաւոր :

Հ. Անդորձարան մարմինք որո՞նք են :

Պ. Բաց ի բոււոց և չնչաւորաց , անգոր-  
ծարան են ուրիշ բոլոր մարմինք , օդը , ջու-  
րը , քարինք , հանք , մետաղք :


Հ. Ընդէր բոյսը և շնչաւորք գործարանաւոր կը կոչուին, և այլք՝ անգործարան :

Պ. Բոյսը և շնչաւորք գործարանաւոր կը կոչուին, վասնզի ունին այլեւայլ գործարաններ իրենց կենաց հարկաւոր գործողութեանց համար, ինչպէս մնունդ և օդ առնելու, սերունդ յառաջ բերելու, շնչաւորք՝ նաեւ ըզդալու և տեղէ տեղ երթալու : Անգործարան մարմինք այսպիսի գործարաններ չունին, վասն զի ոչ կեանք ունին և ոչ կենսական գործողութիւններ : Անգործարան մարմինք երկրիս կեղեւը կը կազմեն, գործարանաւորք կը զարդարեն երկրիս երեսը :

Հ. Երկրիս կեղեւն բնչ կազմութիւն ունի :

Պ. Երկրիս կեղեւին կազմութիւնն է խաւէ խաւ, այսինքն այլեւայլ նիւթեր ժամանակ ժամանակ երկրիս երեսը ծածկող ջրոյն տակ նաստած են իրարու վրայ խաւ խաւ : Այս խաւերն իրարմէ կը տարբերին և կը զանազանուին ոչ միայն իրենց նիւթոյն, այլ և իւրաքանչիւրին մէջ գտնուած գործարանաւոր մարմնոց յատուկ տեսակներուն կողմանէ :

Երկրիս կեղեւը կազմող խաւերուն վրայ կը խօսի երկրարանութիւնը :



## ԴԱՍԻ ՏԶ.

### 1. ՇՆԿՈՐԺԵՐԱՆ ՄՈՒՄԻՆՔ

Հ. Երկրիս կեղեւը կազմող անգործարան մարմինք քանի կը բաժնուին :

Պ. Երկրիս կեղեւը կազմող անգործարան մարմինք կը բաժնուին երեք, Ա. տարբնա, Բ. Գորովակ, և Գ. այբեւէ հան :

ՔԱՐԵՐՈՒՆ ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԿԱՐԳԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԻՍ ՄԷՋ


Հ. Քարերն ինչ ձեւ ունին :

Պ. Երկրիս կեղեւին մէջ քարինք երկու կը բաժնուին ըստ որպիսութեան . կան քարեր որ խաւ ի խաւ են, և կան՝ որ չեն խաւ ի խաւ :

Հ. Քարերուն խաւերը մեկնէ : Այս խաւերուն ըստն ձեւն բնչ էր, և բնչպէս փոխուեցաւ : Խաւերուն բարձրանալով ծռելէն բնչ բան յառաջ եկաւ : Ծռած խաւերը ծածկող ուրիշ խաւեր բնչ կը ցուցնեն : Երկրիս կեղեւին իրարու վրայ խաւերէ կազմուած ըլլալն բնչ կը ցուցնէ :

Պ. Խաւ ի խաւ կը ցուցին այն քարինք որ կարգ կարգ են :

1 Զեւը խաւ ի խաւ քարերու պատկեր է .  
1 թուանշանով խաւը կարգ մը աւազաքար է .  
2 թուանշանով խաւն անոր վրայ՝ թերթաքար կամ գրի քար է . 3 թուանշանով խաւը կարգ



26h 1.

մը կրաքար է, իսկ վերի խաւն է կարգ մը աւազ :


Հ. Ի՞նչ են խաւ ի խաւ քարինք :

Պ. Խաւ ի խաւ քարինք ջրոյ յատակը նստած նիւթեր են, որ ջրոյ մէջ կազմուած ըլլալով ունին հորիզոնական կամ իբր հորիզոնական դիրք :

Այսպիսի նիստեր արդ եւս կը կազմուին հետզհետէ : Մեծամեծ գետեր կը տանին ի ծով աւազ և ուրիշ նիւթեր, յորոց կը կազմուին ծանծաղ տեղեր կամ ցած կղղիներ : Ծովեզերքը դիրքուած աւազակոյտք նոյնպէս կը բերուին ալեաց միջոցաւ :

Հ. Քարերուն խաւերը ընդհանրապէս ի՞նչ դիրքով են :

Պ. Քարերուն խաւերն ընդհանրապէս հորիզոնական չեն, այլ հակեալ, ինչպէս կը ցուցընէ 2 ձեւը :



26h 2

Որովհետեւ ասոնք ի սկզբան հորիզոնական էին, կը հետեւի թէ անոնց դիրքը փոխուած է ընական զօրութեան մը միջոցաւ :

Երբեմն կը տես-  
նենք որ խաւերը  
ծալ ի ծալ են,  
կամ կուտակ կու-  
տակ մի դինի միոյ  
ինչպէս կը ցուցը-  
նեն 3 և 4 ձեւերը:

Այսպէս մղուելով թիւրեալ և կորացեալ խաւերուն վերի ծայրերուն վրայ նոր հորի-  
զոնական խաւեր  
կը կազմուին :


Ինչպէս կը  
ցուցնէ 5 ձեւը,  
խաւք որ և է  
դիրերուն մէջտեղ  
են, բնական զօ-

րութեամբ մը բարձրանալով թիւրած և կո-  
րացած են, և յետոյ անոնց վրայ եկած են հո-  
րիզոնական խա-


ւեր որ է և դ  
դիրերուն մէջ-  
տեղ են :

Հ. Ասկէ ի՞նչ  
կը հասկցուի :


Պ. Ասկէ կը  
հասկցուի որ նաև տակի խաւերը, արտա-  
քին զօրութեամբ մը մղուելէ և հակեալ  
դիրք առնելէ առաջ, կազմուած էին հորի-  
զոնական դրիւ, և մղուելով հակեցան, վե-  
րի խաւերուն կազմուելն տռաջ : Այս ա-



26h 3



26h 4



26h 5

մէնը կը ցուցնէ երեք իրարու յաջորդող ժամանակ. առաջին՝ տակի խաւերուն կազմութեան ժամանակը, երկրորդ՝ անոնց մղուելով հակելուն ժամանակը, երրորդ՝ վերի խաւերուն կազմութեան ժամանակը :

Երկրիս կեղեւին ամէն տեղ իրարու վրայ դիզուած խաւերէ բաղկացեալ ըլլալը կը ցուցնէ թէ երկրիս կեղեւը, կազմուելէն մինչեւ ցարդ, շատ փոփոխութներ կրած է :

Հ. Այս քարերը որ խաւ ի խաւ չեն՝ քանի տեսակ են : Յիշէ հրային քարերէն ոմանք :

Պ. Քարեր որ խաւ ի խաւ չեն՝ երկու տեսակ են, առաջին անոնք որ երբէք խաւի ձև էին. երկրորդ՝ անոնք որ շատ դարեր առաջ խաւի ձեւ էին, և հիմա չեն :


Հ. Առաջին տեսակ քարերուն վրայ Բնչ գիտելիք կայ :

Պ. Առաջին տեսակ քարեր ժամանակաւ երկրիս մէջ հալած էին, և ապա դուրս նետուելով եկան մինչեւ երկրիս երեսը, և այս պատճառաւ կը կոչուին հրային +արին+ : Այս տեսակ քարեր երկրագունդին մէջ շատ տեղեր կը գտնուին, մանաւանդ լեռնային երկիրներ :

Այս տեսակ քարերու երեւելի օրինակ են ֆալիսէյտ կոչուած ապառաժներն չուտսոն գետին մօտ, և Ֆինկալի այրը Սկովտիոյ մէջ ծովուն մօտ :

Հ. Երկրորդ տեսակ քարերուն վրայ Բնչ գիտելիք կայ :

Պ. Երկրորդ տեսակ քարեր ի սկզբան խաւ



ՖԻՆԿԱԼԻ ԱՅՐԸ

ի խաւ էին, և յետոյ սաստիկ ջերմութեամբ և ձնշմամբ խաւի ձեւը կորուսին, և կը կոչուին գունդերպետ քարինք . զորօրինակ, հրային քարի տեսակ մը որ դեռ հալած է, երբ երկրիս կեղեւին պատառուածներէն դուրս կը մղուի, մօտակայ խաւերն այնպէս կը ջեռուցանէ, որ անոնց խաւ ի խաւ ձեւը բոլորովին կ'աւրուի :

Գուարց և Փէլտսապաթ փոխակերպեալ քարի տեսակներ են :

Հ. Բրածոյ Բնչ է :

Պ. Բրածոյ կը կոչուին գործարանաւոր մարմինք, այսինքն տունկք և շնչաւողք, որ երկրիս խորը կը գտնուին քարերու մէջ :

Հ. Բրածոյք ինչք յառաջ եկած են :

Պ. Բրածոյք երկրիս անցեալ ժամանակ-ներուն մնացորդներն են, որ իրենց տնկոյ կամ չնչաւորի բնութիւնը փոխելով, գործա-րանաւորէ եղած են անգործարանաւոր, այ-սինքն ի քար փոխուած, և այս պատճառաւ կը կոչուին նաեւ արացեաւ:

Բրածոյ կը գտնուի խաւ ի խաւ քարերու մէջ միայն, ոչ երբէք հրային քարերու մէջ. նոյնպէս փոխակերպեալ քարերու մէջ դուն ուրեք կը գտնուի, քանզի այս քարերուն խա-ւերը եղծանող փոփոխութիւնը չնջած է այն խաւերուն մէջ գտնուած գործարանաւոր մարմնոց մնացորդները :

Այն գիտութիւնը որ կը խօսի շատ հին ժա-մանակներ երկրիս վրայ ապրող գործարանաւոր մարմնոց, այսինքն չնչաւորաց և բուսոց վրայ, կը կոչուի հին է-հաբանունիւն (բալենուլնի):

Հ. Երկրիս երդեւի կաղմութեան չորրորդ միջոցը Յնչ կը կոչուի :

Պ. Երկրիս երդեւին կաղմութեան չորրորդ միջոցը կը կոչուի ածիւտու միջոց : Այս միջոցին բրածոյից մէջ կը տեսնուին երկակենցաղք, միջատք, ինչպէս մարախ, բգէզ, նաեւ խե-ցեմորթք, ինչպէս խեչափառ և խեցգետին : Բայց այս միջոցն ուրիշներէն կը տարբերի մա-նաւանդ քանի մը տեսակ բոյսերով, որպիսի են եղեւնոյ տեսակներ, որ առատութեամբ կը գտնուին ածխացեալ . այս տունկերէն է

Քանքային ածուխը : Որովհետեւ երկրիս ջեր-մութիւնը շատ աւելի սաստիկ էր յայնժամ քան հիմա, և ածխանիւթն՝ օդին մէջ առատ, յեշեալ տունկերը կ'ածէին յոյժ : Հասարակա-ծէն մինչեւ բեւեռները տերեւախիտ և ման-րածաղիկ ծառերու մեծամեծ անտառներ ծած-կած էին յայնժամ երկրիս երեսը : Այս մի-ջոցին մէջ երկրաբանական մեծամեծ յեղա-փոխութիւնք ստէպ կը պատահէին, ուստի և այն անտառներուն ծառերը սաստիկ հեղեղ-ներէ տապալած և մնացած են ծովացեալ ջու-րերուն յորդութեան տակ, և ժամանակ անց-նելով փոխուած են յածուխ :

#### Ա. ՔԱՐԻՆՔ

Հ. Քարի գլխաւոր տեսակներն որոնք են :  
Պ. Քարի գլխաւոր տեսակներն են . 1. Կր-պէն քարեր, 2. Քայլտիունքոյ քարեր, 3. Խուռոր քա-րեր, 4. Կուեր և հողէր, 5. հեփեստեան քարեր և 6. պարուսական քարեր :

#### Ա. Կրային քարեր

Հ. Ո՞ր քարեր կրային կը սուխին :  
Պ. Կրային կը սուխին այն քարերն որոց բա-ղագրութեան մէջ կիր կայ, ինչպէս՝ բուռ-, մարմարին, կուճ կամ ողաբասոր, կուճ, գլուխրու-նեան առ :

Հ. Այս նիւթերն ուր կը գտնուին :  
Պ. Բառաւ կը գտնուի ամէն տեղ : Այս քարն է զոր այրելով կը փոխեն ի կիր :

Մարմարինն այլեւայլ գոյն է : Ազնիւ է Բարոս կղզւոյն , Ատտիկէի , Գարրարայի (Իտալիա) , Բադիզպոնի (Գերմանիա) , Սպանիոյ Մոլինա քաղաքին և Գորտովա եւ կրանատա գաւառներուն ազբակ մարմարիոնը : Գունաւոր մարմարիոններէն անուանի է Օսնապլիկի (Գերմանիա)՝ ուր , Դիբոլի և Ֆիորէնցայի՝ կառաւ , Սիէնայի՝ դեղն Վերոնայի՝ հարժէ , Ճենովայի՝ պէտուայի և բեղդիոյ Հէնոյ և Նամուր գաւառներուն ժոր մարմարիոնը : Տեսակ մը խայտախարիւ մարմարիոն է որութեւ կոչուած քարը :

Կաճ , ընտիրը , կը գտնուի Գորսիդա , Սպանիա , Սիէնա , Մալդա և Եղիպտոս :

Կաճ , առատ է Գաղիոյ Յպ նահանգը և Մանշի մօտ :

Վէճաբունեան +արերու ծանօթ տեսակը Պալիէրայինն է :

Կրային է նաեւ էաճը որ շատ Երկիրներ կը գտնուի :

### ԴԱՍ Ի Ե ·

#### 2. Գայլախազեայ քարեր

Հ. Ո՞ր քարերը գայլախազեայ կ'ըսուին :

Պ. Գայլախազեայ կ'ըսուին այն քարերը ուրոց բաղադրութեան մէջ ժայլաւն կայ , ինչպէս են՝ ազատորի տեսակներն , այսինքն հազիճ , առլաւար , և քանի մը պատուական քարեր , ինչպէս զանակն , ակար , յասովէն , ոբեակն :

Հ. Այս քարերն ուր կը գտնուին :

Պ. Ուշաւար (գուարց) կը գտնուի Երկրիսամէն մասերուն մէջ . Երկրիս կեղեւին գրեթէ Երրորդ մասն այս քարէն է :

Կաճէ կը կոչուին աւազահատք գայլախազի (աշւեն նուշ) , որ կը ծածկեն ծովերու եղերք , գետերու յատակը , և աւազուտ անապատներ , մանաւանդ Ափրիկէ :

Սաւար (նոյն աւազն է մածեալ և քարացեալ . այս քարը կը գործածուի յատակներու , յեսանի , այլովքն հանդերձ :

Վաճառի կամ ան վաճի (պիլոր թաշը) բիւրեղի կամ ապակւոյ նման քար է , որոյ դըլխաւոր տեսակներն են Պահեմոյ կարկենանը (Եագութ) . սորա ընտիրները կը գտնուին Պրազիլիա և Սիպերիա :

Ահա (պապա գուրը) , նոյնպէս պատուական քար է . ընտիր տեսակներն են +ազիճեան ակատ (Պալւան) , արտէն (ագիդ թաշը) և Եղիճնաւար (սիւլէյմանի) որ կը գտնուին Ասիա :

Յաճառի , ազնիւ քար է խայտախարիւ . ընտիրը կուգայ Զինու թամարիստանէ :

Արեւանի (այնի շէմն) , որ լուսոյ մէջ Երփն Երփն կ'երեւի , և կ'եղէ նոյնպէս արեւելը :

ԴԱՍ Ի Բ.

3. Խառոտ քարեր

Հ. Ո՞ր քարեր կ'ըսուին խառոտ :

Պ. Խառոտ կ'ըսուին էրաստոյ (Փէլտ ապաթ) տեսակ քարեր, յորոց սմանք կը զատուին թերթ թերթ, այլք՝ թել թել:

Հ. Թերթ թերթ զատուող տեսակներն ու ընքնք են :

Պ. Թերթ թերթ զատուող տեսակներն են -

Լուսատուր (ագ մատէն) ապակւոյ պէս թափանցիկ է, և կը գործածուի, իբրեւ ապակի պատերազմական նաւուց :

Սեւարդ (քարա թաշ) կոչուած ծանօթքարը որ կը գործածուի յարկեր ծածկելու, նաեւ գրի համար ի գպրոցս . կը գտնուի Գաղիոյ հիւսիսային արեւելեան կողմը, Արտէն կոչուած անտառային երկիրը :

Այժմ (ամփէլիդ), որ և կը կոչուի իտալական հող, և կը գործածուի տեսակ մը խոշոր մատիտ շինելու հիւսանց համար :

Օյստոր (Երլան մէրմէրի) որ շատ տեղեր կը գտնուի մանաւանդ իտալիա, Զին, և կը գործածուի այլեւայլ անօթներ շինելու :

Հ. Թել թել զատուող քարը ո՞րն է :

Պ. Թել թել կը զատուի անկէն կամ կառաստոր (Եանմազ թաշ) կոչուած զարմանալի քարը, որոյ առաստ բովեր կան Եւրոպա Գորսիդա և Եւրէա կղզիները : Այս քարին թելերէն Զինացիք կը գործեն կտաւ :

ԴԱՍ Ի Բ.

4. Կաւեր եւ հողեր

Հ. Կաւ ո՞ր նիւթերուն կ'ըսուի :

Պ. Երբ քար մը թոյլ և մատղող է, կաւ (գղ. արձէւ) կը կոչուի : Տեսակ տեսակ կաւերէն շատերը կը գործածուին արուեստներու մէջ : Բրուտոք կը գործածեն կաւի շատ տեսակները խեցեղէն անօթներ շինելու : Ընտիր տեսակ կաւ են :

Յափէն (Փաղփուրի թօփրաղը), որոյ աղնիւը կը գտնուի Զին, և կը գործածուի յախճապակի շինելու : Նաև Գաղիա ունի յախճի պատուական բովեր լիմնիմի մօւս :

Շիտուր որ առաստ է Գաղիոյ Եռն գաւառը, և կը գործածուի կարմիր մատիտ շինելու :

Սինենն իտու, որ է Երկաթախառն, և կը գործածուի իբրեւ սեւ ներկ :

Հ. Հողերուն մէջ ո՞րն է յիշուելու արժանի :

Պ. Յիշուելու արժանի հող են Շառնին հող (մագնէզիա) որ կը գործածուի իբրեւ դեղ, և ծովականին (լիւլէ մատէնի) որմէ կը շինուի ծխափող :



### ԴԱՍ Լ.

5. Հեփեստեան քարեր

Հ. Ո՞ր քարեր կը կոչուին Հեփեստեան :

Պ. Հեփեստեան կը կոչուին այն քարային նիւթեր որ հրաբուղիներու արդիւնք են, ինչպէս .

ԱՆԻՇՏՐ (նիշատը) որ հրաբուղիներէ ժայթքած նիւթերէ կը հանուի. բայց արուեստից մէջ առաջին անգամ գործածուած անուշադրը բերուեցաւ Ամմննի ովասիսէն (Ափրիկէ) . ուստի կը կոչուի Ամմննեան աղ :

ՊՊՂԵԼ (շապ) որ նոյնպէս կը գտնուի հրաբուղին տեղեր, գլխաւորապէս իտալիա :

ՀԻՄԻՉ (կամ ԲԱՍՏԱՆ) (սիեահ մէրմէր. մէջէնք թաշը) որ առատ կը գտնուի ուր մարած հրաբուղիս կայ : Այս է փորձաքարը :

ԶԵԿԻՉ (փօմզա թաշը) քար թեթեւ, ծակոտկէն, կը գործածուի մաքրելու, և կը գտնուի հարաւային իտալիա, թուշ կոչուած կղզիները՝ նառօլիի մօտ, և Լիբարեան կղզիները :

### ԴԱՍ ԼԱ.

6. Պատուական քարեր :

Հ. Ո՞յք են գլխաւոր պատուական քարեր :

Պ. Գլխաւոր պատուական քարինք են,

1. ՏՊՂԻՆ (թօփաճ) որ կը գտնուի մանա-

ւանդ Պրաղիլիա, Սաքսոնիա և Սիպերիա :

2. ԳԾՃԱՎ (փիրուզէ) որոյ անուանի բովեր կան Պարսկաստան :

3. ԵՐԵՎԱՆ (ընկեամիզ նէճէֆ) որոյ աղնիւ տեսակը կը գտնուի Անդղիա, և կը գործածուի այլեւայլ անօթներ և զարդեր շննելու :

4. ԶԻՐԱԿԻ (որոյ մաքուր կանաչ տեսակը կը գտնուի գոլոմզիա (հարաւային Ամերիկա): Զմիխտոյ ծավագոյն կապոյտ տեսակն է բէ-բէւ (պէզատի) կոչուած քարը որ առատ է կիմոնի մօտ և Սիպերիա :

5. ՆԱԽԱՎ (սէյլան), որոյ ազնուագոյն տեսակը կ'ելլէ Ասորւոց երկիրը :

6. ՊՐԵԴԻՖԱՆ ՀԱՅԻ-ԴԱ (կէօք եագութ), որ կը գտնուի Պրաղիլիա :

7. ԼՐԵՎԻՉ (լաճիկէրա թաշը), որ կը գործածուի իրրեւ գեղեցիկ կապուտակ ներկ : Այս քարին գլխաւոր բովերն են Ասիա, մանաւանդ Պոլոր կոչուած լեռները :

8. ԶԵԿԻՆ (կոչուած քարը որոյ տեսակներն են յակին (սարը եագութ) և բէնանի՝ կը գըտնուի Գերմանիա :

9. ՈԱՊԻՆ, աղամանդէն ետքը կարծրագոյն մարմինն է, որոյ տեսակներն են աբեւեւն հարկենան, աբեւելենան ողողինան, շաբիւլան, աբեւեւն մէջեսէն, աբեւելենան զբուխո, բոլոր այս պատուական քարինք կը գտնուին Ասիա, մանաւանդ Հնդկաստան, Գաղիա՝ Երբեմն : Արձին (սըմբարէ), ոսպնական աղնիւ տեսակներէն

մին է , որոյ փոշին կը գործածուի մետաղ ,  
ապակի եւայլն փայլեցնելու , և կը գտնուի  
Սաքսոնիա և Նաքսոս կղզին :

10. Սուրբուն (լալ) , ընտիր տեսակը կը գըտ-  
նուի Ասիա , մանաւանդ թուրքեստան և Հընդ-  
կաստան :

Հ. Ուրիշ Բնչ ծանօթ քարեր կան :

Պ. Ծանօթ քարեր են .

Հարաւարը (սէջլան) որ շատ տարածուած է .  
գեղեցիկ մէկ տեսակն է Եգիպտոսի կարմիր  
հատաքարը :

Ծագայն առ որ կը հանուի թէ ծովէն և թէ  
ցամաքէն . ցամաքայինն է բիւրեղանման փայ-  
լուն և կը կոչուի աղաւանէ : Լորէն , ֆրանշ Գոն-  
դէ (Գաղիա) , Գերմանիա , մանաւանդ Կալի-  
ցիա ունին երեւելի բովեր աղի : Այս աղը կը  
դանուի նաեւ թանձը կեղեւանման Ափրիկէն  
և Ասիոյ գաշտերէն յոմանս , մանաւանդ Սա-  
հարա , Հապէշ և Պարսկաստան :

### ԴԱՍ 18.

#### Բ. ԳԼԽԱՒՈՐ ՄԵՏԱՂՔ

Հ. Գլխաւոր մետաղք որո՞նք են :

Պ. Գլխաւոր մետաղք են՝ լնուակի , առի , աբ-  
ժան , պղնչ , առիկի , երենի , երայր , անագ , հապար ,  
չինի , ծաբէր , զաւանակ և զաւէկ : Ոսկին և արծա-  
թըն աղնուագոյն են քան զայլս , իսկ միւս  
մետաղք , գրեթէ բոլորը , օդակար և պի-  
տանի են , մանաւանդ երկաթը :

Հ. Եւրոպայի ո՞ր երկերներն ունին այս մե-  
տաղներէն :

Պ. Լասուկ (փլաթէնա) ունի Բուսիա (Ուրալ  
լերինք) :

Ուկի ունին Բուսիա և Աւստրիա : Ալպեան,  
Պիւրենեան և Սեւենեան լեռներէն ինող գե-  
տերուն մէջ եւս կը գտնուին բարակ բարակ  
կտորուանք ոսկւոյ :

Աւելի ունին Բուսիա , Աւստրիա , Գերմա-  
նիա (Սաքսոնիա) և Նորուեկիա :

Պղնչ ունին Բուսիա , Շուէտ , Գերմանիա  
(Սաքսոնիա) և Աւստրիա :

Մարտիկ ունին Սպանիա և Աւստրիա :

Երես ունին Բուսիա , Գաղիա և Շուէտ ,  
մանաւանդ Անդղիա որ առաջին է այս կող-  
մանէ :

Երայ (պիլլօր տէմիրի) ունի Գաղիա :

Երաք ունին Անդղիա , Գերմանիա (Սաքսո-  
նիա) և Աւստրիա :

Կապար ունին Անդղիա , Գերմանիա (Բրու-  
սիա) , Աւստրիա և Սպանիա :

Զին ունին Գերմանիա (Բրուսիա) Անդղիա ,  
Աւստրիա և Բեղդիա :

Ծարէր (ըասթըրդ թաշը) ունին Գերմանիա  
և Գաղիա :

Չառնանէ (զըրլըրդ թաշը) ունին Գերմանիա  
(Սաքսոնիա) , Շուէտ և Աւստրիա :

Չառէն (սըչան օթու , զըռնըրդ) ունի Գեր-  
մանիա :

### ԳԱՍՏԱԿ.

Հ. Ասիոյ ո՞ր երկիրներն ունին այս մետաղ-ներէն :

Պ. Ո՞ւ ունին Ուրալ և Ալդայի լեռնք ,  
Սիպերիա , Հնդկաստան և Մալեզիա :

Արժան ունին Ասիոյ շատ երկիրներն , յա-  
նուանէ՝ Սիպերիա :

Պահանջ ունի ձաբոն :

Անադ՝ Մալաքքայի թերակղղին և Մալե-  
զիա :

Հ. Ամերիկայի ո՞ր երկիրներն ունին մետաղ :

Պ. Ամերիկայի մէջ առատ են ազնիւ մե-  
տաղք , մանաւանդ ոսկին : Այս մետաղն ու-  
նին Ամերիկայի գրեթէ բոլոր երկիրները ,  
զորօրինակ Միացեալ նահանգները (Գալի-  
ֆոռնիա) , Մեքսիկոյ , Պրազիլիա , Գուլումպիա ,  
Պոլիտիա , Զիլի և Բէրու :

Հասուն ունին Պրազիլիա , Գուլումպիա , Պո-  
լիտիա , Զիլի :

Արժան ունին Մեքսիկոյ , Պոլիտիա , Բէրու  
և Լա Բլագա :

Պահանջ ունին Միացեալ նահանգները և Զիլի:  
Մադին , անադ և կապոր ունին Միացեալ նա-  
հանգները :

Հ. Ափրիկէ ի՞նչ մետաղ ունի :

Պ. Ափրիկէ ունի ոսկւոյ փոշի՝ առատ ,  
մանաւանդ կուխնէա և Մողամպիք . ունի նա-  
եւ պղինձ :



### ԳԱՍՏԱԿ.

Գ. ԱՅՐԵԼԻ ԿԵՇ ՎԱՌԵԼԻ ՀԱՆՔ

Հ. Ոլո՞նք են գլխաւոր վառելի հանք :

Պ. Գլխաւոր վառելի հանք են . ՃՃՈՒՅ , ա-  
ճուան , կուպր և ասի :

Հ. Ծծումք ուր կը գտնուի :

Պ. Ծծումք կը գտնուի յաճախ հեփես-  
տեան (հրաբղիսի) երկիրներ , ինչպէս հարա-  
ւային իտալիա , Սիկիլիա և իտանտա :

Հ. Ածուխ քանի՞ տեսակ է :

Պ. Ածխոյ տեսակներն են , արամանոյ , բովու-  
ծուն , արածուն , գրանուն , գոյուն և խոյժ :

Հ. Ածխոյ այս տեսակներն ուր կը գտնուին :

Պ. Արամանոյ (էլմաս) կը գտնուի Հնդկաս-  
տան , Պոռնէոյ , Պրազիլիա և Ուրալ լեռները :

Բավանուն (ուժագ մատէն քէօմիւրիւ) կը  
գտնուի յաճախ գրեթէ ամէն երկիր , մանա-  
ւանդ Անդզիա :

Գարանուն որ բովածխոյ ստորին տեսակն է՝  
յաճախ է Ամերիկայի Միացեալ նահանգները :

Գրանուն որ նման է կապարի՝ առատ է  
հիւսիսային Անդզիա , և կը գործածուի մա-  
տիտ շինելու :

Փայտեղ , տեսակ մը ածուխ է փայտի հիւ-  
թէ կազմուած :

Խոյժ (թուրպ) , նոյնպէս ածուխ է տնկա-  
յին նիւթերէ կազմուած :

Հ. կուպրը քանի՞ տեսակ է և ո՞ւր կը դանուի :

Պ. կուպր (Եէր սագըզը, գուփիր) երկու տեսակ է.

Ա. Նաւի կամ +աբեռ (նէֆթ, բէդրօլ) : Այս վերջինը գետնէն կը բղխէ իբրեւ աղբիւր և կը դանուի առատ իտալիա, Սիկիլիա, Աւստրիա, Վալաքիա, Զանդա կղղին, Կասպից ծովիա, Հայաստան, Հնդկաշխն, Չին, Ճ'արոն և մավուն մօտերը, Հնդկաշխն, Չին, Ճ'արոն և մաւանդ Ամերիկայի Միացեալ նահանգները :

2. Կուպր (ասփալդ) որ մերթ ծովակներու վրայ կը լողայ, ինչպէս Մեռեալ ծովուն վրայ, և մերթ երկրէն կ'ելէ իբրեւ հանք :

Հ. Սաթի ինչ է և ո՞ւր կը դանուի :

Պ. Սաթը որ կը թուփի թէ հին տունկերու խիճն է՝ կը դանուի Պալդիկ ծովուն հարաւային եղերը :

## ԴԱՍ ԼԵ ·

### 2. ԳՈՐԾԵՐԸՆԾԻՈՐ ՄԵՐՄԻՆՔ

Հ. Գործարանաւոր մարմինք քանի՞ տեսակ են :

Պ. Գործարանաւոր մարմինք կրկն են, 1. բոյս և 2. նշանուր :

### 3. ԲՈՅՍՔ

Հ. Բոյսք ամէն գօտոյ մէջ կը դանուին :

Պ. Կան բոյսք, և պիտանեգոյնք մարդ-

կան, ինչպէս արմատիք, որ գրեթէ ամէն կիմայի մէջ կը բումնին : Կան նաև բոյսեր որ այս ինչ կամ այն ինչ կիմայի մէջ միայն կը հասնին, ինչպէս արմատնէն, հացնէն, համեմուն, արամանուն, հնդկանուն, շատարէն եղէն և համեմայն տունկեր :

Հ. Տօթագին երկիրներ ինչպէս են բոյսք :

Պ. Տօթագին երկիրներ, ինչպէս այրեցեալ գօտոյն մէջ, բոյսք աւելի զօրեղ և գեղեցիկ են : Հոն սիղաբոյսք են ծառանման . վայրի յարենուք (էյրէլթի օթու) կը բարձրանայ հոն իբրեւ արմաւենի . հոն ծաղիկք են աւելի պայծառագոյն և հոտաւէտ, պտուղք՝ աւելի համեղ, տերեւէք՝ աւելի մեծ և վայելուչ :

Հ. Տաք երկիրներու բոյսերն որո՞նք են :

Պ. Տաք երկիրներու, այսինքն՝ այրեցեալ գօտոյն և բարեխառն գօտիներու հարաւային մասին բոյսերը շատ են . ծանօթագոյններն են .

4. Արեւ (բրինձ), հասարակ է արեւագարձի երկիրներուն խոնաւ և ջրոտ տեղերը, նաեւ հարաւային եւրոպա, մանաւանդ թոյ գետոյն կողմերը : Մեծ առեւտրոյ նիւթ է :

5. Գեղարկանչոր (փաթաթէս). բուն հարաւային Ամերիկայի լեռնային մասերուն բերքն է . զարդիս տարածուած է բու-



ՈՐԻՉԻ ՑՈՒՆԿ

լոր եւրոպա , և երկրիս ուրիշ մասերը :  
Յ. Ծիռիսոր (թիւթիւն) . բուն հարաւային  
Ամերիկային է , բայց շատոնց սկսած է մշակ-  
ուիլ շատ տեղեր : Բաւական մեծ առեւտրոյ  
նիւթ է :



ՆԻԱԽՈՑԻ ՏՈՒՆԿ

(Եափա) . Արքիպեղագոսի կղղեաց (Սագըզ , Կի-  
րիտ) և Ափրիկէի հիւսիսային եղերաց նարինջք :  
Այս պտղէն ունի նաեւ Ամերիկա :

Նարինջ և կիտրոն ունին այլեւայլ տեսակ-  
ներ , ինպէս նուբնջ և կտրտուէի (աղաճ գա-  
վունու) որ նոյնպէս հարաւային տաք եր-  
կիրներու բերք են : Հնդէն նաբնջ կոչուած տե-  
սակը որ մեծ և ախորժահամ նարինջ է՝ կը  
դտնուի հարաւային Ափրիկէ (Մաւրիտիոս և  
Միութեան կղղիները) :

5. Զիւնէն . կը սիրէ մանաւանդ Միջերկրա-  
կանին ծովեղերեայ և Ասիոյ տօթագին եր-  
կիրներն : Զիթապտղէն կը հանուի Անը :

4. Նորջնէ (փօրթօ-  
գալ) և կտրունէ (լիմին) .  
Են բուն բերք հարաւային  
արեւելեան Ասիոյ , թե-  
րեւս Մալեղիոյ . բայց  
կը բունին նաեւ ուրիշ  
տաք երկիրներ : Եւրո-  
պայի մէջ յարգի են Մալ-  
դայի , Բորդոկալի և Ա-  
սորեան կղղեաց նա-  
րինջք . իսկ արեւելք՝  
Պաղեստինու եղերաց

6. Թունէ , հասարակ տեսակները կը դըտ-  
նուին բարեխառն երկիրներ : Բայց ունի քա-  
նի մը զարմանալի տեսակներ , ինչպէս Հնդէն  
Շվեյցարիա , որոյ մի միայն տունկը կրնայ անտառ  
կազմել . քանդի մի ծառէ շատ ոստեր խո-  
նարհելով մինչեւ դետին , կ'արձակեն արմատ ,  
և լինին ուրոյն ծառեր , և այսպէս կը բազ-  
մանան յոյժ : Կայ նաեւ տեսակ մը թղենի ,  
որ կը կոչուի նուբնջաւ կամ Պարագայէ թղենի ,  
և է հասարակ Սէլյան կղղին :

7. Թունէ . ի բնէ տաք երկիրներու բոյս է ,  
բայց կ'աճի նաեւ բարեխառն երկիրներ : Թը-  
թենւոյ մէկ տեսակին կեղեւէն Զինացիք և  
ձարոնք կը շինեն թուղթ և լաթ : Թ.թենւոյ  
մեծ պիտանութիւնը շերամներու համար ար-  
դէն ծանօթ է :

8. Նունէն . կը բունի ամէն տաք երկիր ,  
մանաւանդ Եւրոպայի և Փոքուն Ասիոյ հարա-  
ւային եղերը (Զմիւռնիա) :

9. Մրտնէ (մէրսին աղաճը) որ նոյն ցեղէն  
է՝ կը բունի նաեւ աւելի դէպ ի հիւսիս :

10. Դրանէ . այս տունին այլեւայլ տեսակ-  
ներն յառաջ կու գան նաեւ բարեխառն գօտ-  
ոյն հիւսիսակողմերը . կան սակայն դդմոյ  
տեսակներ , ինչպէս Յարուէ (գարբուզ) , որ  
տաք երկիրներ կը սիրեն :

11. Յունապի (հիւննապ) . առատ է հիւսիսա-  
յին Ափրիկէ . կը բունի նաեւ հարաւային Եւ-  
րոպա :

ՊԱՍ ԼԶ.

Հ. Տար Երկիրներ ուրիշ թնջ ծանօթ տուն-  
կեր կան :

Պ. Տար Երկիրներու ծանօթ տունկեր են  
նաեւ,

Դ. Արհանձնէ . մեղի ծանօթ տեսակները կը



ՊՏՂԱՑՈՒ ԱՐՄԱԿԵՆՆ

բունին հիւսիւսային Ափրիկէ , հարաւային  
Ասիս (Արաբիա) , շատ քիչ նաեւ հարաւային  
Եւրոպա :

Արմաւենին ունի զարմանալի տեսակներ  
որ կը գտնուին արեւադարձի երկիրներ : Շա-  
տերուն ոչ միայն պտուղն , այլեւ տերեւնե-  
րը , ոստերը , փայտը , հիւթը , շատ բաներու  
կը գործածուին : Մի տեսակէն որ արեւամը-  
տեան Ափրիկէ կը գտնուի՝ կ'ելլէ ընտիր իւղ .  
ուրիշ տեսակի մը ծուծէն կամ ուղեղէն կը  
շինուի առկա կոչուած տեսակ մը նաշին : Մի-  
միայն ծառէ կրնայ առնուիլ 100է մինչև 175  
քաշ սակոյ : Այլեւայլ տեսակ գեղեցիկ ար-  
մաւենիներու ոստերն կը գործածուին գաւա-  
զան և հովանոց շինելու :

Իբր 600 տեսակ արմաւենի կայ ճանչցուած  
և կը կարծուի թէ նոյնչափ եւս կինայ գլո-  
նուիլ դեռ անծանօթ :

2. Բամբակնէ . հաւանականապէս չնդկաս-  
տան է բամբակի բուն հայրենիքը , թէպէտ  
այս տունկն հիմա ընդհանուր  
կը մշակուի իբրեւ ծառ և  
կ'ածի տօթագին Երկիրներ ,  
ինչպէս Զին , Ափրիկէ և Ա-  
մերիկայի հարաւային մասն :  
Աւելի տարածուած է բամ-  
բակի տունկը որ կը մշակուի  
հարաւային Եւրոպա , Եդիս-  
տոս , հարաւային Ասիա և  
մանաւանդ Ամերիկայի Մի-  
ացեալ նահանգներն : Բամ-  
բակը մեծ և ընդարձակ նիւթ  
է տարազագործութեան և առեւտրոյ :



ԲԱՄԲԱԿԻ ՏՈՒՆԿԸ

3. Կոչենի , որոյ հատերէն է առաջ (գահուէ) կոչուած ըմպելին , է տունկ բնիկ արեւելեան Ափրիկէի : Շատ կանուխ տարուած է Արաբիա , ուստի կուդայ հուա (եէմէն) կոչուած ընտիր տեսակը : Հոլանտացիք բերին այս տունկը ձաւա կղզին , ոմանք հասուցին նաև Եւրոպա ջերմոցներու մէջ : Անցեալ դարուն




ԽԱՀՈՒԵԻ ՑՈՒՆԿԸ

Ակնզբը տարուեցաւ Անդիլեան կղզիները (ձամակիա եւ այլն) , ուստի տարածուեցաւ Ամերիկայի տաք երկիրները : Այս տունկն է ծառ հնդետասան կամ քսան ոտք բարձր , մշտադաշտ ծառ է , և երբ կուտայ ծաղիկ որ է սպիտակ և անուշահոտ , կը թուի ձիւնով ծածկուած : Հարաւային Ափրիկէի Մաւրիտիոս

և Միութեան կղզիք կը հասցունեն առատ այս բերքէն : Սուրճը մեծ նիւթ է առեւտրոյ :

4. Շատարէ Եղեդն . բուն հարաւային Ասիոյ բերք է : Միջին դարուց մէջ սկսաւ մշակուիլ հարաւային Եւրոպա , յետոյ Մատերա և Գանարեան կղզիներն և անտի , ԺԶ. դարուն ըս-



ՏԱՐԱՐԻ ԵՂԵԴ

ԿԵՊՐ (1506) , տարուեցաւ Սան Ժոմինկոյ (Ամերիկա) , և արագ արագ տարածուեցաւ Ամերիկայի հարաւային Երկիրներն :

Շաքարը ծանօթ էր հնդկաց վաղնջուց դարերէ հետէ . բայց թոյնք և Հռովմայեցիք կը գործածէին զայն իբրեւ դեղ միայն , և կը համարուէր իբրեւ չնաշխարիկ բան մը :

5. Պաշեղնէ . բուն և գլխաւոր տեղն է հա-

բաւային Ասիա և արեւմտեան Ովկիանիա :  
Հնդիկք և Մալայեցիք պղպեղի մէկ տեսակին  
տերեւները կը ծամեն : Այս տունկը պատա-  
ռող թուփ է, կը բերէ թխագոյն կարմիր  
ողկոյզներ, որոց խրաքանչխրը կը պարունա-  
կէ հունտ մը : Այս ողկոյզներն երբ չորնան,  
կրլան սեւ պղպեղ : Պղպեղը ընդհանրապէս  
կը քաղուփ տարին երկու անգամ : Պղպեղի  
հունտը գտնուած է Հնդկաստան, Մալապա-  
րի եզերքն՝ ի վայրի :

6. Սարշեն (տէֆնէ) . հասարակ է տաք  
երկիրներ : Ապողոննեան կրչուած տեսակը կը  
բուսնի նաեւ հարաւային Եւրոպա : Հասարակ  
տեսակը կը գտնուփ բարեխառն երկիրներ՝ ի  
վայրի :

Սարշենոյ տեսակին են Դաբէնէնի (դար-  
շին) որ կը գտնուփ Սէյլան կղղին, և որոյ կե-  
ղեւէն է մեր Հնաառնը (դարշին) :

Նոյն տեսակին է նաեւ +ադէնէն որ կը  
բուսնի Մալէզիա, և որոյ խիժն է +ադուր  
(քետֆիրի) :

Նոյն տեսակին է նաեւ Հինչին որ կը բուսնի  
մանաւանդ Մոլուքեան կղղիներն : Ասոր կու-  
տըն է հադին ընդու (հինտիսթան ճէվիղի) :

7. Եբէնո (ապանօղ) . հին և նոր աշխարհի  
տաք երկիրներու ծառ է, ի վաղուց ծանօթ :

8. Շուշան կամ կանի (սուսամ) . կը բուսնի  
Եգիպտոս և Արեւմտեան Ասիա : Սերմը, և  
մանաւանդ խւըր գործածական են արևելք :

9. Եղջեն (քէչի պույնուզու) և դամարէնէ

(թէմրի հինտի), հասարակ են Միջերկրակա-  
նին եղերքը : Կը գտնուին նաեւ Ափրիկէ և Ա-  
սիա :

10. Զոյէ դունէ . է բերք Զինու, Ճարոնի ,



Թէթի ՏՈՒՆԿԸ

և վերին Ասսամու : Երկրիս ուրիշ մասերուն  
մէջ եւս ուրեք ուրեք կը մշակուի : Եթէ իրեն  
թողուփ, այս տունկը կրնայ հասնիլ մին-  
չեւ երկոտասան ուրք բարձրութեան, բայց  
զայն մշակողները չեն թողուր անոր աճիլ ա-

Նելի հինգ կամ վեց ոտք բարձրութեան :

Զինու և ծաբոնի մէջ չայն արդարեւ եւ զած է աղդային ըմպելի իրը 1000 տարիէ հետէ , և կը գործածեն առանց շաքարի և կաթի , ամեն կերակրոյ ատեն և օրուան ամեն ժամերուն , է մեծ առեւտրոյ նիւթ :



### ՊԱՍԼԷ .

Հ. Այրեցեալ գօտւոյն մէջ և ուրիշ շատ տաք երկիրներ մեղի անծանօթ ինչ զարմանալի տունկեր կան :

Պ. Այրեցեալ գօտւոյն մէջ և ուրիշ շատ տաք երկիրներ մեղի անծանօթ զարմանալի տունկեր են ,

4. Արտայանյոր (անանաս) , բուն Ամերիկայի (Բէրու) տունկ , կը բուսնի Հնդկաստան , պլատուղը բաւական ծանօթ :



ԿԱՌՈՒԵՆԻ

2. Խառուենի : Ասոնք ընդհանրապէս մանր և նեղատերեւ թուփ են : Կը բումնին գրեթէ արեւելեան կիսագունտին մէջ միայն և բազմութեամբ աճելով կ'ընծայեն շատ գեղեցիկ տեսարան :

3. Արտամ (պէլէսան) , թուփ Արաբիոյ , Եղիպտոսի և Ասորուց երկ-

րին : Այս տունկէն կ'ելլէ բազառան կոչուած հոյզը : Յիշուելու արժանի է Եթովպիոյ ապրսամե որ կու տայ զմուռս կոչուած խժային հիւթը :


4. Պառապաղ : Այս ծառը որ կը բուսնի Ավրիկէ այրեցեալ գօտւոյն տակ , Բունը 50է մինչեւ 60 ոտք բարձր , կ'ունենայ երբեմն 25է մինչեւ 30 ոտք տրամագիծ : Ծառին Գլւխոյն , այսինքն տերեւախիտ մասին ընդարձակութիւնն է 150 ոտք :

5. Լէռակնի , կը բուսնի գրեթէ ամէն տաք երկիր , մանաւանդ Հնդկաստան : Այս տնկոյն տերեւներէն կը շինուի Ելակ (Հիվիտ) կոչուած կապոյտ ներկը :

6. Կահնէնի , ծառ Ամերիկայի (Մէքսիկոյ) . Այս ծառին փայտն է անռա կոչուած ազնիւ ատաղձը որմէ կը շինուին կարասիք :

7. Կարճառասորդ և շէնէնի , ծառք հասարակ յԱմերիկա , առաջինը՝ գլխաւորապէս Եռոքադան , երկրորդը՝ Գոլումպիա և Պրազիլիա : Այս ծառերուն փայտէն են գումարէւ և պահած կոչուած կարմիր ներկերը :

8. Ճանդառ (սանդալ) , փայտ անուանի ա-




ՊԱՌՈՒԵՆԻ

նուշահոտ, կը բումնի Ովկիանիա և հարաւա-  
յին Ասիա:

9. Կոճ. տունկ արեւմտեան Ամիոյ: Ասկէ  
է ժառէ էէժ (քիթրէ) կոչուած խիժը:

10. Դարբադոյս և Հալուկանիրդ: Բատ երեւու-  
թին կը նմանին պատառաբոյծ տնկոյ, բայց



ՀԱԼՈՒԿ

Ասոր փայտէն է հալուկն (էօտ աղաճը), ի վա-  
զուց ծանօթ, որ կրակի վրայ դրուելալ կու-  
տայ անոյշ հոտ: Հալուկն Ափրիկէի տունկ է:

11. Համեմուկ (վանիլեա), բոյս Ամերիկայի  
(Մեքսիկոյ), անոյշ հոտոյն համար անուանի:

12. Հեռէնէ. հարաւային Ամերիկայի ծառ,  
որմէ կ'ելլէ յէտիւն էէժ (գոմէլասդիք) կոչուած  
հոյզը:

13. Մարտորու (միյան քէօքիւ), տունկ հա-  
րաւային խտալիոյ:

14. Պէտրակնէ (ֆլամլդ աղաճը), կը բուսնի

Միջերկրականի Եղերքը, մանաւանդ Փոքր  
Ասիա: Ասկէ կ'ելլէ բէւենոյ իէժ կամ ռէտին  
(թիրէմէնթին):

15. Հարկանուշ (գաքաօ), ծառ Ամերիկայի:  
Ընտիրը կը գտնուի կեդրոնական Ամերիկա և  
Վենեզուելա: Ասոր պտղէն կը շինուի դուռը  
(չօդօլաթ):

16. Ռէտրուկէրդ: Աւելի քան 2000 տեսակք  
կան ասոնցմէ, որոց մեծ  
մասին հայրենիքն է այ-  
րեցեալ գօտին: Կեդրո-  
նական և Հարաւային Ա-  
մերիկա, Ափրիկէ և  
Հնդկաստան. ասոնք կը  
ծածկեն ծառերուն ոս-  
տերը մեր կլիմային պա-  
տառաբոյծ մամուռոնե-  
րուն պէս: Զկայ ուրիշ  
տեսակ տունկ ասոր պէս  
ծաղիկներուն պայծա-  
ռութեամբ երեւելի և  
ձեւով: Վանիկեա կոչուած հատը Մեքսիկոյի  
ռէտրուկէրդ կոչուած տունկին սերմն է:

17. Զաբակոստ կամ Շիտուէնէ. կը բուսնի մա-  
նաւանդ Մոլուքեան կղզիներն: Այս տունկին  
ծաղիկն է Շիտու (գարէնֆիլ) կոչուած համեմը:

18. Ճարպնէ. ծառ այրեցեալ գօտոյ: Ա-  
սոր մէկ տեսակէն կ'ելլէ րոճ կամ րոճ իէժ  
(լէօք) կոչուած նիւթը զոր երրեւ Հարաւանի (բուզ)  
կը գործածեն Զինացիք:



ՈՐԲԻՑԱԿԵՐՊ

19. Սբէնէ (ակաց), ծառ հասարակ յԱփ-  
րիկէ և արեւմտեան Ասիա : Ասոր մէկ տե-  
սակը թուփ է և առատ կը բումնի Սահարա-  
յի չոր և աւազուտ տեղերը, Սենեկամպիոյ  
հիւսիսային դին և այլուր, և կը կոչուի հըռ-  
պէր (միմոս) կամ դժուռն, վասն զի իբր թէ  
զդալով կ'ամփոփէ տերեւներն, եթէ ոք գըպ-  
չի մատով :



ՊԱՏԵՆՍԱԾՈՂԻԿ

21. Տէնրէ (գընագընա աղաճը) և Տաղյէնէ (խփէքաքուանա), կը բումնին հարաւային Ա-  
մերիկա և են օգտակար ի գեղորայս, առաջ-  
նոյն՝ կեղեւն, իբրեւ տենդարոյժ . երկրորդին՝  
արմատն, իբրեւ մաղճագեղ :

22. Քաջինէ (սումագ աղաճը), թուփ՝ բուն  
տաք երկիրներու : Այս տունկէն է աղոր (սու-  
մագ) կոչուած թթու նիւթը, զոր իբրեւ ջը-  
նարակ կը գործածեն ձաբոնցիք :

23. Կոճողողեւ (զէնճէֆիլ), բուն Հնդկաս-  
տանի տունկ է, կը բումնի ուրիշ տաք եր-

կիրներ, մանաւանդ հարաւային Ասիա :  
24. Պանէտոնէնէ : Այս հսկայ ծառը տեսակ  
մը թուզ է . կ'արձակէ 'ի խոնարհ մինչեւ



ՊԱՆԵՏՈՆԵՆԻ

գետին խւր մատաղ ոստերը, որոց խւրաքան-  
չիւրն արմատ տալով կ'ըլլայ նոր ծառ, և այս-  
պէս բազմանալով կը կազմէ անտառ : Կ'ըսուի  
թէ անդամ մը 7,000 հոգւոյ բանակ մը պա-  
տրսպարեցաւ այս ծառերէն միոյն հովանուոյն  
տակ : Հնդկաստան ներպուտուա գետին մօտ

կայ Պանեանի ծառ մըսոր բռնած է ընդարձակ  
Երկիր որոյ շրջապատն է Երկու հազար ոտք :  
25. Մշտնել : Կը մշակուի հին եւ նոր աշխար-  
հի հասարակածի Երկիրները : Այս տունկն



ՄԶԵՒՆԻ

ունի շատ տեսակներ , որոց իւրաքանչիւրը  
պառուղ տալու համար կարօտ է այս ինչ աս-  
տիճան չերմութեան : Բայտ չումնպղտի , արտ  
մը ուր կը տնկուի մղենի՝ հարիւր երեսուն և  
երեք անգամ աւելի պառուղ կու տայ , քան թէ  
տնկուէր հոն ցորեն կամ ուրիշ արմտի ,

### ԴԱՍ ԼԵ .

Հ. Յիշուելու արժանի ուրիշ թնչ բոյսեր  
կան տաք Երկիրներ :

Պ. Տաք Երկիրներու նշանաւոր բոյսեր են  
նաեւ ,

1. ԱՌԱԽԱՆՑՈՒՆԻ (մէվլ աղաճը) , նշանաւոր՝  
տերեւներուն մեծութեամբ և աղնիւ պաղովլ :  
Կը գտնուի գրեթէ բոլոր այրեցեալ գոտույն  
տակ : Փորձուած է որ , Մեքսիկոյի մէջ , քա-  
ռակուսի 100 մէդ-րոյ գետնի վրայ տնկուած  
քառասուն աղամաթզենի 2,000 քիլոկրամ  
պառուղ կու տայ , մինչ նոյնչափ գետնոյ վրայ  
ցանուած ցորեան չտար աւելի քան 15 քի-  
լոկրամ արդիւնք :

2. ԴՐԱԽԱՆՑՈՒՐ (օրթանճա) , բուն ջինու և  
ձաքոնի ծաղիկ . մէկ տեսակը կը բուսնի նաև  
մեր պարտէզները :

3. ԽԵՆԵՆԻ , կը բուսնի Ովկիանիա . այս  
տունկէն է արտօն կոչուած գերմակային նիւ-  
թը որմէ կը շինուի կամնկեր տղայոց համար  
մնդարար խիւս :

4. ԽՆԿՆԻ , տունկ բնիկ չնդկաստանի , կը  
գտնուի նաեւ Արաբիա : Այս ծառին հոյզն է  
Քուրուն (ասըլպէնտ) կոչուած մաքուր խունկը :

5. ԾՈՒՆԻ , տունկ հարաւային Ասիոյ . կու  
տայ հուրէն սեպէն (հինտ բէշինասը , փութալամ-  
պա) կոչուած խիմը :

6. ՀԵՖՅԻ , կը գտնուի Միջերկրականին կըզ-  
զիներն , և կու տայ հաղուտէ կամ կիւ (սագըզ)

կոչուած անուշահոտ խիժը զոր ախորժելով  
կը ծամեն արեւելեան կանայք :

7. Հուդիսէն (պամպու), կը կազմէ խիտ  
շամբեր գրեթէ բոլոր այրեցեալ գօտուոյն խո-  
նաւ տեղերը, մանաւանդ Ասիա : Այս եղե-  
դան հիւթը կու տայ շաքար, և բունը կը  
գործածուի յայլեւայլ պէտս :

8. Հրէնէ, կը բունի հարաւային Ամերիկա  
և Ասիա ջրարբի տեղեր . կու տայ հրան (բու-  
գու) կոչուած մանուշակադոյն ներկը :

9. Մշան (կէնէ աղաճը, պիյտէննիր). տա-  
րեւոր տունկ, կը բունի արեւմուեան և հա-  
րաւային Ասիա . արմատը վառելով կը բուրէ  
հոտ մշկոյ :

### ԴԱՍ | Թ.

Հ. Բարեխառն գօտուոյ բոյսք որո՞նք են :

Պ. Բարեխառն գօտուոյ, մանաւանդ հիւ-  
միսայնոյն, ոչ միայն տաք այլեւ միջին մասե-  
րուն մէջ յառաջ եկող տունկք ոչինչ ընդհատ  
բաղում և օգտակար են : Այսպէս ունինք,

1. Յարմատեաց՝ սորեան, հաճար, ժարէ, ջարսան,  
եգիպտացորեն .

2. Յընդեղինաց՝ ճաշ (պիղելիա), բնաշ (փասուեա), սապ, սլուն, բակլա, եւ այլք .

3. Խառարոնէ կամ բանջարոյ (սէպղէ) բոլոր  
տեսակները .

4. Պտղատու ծառերէն՝

ա. Նշէնէ, սալբէ, բեղջէն, ձիբոնէ, էւրասէնէ, ըն-

էրոնէ, կասկէնէ (քէստանէ) իրենց այլեւայլ տե-  
սակօք են բուն Փոքուն Ասիոյ և մանաւանդ  
Պարսկաստանի բերք, ՚ի վաղուց տարածուած  
Եւրոպա, և ապա Ամերիկա .

բ. Թունէ հասարակ է Միջերկրականին մօտ  
երկիրներ .

գ. Խնձորէ և դանչէ, բաղմատեսակք, կը յա-  
ջողին մինչեւ բաւական յառաջ գէպ ի հիւ-  
միս .

դ. Ուն (ասմա) որոյ պտուղն սքամնչելի է  
յԱսիա, և գինին՝ յԵւրոպա, կը թուի թէ  
բուն արեւելեան Ասիոյ բերք է : Գինույ կող-  
մանէ անուանի են Գաղիա, Գերմանիա, Ուն-  
կարիա, Սպանիա, Մատէրեան և Գանարեան  
Կղղիք :

### ՎԱՐԻ ՃԱռերէն՝

ա. Կանչէ, սէպ (գայըն աղաճը), ցարուն (Ղուշ  
աղաճը), կաղամանէ (գաւագ), ուռէ (սէօյիւտ),  
սասէ (չընար), հացէ (սէնտէպան աղաճը), նէբէ  
(օխլամուր), ցտ (տիշպուտագ), սրէնէ (ակաց).

բ. Սուր կամ շն (չամ) կը բունի նաեւ  
աւազուտ տեղեր, և ցուրտ լեռներ, ինչպէս  
Շուէտ և Նորուելիա .

գ. Եւնէն (քէօնար աղաճը), կը բունի  
սեպ և խոնաւ լեռներ, և ունի մեծամեծ ան-  
տառներ .

դ. Կառէ (գաթրան աղաճը), կը բունի Ալ-  
պեան լեռները .

ե. Նոճէ (սէրվի), կը բունի հարաւային Եւ-  
րոպա և այլուր .

զ. Մայր Լիքունանսու՝ բուն Ասիական ծառ է, տարածուած է Եւրոպայի շատ տեղերը.

Ե. Կակաչէ, գեղեցիկ ծառ որոյ մեծամեծ անտառներ կան Ամերիկա:

### ԴԱՍ Խ.

Հ. Բարեխսառն գօտոյ ուրիշ Երեւելի տունկերն որո՞նք են:

Պ. Բարեխսառն գօտոյ ուրիշ Երեւելի տունկերն են.

1. Խաղաղեռ (բալլենտ) բժշկական տունկ, կու դայ ի միջին Ասիոյ.

2. Տուն (քէօք պօյար), որոյ արմատը կու տայ կարմիր ներկ յարգի.

3. Կողէշ (գօլցա), տեսակ վայրի կաղամբոյ. կը մշակուի բոլոր Եւրոպա, սերմէն կը հանուի իւղ վառելի.

4. Ճականու (փանճար), շողգամի, բողի, ստեղղինի տեսակէն, կը մշակուի Եւրոպա շատ տեղ, մանաւանդ շաքարի համար որ կը հանուի այս արմատէն:

5. Կոսու (քթան) և հանեն (քէնէվիր), տունկ բարեխսառն կիմաներու, յարգի՝ գեղեցիկ մանածին համար. կտաւի սերմն է կոսուառ (քէթէն թօխումու):

6. Մեկն կամ իշշիալ (աֆիոն), տունկ արեւմտեան Ասիոյ, արեւելեան Եւրոպայի և Աֆրիկէի, անուանի է ափիոնին համար որ այս

տնկոյն հիւթն է, թմբրեցուցիչ, և մահարեր՝ եթէ շատ ուտուի:

Հ. Ցուրտ Երկիրներու բոյսք որո՞նք են:

Պ. Կարի ցուրտ Երկիրներ անդամ դէպ ի հիւսիս կը բունին,

1. Յարմտեաց՝ գարի, հանար, վարսոնի.

2. Ի բանջարաց՝ գետափնյուր, սուեղին, շուշամ, հաղամբ, լսիուր (քէրէվիդ).

3. Վայրի ծառերէն՝ եղէ-ին, սորոյ կամ շամ (շամ), սաբասէ, սուսէ, լսութնէ (գըզըլ աղաճ).

4. Թուփերէն և մանր խոտերէն՝ հաւածրէն (սիւփիւրիէ օժուլ), լսու և հաճուռ (եօսուն), որ կը գտնուին մինչև մօտ ի բեւեռուային շրջանակ:

### ԴԱՍ ԽԱ.

#### ՃԱԶԱԽՈՐՔ

Հ. Ի՞նչ են շնչառորդ:

Պ. Ինչպէս տունկք, նոյնպէս շնչառորդի սկզբան ստեղծուած են Երկրիս Երեսին մի մասին վրայ, և հետզհետէ տարածուած են աւելի ընդարձակ Երկիրներ:

Հ. Ի՞նչ կերպով և ի՞նչ միջոցաւ ասոնք տարածուեցան:

Պ. Անսառուններէն ոմանց հեռաւոր տեղեր տարածուելուն պատճառ են շատ անդամ հողմունչ և յորչան:

Միջառք և թռչունք հովերով կը տարուին ցամաք Երկիրներէ մօտաւոր կղզիներ, սա-

ուոյցներ շատ անգամ կրինլանտէ իսլանտ բերած են սպիտակ արջ։ Գայլք և աղուէպք շատ անգամ տեսնուած են սառուցի կտորներու վրայ ցամաքէն հեռու ծովուն երեսը։ Նա և մարդոց միջոցաւ տարածուած են անսառունք շատ տեղեր։

Հ. Մարդիկ թէ անասունք շատ են երկրագնտիս վրայ։

Պ. Ի սկզբան մեծ բազմութեամբ կային անասունք երկրիս շատ կողմերը, բայց մարդոցմէ հալածուելով նուազեցան, մանաւանդ դիշատիչ և վնասակար կենդանիք։ Այսպէս վայրի ցուլք ժամանակաւ շատ էին չիւսիսային գարովինայի մէջ, բայց դաղթականաց երեսէն քաշուեցան դէպ արեւմուտք, և հիմա կը գտնուին Ապառաժ լերանց արեւելեան դաշտագետինները։ Գայլք և արջք, ոչ շատ տարիներ առաջ կը գտնուէին բազմութեամբ Նորմագիա և Նոր-Եօրը, հիմա շատ նուազած են այն երկիրներուն մէջ։ Եւրոպայի առունուած վայրի եզր որ կատաղի գաղան է, հիմա լեհաստանի անստառներուն մէջ միայն կը գտնուի ուրեք ուրեք, մինչ ժամանակաւ մեծ բազմութեամբ կային վայրի եղինք կեդրոնական Եւրոպա։

Հ. Ամէն շնչաւոր կամ անասուն կ'ապրի՞ ամէն գօտւոյ տակ։

Պ. Կան անասուններ որ գրեթէ ամէն գօտւոյ տակ կընան ապրիլ, այսպիսի են ընդհանրապէս ընտանի անասունք, ինչպէս շան որ

գրեթէ ամէն երկիր կը գտնուի, ունար, այն, եւն, ի՞ու, կը գտնուին մինչեւ լայնութեան 64 աստիճանին տակ։ յէ և կապու՝ մինչեւ 66<sup>o</sup>։ Բայց նաեւ գաղաններէն և յափշտակիչ թռչուններէն ոմանք, ինչպէս արջ և գոյլ, արծունք և անդու կը տեսնուին գրեթէ ամէն երկիր։ Նոյն բան է ձկանց համար. շնուրուակ (քէօփէք պալըզը), աղցայուակ (տէսթէրէ պալըզը) կ'ապրին գրեթէ ամէն ծով, բայց ընդհանրապէս ցամաքէն հեռու։ Իսկ գոհանայուակ (գալգան պալըզը), առիւյուակ (փիսի պալըզը), վուրույուակ (տիլ պալըզը) և ուրիշ պիտանի ձկունք կ'ապրին ամէն ծով նաեւ ցամաքի մօտ։ Նոյնպէս առլան (սալամօն պալըզը), յուրայուակ (խանիյէ պալըզը), հայլայուակ (թուրնա պալըզը), շաժան (սազան պալըզը), որ են անոյշ ջրոյ ձկունք, կը գտնուին գրեթէ ամէն երկիր։ Բայց և այնպէս իւրաքանչիւր գօտի ունի իւր սեպհական անասուններն։




## Դ Ա Ս Խ Բ .

Հ. Այրեցեալ գօտին Բնչ մասնաւոր անսառուններ ունի։

Պ. Գրեթէ ամէն յաղթ և անարի անասուն և գաղան այրեցեալ գօտւոյն տակ կ'ապրի. ինչպէս, յաղթ անասուններէն՝ ի՞ւ, անգեղիւր (կէրկէտան), յէսէտու (սու աթը). գիշակեր

գաղաններէն՝ առէւծ, վահր, յովոյ (փալս), բու-  
եան (սըրթլան): Այրեցեալ դօտուոյն տակ կ'ապ-  
րին նաեւ գեղեցիկ անասունք, ինչպէս վիճ  
(դաղալ) վայելուչ, ձնառու (զիւրաֆէ) երկայ-  
նավիզ, չափերայն (զէրտ) խայտարզէտ: ասոնք  
Ափրիկէ միայն կը դտնուին: Ուզող կ'ապրի



Ա. Թ. Ի. Խ.

այրեցեալ դօտոյ տակ և բարեխառն դօտոյ  
շատ տաք մասերը միայն, այծուռու (լամա)  
նոյնպէս Ամերիկա այրեցեալ դօտուոյն լեռ-  
նային տեղերը: Այրեցեալ դօտին է նաեւ  
այլեւայլ ցեղ կապկաց հայրենիք: Նոյն դօտ-  
ուոյն տակ կը դտնուին, ինչպէս տղեղագոյն  
և վասակարագոյն սողունք, զորօրինակ իւշտ Յ  
(պոա), հոկորիւլու, չարաթոյն օձեր, նոյնպէս

գեղեցկագոյնք ի թոչնոց, զորօրինակ՝ պառիս  
(փափաղան), դրախտահառ (ճէննէթ գուշու),  
գուշունաշ (շէհամէք գուշու), շատ սիրուն թըրո-  
չուն Ամերիկայի, ձեր (երփնագոյն թոչուն  
Պրազիլիոյ), ժամանուն, լընհաւ, սուկենաւ, սէր-  
ման եւայլ անթիւ թոչունք, գեղեցկութեամբ  
նշանաւորք, ինչպէս նաեւ մեծահասակներն,  
զորօրինակ՝ ջայէտան (տէվէ գուշու) և հարէն  
չոյլան:

Դարձեալ այլեցեալ դօտուոյն տակ կը գըտ-  
նուին անհամար միջամք որ կը փայլին գեղե-  
ցիկ գոյներով, ոմանք նաեւ լոյս կու տան դի-  
շերը, թէպէտ այս ճճեաց շատերը աղետալի  
են այն երկիրներուն, ինչպէս ճարտի, սպէտոնի ճը-  
շեաւ և միջնա անթիւ տեսակներ:

Ոչինչ ընդհատ քան զցամաքն նշանաւոր է  
նաեւ ծովի այրեցեալ դօտուոյն տակ նորանը-  
շան ձկամբք թոչող, վալոր (ցատկող), ար-  
շառող, զրահապատ և խեցեպատ ձկունք,  
այն ծովերուն մէջ միայն կը դտնուին:

### Դ Ա Ս Խ Գ .

Հ. Հասարակածի երկիրներէն դուրս ինչ-  
պէս են անասունիք:

Պ. Որչափ կը հեռանանք հասարակածի  
երկիրներէն այնչափ կը նուազին անարի, գի-  
շակեր և վսասակար տեսակք: Հիւսիսային  
բարեխառն դօտուոյն տակ գրեթէ չկայ ուրիշ  
գաղան բաց յարջոյ և ի գայլոյ: անտառաց

մէջ կը տեսնուի նաեւ լորով (վայրի խող) : Երէք (որսի անասունք) են՝ եղջերու, այծեաժ, Ամերիկա՝ նաեւ լոյն են : Մեծագոյն թրոշունք այս գօտուոյն տակ են՝ արծուէ, անդ, բաղչ (շահին), արտէեւ (լէյլէք), հարապ (թօյ գուշու), հասալուն (պէօյիւք սագգա գուշու) և ասէ :

Հ. Բարեխառն գօտուոյն հիւսիսային կողմերն ի՞նչ պիտանի անասուններ կան :

Պ. Բարեխառն գօտուոյն հիւսիսային կողմերը կը գտնուին մուշտակ (ծէրէ) տուող անասունք, ինչպէս ամայր, իդում (գագում), աղջուէս, կուղչ (գունտուզ) և այլ սոցին նմանք . այն կողմերը կը գտնուին նաեւ եղջերուի տեսակներ, ինչպէս բնի կոչուած եղջերուն որ լաբոնացւոց գրեթէ միմիայն ընտանի անասունն է : Երկրիս այն մասին կարճ բայց սաստիկ տաքն յառաջ կը բերէ նաեւ միջատներ որ այնչափ շատ են որչափ այրեցեալ գօտուոյն տակ :

Հ. Բեւեռային կամ սառուցեալ գօտուոյն տակ ի՞նչ անասուններ կան :

Պ. Բեւեռային սառուցեալ գօտուոյն տակ անասունք գրեթէ կը սպառին : Բաց ի առջուակ արջ, ուրիշ գազան չկայ . երբեմն երբեմն կը տեսնուի ծովեղերքը դու (տէնիզ տանասը) կոչուած ծովային գազանք : Բայց ծովուն մէջ, որոյ խորն այնչափ ցուրտ չէ որչափ ցամաքը, անասունք աւելի շատ են : Արդարեւ հիւսիսային սառուցեալ ծովուն մէջ կ'ապրին երամ

երամ նովոյն տարեւ (ըինկա պալըղը), կեր յուն (պալէնա), մաշտանի կոչուած ձուկը (տէնիզ կէրկէտանը), եւայլք :

### ԴԱՍ ԽԴ.

Հ. Ամերիկայի անասունք հին աշխարհին անասուններէն ի՞նչ տարբերութիւն ունին :

Պ. Ամերիկայի բնիկ անասունք հին աշխարհին մէջ գտնուած համացեղ անասնոց նայելով աւելի մանր են . հոն փոխանակ ուղտի կը գտնես այժմուլ (լամա), փոխանակ փղի՝ գեղանին որ փղին մէկ փոքրագոյն տեսակն է, փոխանակ առիւծու և վագեր՝ գակուար և եակուար կոչուած գազաններն :

Հ. Հարաւային կիսագունտին բարեխառն մասին մէջ անասունք ի՞նչ մամնաւոր յատկութիւն ունին :

Պ. Հարաւային կիսագունտին բարեխառն մասին անասունք թէ ձեւով և թէ բարուք բոլորվին տարբեր են երկրիս ուրիշ մասերուն անասուններէն . ինչպէս ագելու (գանկլուրու), հաւառառանին կոչուած տարօրինակ անասունք : Նոյնպէս նէւար և գերակ կոչուած սագի տեսակները հարաւային կիսագունտին մէջ միայն կը տեսնուին :

Հ. Յատուկ տեղոյ կողմանէ ի՞նչ տարբերութիւն ունին թոչունք և ձկունք ցամաքային անասուններէ :

Պ. Որովհետեւ թոչունց և ձկանց տարբեր

մեծ դիւրութիւն կու տայ տեղ վոլխելու , այս  
երկու տեսակ անասունք ընդ հանրապէս աշ-  
խարհագրական որոշ սահման չունին , և կը ը-  
նան դիւրաւ դաղթել . ուստի և դաղթելու  
սովորութիւնն յատուկ է դրեթէ թռչնոց և  
ձկանց միայն :

ԴԱՍ ԽԵ .

Հ. Եւրոպա Բնչ տեսակ անասուններ ունի :

Պ. Եւրոպա ունի ամէն տեսակ ընտանի ա-  
նասուն , այխար , այժ , ձկ , այլովքն հանդերձ ,



Ա. 8 Ե

և ընտրներ : Տեղ տեղ , մանաւանդ Անդզիա  
մարդկային հնարիւք կամ արուեստիւ ազնուա-  
ցած են այս անասունք : Արդէն ծանօթ են  
ազնուութեան կողմանէ խրիմու և կալիցիոյ  
կողմերուն արջառը , բումէլոյ ոչխարը , Սպա-  
նիոյ Գրինս կոչուած այծը , Անդզիոյ , Սպա-

նիոյ , Ունկարիոյ ձին : Ընտանի խողն հասա-  
րակ է գրեթէ բոլոր եւրոպա : Շուն յարդի  
է եւրոպա և ունի շատ տեսակներ : Ուշ կը  
դանուի եւրոպական թուրքիա և Յունաստան :

Հ. Ի՞նչ տեսակ դաշն կը դանուի եւրո-  
պա :

Պ. Գիշակներ և վասակար անասնոյ տե-  
սակներ սակաւ են երկրիս այս մասին մէջ : Ա-  
ռէն , Հանր , բուքան , գիւլ , հասարակաց պար-  
տէզներուն մէջ միայն կը պահուին ի տես :  
Այս գաղաններն չեն կրնար ապրիլ Եւրոպայի  
կլիմային տակ : Կը դանուի միայն սեւ սրջ . ը-  
տիւնի սրջ բեւեռային կողմերը միայն կը տես-  
նուի : Գայւ կը դանուի դէպ 'ի հիւսիս շատ տե-  
ղեր , մանաւանդ կարպաթեան լեռները , Շա-  
տայլ (չագալ)՝ Արքիպեղագոսի և Սեւ ծովուն  
մօտ երկիրներ : Ոնտառներու մէջ կը դանուին  
երբեմն հնա (վայրի խող) , վայրի կատու ,  
վայրի ոչխար և գուշակ (փօրսուգ) :

Հ. Ուրիշ Բնչ վայրի անասուններ կան եւ-  
րոպա :

Պ. Գլխաւոր վայրի անասունքն՝ Ա. Տաշ-  
տակ առաջնակ տեսակներ , ինչպէս՝ աղուէս , լուսան  
(վաշագ) , Զրայշէս (սու սամուրու) , բուն սա-  
հոր , հնիւս (գագում) , կլաւէս (զէրտէվա) ,  
այխ (սրնճապ) որ ունի նաեւ թռչող տեսակ  
մը , և այէս . այս անասունք կը դանուին Եւ-  
րոպայի հիւսիսային մասը , մանաւանդ Ար-  
պերիա :

2. Էթէ Հայքի կամ արայ անասունք , ինչպէս

Եղջեռու , բէն որ լաբոնիա միայն կը գտնուի ,  
այծեմունք , ինչպէս հասարակ այծեամ (ճէ յրան) ,  
տորոյն (տաղ գարաճասը) , նադասառակ , ժադար , անէ  
(քիփրի) , իուռուն (իրի քիբրի) , եւայլք :

Յ. Մկան տեսակներ , ինչպէս , բաց ի տան և  
լուալեաց մուկերէ , կան անթիւ դաշտի և լե-



Լ. Ը. Բ. Ե. Դ. Ե. Բ. Ո. Ա.

րան մկունք Եւրոպա , ինչպէս ճարմունք (գլ .  
գ. ամբանեօլ) , նորուեկեան մունք , չերմանին մունք  
(գլ . համոդէր) , ալպեան մունք (գլ . մարմոդ) ,  
հինան (գլ . ըա միւսքէ) . ասոնց շատերը հիւսի-  
սային կողմերը կը գտնուին , մեծամեծ զսաս-  
ներ կու տան բերոց և արմուեաց , և կը դադ-  
թեն ամառներ մեծ բազմութեամբ :

### ԴԱՍ ԽԶ .

Հ. Ասիա ի՞նչ տեսակ անասուններ կը գըտ-  
նուին :


Պ. Ասիա կը գտնուի ամէն տեսակ ըն-  
տանի անասուն : Յիշուելու արժանի են ֆո-  
քուն Ասիոյ դմակաւոր ոչխարը , Գաշմիրի ,  
Թիպէթի և Սնկիւրիոյ այծը , Արաբիոյ ձին և  
Տաճիկ ուղուր :

Հ. Ի՞նչ տեսակ գազաններ կան Ասիա :

Պ. Ասիոյ հարաւային մասը , մանաւանդ  
Հնդկաստան , բուն է ամէն տեսակ գիշակեր  
անասնոց : Անսովոր չէ տեսնել այն երկրին ոչ  
միայն ամայի , այլեւ բաւական բազմամարդ-  
մասերուն մէջ ահագին սուէծներ , չուներ , սո-  
ջու , անչեղջեր և գարողի (վայրի խող) կատաղի-  
ներն :

Հ. Ուրիշ ի՞նչ անասուններ հասարակ են  
Ասիա :

Պ. Հասարակ են հարաւային Ասիա կապկի  
այլեւայլ տեսակներն , ինչպէս այծամարդ (օրանկ  
ութան) , կապկամարդ (ճիպպոն) , և ագեւոր տե-  
սակները . նոյնպէս ինչ որ ժամանակաւ շատ  
էր եւ կը գործածուէր պատերազմներու մէջ :  
Շատ յարգի է սպիտակ փիղ , որում տեսակ  
մը պաշտօն կը մատուցուի Քոչինչին : Գոմէշ ,  
վայրենին՝ կը գտնուի մեծ բազմութեամբ  
Հնդկաստան , ուստի բերուած է նաեւ Ա-  
սիոյ և Եւրոպայի բարեխառն կողմերն և կը  
գործածուի իբրեւ ընտանի անասուն , յետ



ԿԱՊԿԱՄԱՐԴԻ

**Եղան :** Ասիոյ շատ կողմերը կը դանուին նաեւ  
բարեան , հայլ , շնաֆայլ , ալսուես , լուսան , սպի : Վայ-  
րի ձի և վայրի այծ կը դանուին միջին Ասիա .

Վերջինը՝ մանաւանդ Տաւրոսի և Կովկասու  
լեռները : Ծովային կաթնատու անասուննե-  
րէն ունեն կը դանուի Ովկիանոսի մէջ ամէն  
տեղ :

ԴԱՍ ԽԵ.

Հ. Ափրիկէ Բնչ ընտանի անասուն ունի :  
Պ. Մեր բոլոր ընտանի անասուններն , ինչ-  
պէս արջու , ուխու , չէ , շուն , կոռու , ի վաղուց  
ծառաթ էին Ափրիկէի քաղաքակիրթ ազգաց .  
Նա մանաւանդ այս անասուններէն ոմանք ,  
ինչպէս կով , շուն , կատու , նուկրական էին  
յեղիպտոս , թէպէտ հովուութիւն հոն պիղծ  
համարուած էր :

Հ. Ի՞նչ գաղան և վայրի անասուն կը դըտ-  
նուի Ափրիկէ :

Պ. Գաղաններէն կը դանուին գրեթէ բո-  
լոր Ափրիկէ , առեւծ , յավան (փարս) , ընյառէն-  
(յովազի մէկ տեսակը) , լահերակուն (փէլէնք  
քէտիսի) , շնաֆայլ , բորեան : Վայրի անասուննե-  
րէն՝ լուսան , գեղ , անգեղիներ , էլաւայրէ կամ ցի-  
(եապան էշէյի) , լահերակուն (զէրտ) , սպի , սպէսան  
գեղեցիկ տեսակներ : Այս ամենայն անասունք  
կ'ապրին ընդհանրապէս միջին և մանաւանդ  
հարաւային Ափրիկէ : Զորօրինակ փղի ընտիր  
տեսակը որ կու տայ պատուական փղոսկր՝ կը  
դանուի Մողամազիքի եղերքը , ոզնին գլխաւո-  
րապէս Մատակասդար : Բարեյուսոյ գլխոյն

Եղերքը կը գտնուի նաեւ կեր (պալէնա) :

Ուզու կը գտնուի դիսաւորապէս հիւսիսային Ափրիկէ միայն :

Հ. Ափրիկէ Բնչ յատուկ անասուն ունի :

Պ. Երկրիս այս մասին յատուկ են կապկի տեսակներէն սորտուր (շիմբանդէ) . հինք տեսակ մը վայրենի ժողովուրդ կը կարծէին այս կապիկներն , և կը կոչէին ՇՅԱՅԹԻՇ , այսինքն այրաբնակ : Ափրիկէի մէջ նոր ճանչցուած տեսակ մը կապիկ որ Կորէյւ կը կոչուի՝ քան զայլ կապիկս մօտ է նմանութեամբ մարդոյ :

Ուրիշ այլեւայլ ստորին կապիկներ կը գտնուին Ափրիկէ և մօտակայ կղղիները , մանաւանդ Մատակասգար . ընդհանրապէս կապիկի ցեղին բնիկ երկիրը կը թուի Ափրիկէ :

Հ. Ափրիկէ ուրիշ Բնչ մանաւոր անասուններ ունի :

Պ. Ափրիկէի յատուկ են նաեւ 1. հեռահան (լաքճէնէ , նիմս) կոչուած փոքր անասունը որ կը կոչուի նաեւ Փարանակ կամ ԵՀԵՊԱՆԻ հուէ , և կը կարծուի թշնամի օձից . 2. բէշէ ճիշ (միսք քէտիսի) . 3. Յագեր (սուլ աթըր) . 4. առաջուր կամ ընյուռ (զիւրափէ) :

ԴԱՍ ԽԸ .

Հ. Ամերիկա Բնչ անասուններ ունի :

Պ. Մեր ընտանի անամոց գրեթէ բոլորը , հասարակ մուկն անդամ , եւրոպայէ տարուածեն հոն : Նաեւ Ասիա և Ափրիկէ գտնուած գաղանաց և վայրի անամոց գրեթէ բոլոր տեսակներն , բաց ի սեւ արջոյ , անծանօթ էնին Ամերիկա : Բայց Ամերիկա ունի իւր յատուկ տեսակներն :

1. Գաղաններէն՝ ընյուէ (գակուար) և շոբ (եակուար) որ են փոխանակ յովազի և վագեր .

2. Ժանդանուր կոչուած անասուններ որ երբ կը հալածուին՝ գարշ հոտ կ'արձակեն .

3. Պարէերէ (գղ . սարիկ) .

4. Գերանին (գղ . գապիէ) որ է երկակենցաղ .

5. Յամբուկ (գղ . բարէսէօ) կոչուած անասոյ տեսակներ , յամրագնաց անասունք նման կապիկ .

6. Ժօրաւոր (գղ . էտանդէ) կոչուած անասոյ տեսակներ . որ ժանիք կամ սուր ատամունք չունին .

7. Այծուլու (լամա) , և քանի մը տեսակ ջրային կաթնատուններ , ինչպէս առյու նրա ՇԼԻՆ և ՃԱՀԱՅԻՆ արջ , հարաւային Ամերիկա :

Ամերիկա ունի նաեւ կուռք (գունտուզ) , մանաւանդ գանատա և դէպ ի հիւսիս , ինչ-

պէս նաեւ իլլրոց և առևէ տեսակներ յորոց ո-  
մանք կու տան աղնիւ մուշտակ :

Հ. Ովկիանիա թ'նչ յատուկ անասուններ  
ունի :

Պ. Ովկիանիա կամ Աւստրալիա երկրիս միւս  
մասերուն անասուններէն ունի միայն կաղէի ,  
կան (վայրի խոզ) , և տեսակ մը լաւ . երկրիս  
այս մասին յատուկ անասուններն են սէւզաղ  
(գանկուրու) և հաւատունդն (թռչնոյ քիթ ունե-  
ցող) , նորանշան չորքոտանիք : Ուրիշ անա-  
սունք , մանաւանդ ընտանիք , տարուած են  
հոն եւրոպացի գաղթականաց ձեռօք :

~~~~~

### ԴԱՍ ԽԹ .

Հ. Երկրիս այլեւայլ մասերուն թռչուններն  
որո՞նք են :

Պ. Թռչունք իրենց տարեր , այն է օդոյն  
պատճառաւ , ունին մեծ գիւրութիւն տեղ  
փոխելու , ուստի և շատ թռչունք , մանաւանդ-  
յափշտակիչք , գըեթէ երկրիս բոլոր մասե-  
րուն մէջ և ամէն կլիմայի տակ կը գտնուին .  
թռչնոց գեղեցկագոյն տեսակները կը գըտ-  
նուին հասարակածի երկիրները , և են բա-  
զում թռուվ :

Հ. Թռչունք քանի տեսակ են :

Պ. Ըստ Քիւլիէի թռչունք կը բաժնուին  
վեց կարգ , որ են .

1. Երգեցողք , ինչպէս՝ անձէւ (սագսըղան),

առին (պիւլպիւլ) , ճնճլուկ (սէրչէ) , մշուստաղ:  
2. Հաւք , ինչպէս՝ ընդունի հաւ , կահաւ , ը-  
րամարէէ :

3. Գնացողք , ինչպէս՝ սրտէլ , սուրէլ , կը-  
սունի , յինաւաղ:

4. Լուղակք , ինչպէս՝ սա՛տ , բա՛տ , կարառ և  
ուրիշ ջրային թռչունք :

5. Մագլողք , ինչպէս՝ ուսպիայ , կայունոր :

6. Գիշակերք , ինչպէս՝ սրծուտէ , անէլ ,  
բաղէ :

Հ. Թռչունք իրենց մեծութիւնը նայելով ,  
քանի՞ են :

Պ. Թռչնոց մեծութիւնը երկուք է , մշու-  
ստաղ և կուրուստաղ :

Հ. Մեծագոյն տեսակներն որո՞նք են :

Պ. Մեծագոյն տեսակներն են՝  
Բաղէտ տեսակներ , ինչպէս բուն բաղէ (շա-  
հին) , սակու (չագըր) , սրծուտէ (գարթալ) , ցին  
(գարա չայլագ) . անէլ տեսակներ , ինչպէս  
սէւ անէլ , պասկուն (ըիւխ) , վեշպանէւ , սրուտ  
(չայլագ) :

Հ. Փոքրագոյն տեսակներն որո՞նք են :

Պ. Փոքրագոյն տեսակներն են՝

Աղաւանէ և աղաւանէ , կահաւ (քէ.քիւլ) , ըրամարէէ  
(պլլարըճըն)՝ թռչուն գաղթող , ճայ (մարթի)  
և իորդ կամ կաւանի (թռունա) , սրուտ և սրէ  
(գարկա) գաղթող թռչունք , սրու (սէնիլ լէյ-  
լէյի) , սրագէւ (լէյլէք) , անջահաւ (գլ. գուրիի) ,  
ցին (գարա լէյլէք) , յիական (պէղացցա) , կան  
(գուղու) :

Հ. Ո՞ր թռչուններն են որ յատուկ գօտ-  
ւոյ տակ կ'ապրին :

Պ. Յատուկ գօտւոյ տակ ապրող թռչուն-  
ներ են ,


1. Մանր թռչունք ճնճղոյ տեսակէն որ  
ընդհանրապէս այրեցեալ գօտւոյ տակ կը  
գտնուին , գլխաւորապէս Ամերիկա և Աւստ-  
րալիա , ինչպէս Նորմանած (գղ. գօլիպրի) , ճան-  
ճառ (գղ. ուազո մուշ) , որբախանառ (ճէնճէթ-  
գուշու) , ուսրուտուն (գղ. լիր) , ձէռ (գղ. թան-  
կարա) , ուսրանառ (գղ. գօք տը րօշ) . բոլորը  
զարմանալի են փետուրներով և ձայնիւ :

2. Մեծամեծ թռչուններէն , ջայլաճ (տէվիչ  
գուշու)՝ բուն Ափրիկէի թռչուն . նաեւ հա-  
րաւային Ամերիկա կայ տեսակ մը . արօս (թօյ  
գուշու)՝ տաք կլիմայի թռչուն . ժիրուկ (գղ.  
բինկուէն) և նեւու (գղ. մանշօ) , առաջինն  
Ատլանտեան ովկիանոսի հիւսիսային , և երկ-  
րորդն՝ հարաւային եղերը . հաւալսուն (պէօ-  
յիւք սագգա գուշու) շատ տաք երկիրներու  
թռչուն :

Հ. Մանր թռչուններէն որո՞նք են ընտանի :

Պ. Մանր թռչուններէն ընտանի են մեզ ,  
ճնճղուկ (սէրչէ) , եկտանի (սագգա գուշու) , ձէ-  
ծառն (գըրլանդը գուշու)՝ գաղթող , նիկուռար  
(պաշտան գարա) , հարմարանշ (գղ. պուլիէօյլ) ,  
կեռնէի (գարա թառուգ) :

Զարմանալի է թռչուց տարեկան չուն :  
Ոմանք կը չուեն առանձին , այլք երամ ե-  
րամ , և այլք՝ մեծատարած բանակօք :



ԶԱՅԼԱՄՄ (ՏԵՎ. ԳՈԽԵՑՈՒ)

Հ. Ո՞ր թռչուններն են որ մամնաւոր կի-  
մաներէ գալով ընտանեցած են գրեթէ ամէն  
կլիմայի տակ :

Պ. Մամնաւոր կլիմաներէ գալով հիմա ա-  
մէն կլիմայի տակ ապրող թռչունք են ,

1. Աւաղաղ և հաւոր բուն Ասիական են, բայց  
անձանօթ ժամանակներէ հետէ բերուած և  
ընտանեցած են գրեթէ ամէն տեղ.

2. Սահ և բար որ բուն հիւսիսային գաւառ-  
ներէ են, բայց հիմա ընդհանուր տարածուած.

3. Զարդու և զուարճութեան հաւք . ինչ-  
պէս, ձայնի կողմանէ՝ սիակ, բեղանի (գանար-  
եա), սարէնի (սփինոս), որ բուն տաք երկիր-  
ներու թռչուններ են. վետուրներու գեղեց-  
կութեան կողմանէ՝ սիրայք, բուն չնդկաս-  
տանէ, պապէն, բնիկ այրեցեալ գօտոյ, հարապ,  
աւաղաններու զարդը պարտէղներու մէջ,  
բուն երկիրս հիւսիսային ցուրտ մասին թըռ-  
չուն է, և կը գտնուի բազմութեամբ իսլան-  
տա կղզին. համեղութեան կողմանէ՝ հնդկան,  
բուն ամերիկայէ, կատան (սիւյիւն), բուն  
կովկասու կողմերէն (չայաբնակ Բասէն գա-  
ւառէն յորմէ առած է անունը):

4. Երդեցիկ թռչունը բոլոր թռչուց կար-  
դերուն մէջ բազմագոյնն են: Բարեխառն գօ-  
տիներու մէջ ծանօթագոյն թռչունց տեսակ-  
ներուն շատն այս կարգէն է, ինչպէս՝ սիակ,  
սրբոյ, հարապ, բեղանի, ձեժառն, հնդզուկ և  
այլք: Երդեցիկ թռչունց կարգէն է նաեւ  
հողիք կոչուած թռչունը որ Միացեալ նա-  
հանդաց հարաւային կողմը կը գտնուի, և  
նշանաւոր է գրեթէ ամէն ձայնի նման ձայն  
հանելու կողմանէ:

5. Հաւերու վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Այս կարգի թռչունք աւելի շատ են  
հին աշխարհի քան նոր աշխարհի մէջ, և տե-  
սակներուն շատը կը գտնուի Ասիոյ հասարա-  
կածի երկիրները, որք են, ընդունէ հաւ, լըռ-  
մարէք, փառեան, կատա, տարրակ և աղաւան: Հընդ-  
կահաւք որ բուն Ամերիկայի հաւ է՝ բերուե-  
ցաւ եւրոպա ՃԶ. գարուն, ուր հիմա ամէն  
տեղ տարածուած է: Սիրամարդը, ծանօթ  
իւր վետուրներուն գեղեցկութեամբը, է  
բուն հիւսիսային չնդկաստանէ:

Հ. Գնացող թռչունոց վրայ ի՞նչ գիտելիք  
կայ:

Պ. Գնացող թռչունոց կարգէն է ջայլամն և  
կը գտնուի Ափրիկէ. այս զարմանալի և բարձ-  
րահասակ թռչունըն ուրիշ երկու տեսակները  
կան, այսինքն՝ գառաւոր և երա, որոց մին կը  
գտնուի Հարաւային Ամերիկա, և միւսն՝  
Աւստրալիա:

Հ. Լուղակաց վրայ ի՞նչ գիտելիք կայ:


Պ. Լուղակաց կարգէն են՝ բար, կարպ,  
սագ, հաւալուն, պարոր, հողամաղ, ցէն. ասոնք  
լուղակաց գլխաւորներն են, և կը գտնուին  
աւելի բարեխառն գօտիներու քան այրեց-  
եալ գօտոյն տակ:

Հ. Մագլողաց վրայ ի՞նչ գիտելիք կայ:

Պ. Մագլողաց կարգէն են պապէն, կայտէն  
և կառ:

Թռչունք Պապկայի տոհմէն նշանաւոր են  
իրենց գունոյն և վետուրներուն գեղեցկու-

Թեամբը , ասոնք յարմարութիւն ունին իրենց  
ձայնը մարդոց ձայնի նմանցունելու : Կը բնա-  
կին գլխաւորապէս հասարակածի երկիրները :  
Հ. Գիշակեր թռչնոց գլխաւորներն որո՞նք  
են :



ԳԻՇԱԿԵՐ ԹԱՇՈՒՆՔ

Պ. Գիշակեր թռչնոց գլխաւորներն են .  
անգու , արծիւ , բաղէ և բու : Գնադու կոչուած  
թռչունը որ Ամերիկա կը գտնուի , է անգեղ  
տեսակէն , բոլոր գիշակեր թռչնոց մեծագոյնն

է . երկու թեւերուն տարածութիւնը ծայրէ  
ի ծայր կը հասնի երբեմն մինչեւ հնդետա-  
սան ոտք :

### ԴԱՍ Մ.

Հ. Գլխաւոր սողունք քանի տեսակ են և որ  
երկիրներ կը գտնուին :

Պ. Սողնոց գլխաւոր տեսակներն են կը սոյ+  
(թօսպաղա) , ճուկւ+ (քէրթէն քէլէ) և օչ+ , և  
գրեթէ բուլորը , մանաւանդ յաղթ և չարա-  
գոյն տեսակներն , կը գտնուին Ասիոյ , Ափրի-  
կէի և Ամերիկայի հարաւային տօթագին մա-  
սերը :

Հ. Կրայ քանի տեսակ է և ուր կը գտնը-  
ուի :

Պ. Կրայն երեք տեսակ է , ժովու , անոյ ջրա  
և ցամածի :


Ծովային կրայն կրայն կը գտնուի շատ ծովերու ,  
մանաւանդ Միջերկրականին մէջ . տեսակ մը  
հսկայածեւ կրայ կը գտնուի Ափրիկէ , Համ-  
բարձման կղզին . ուրիշ տեսակ մը որոյ պա-  
տեանը կամ խեցին (պալա) շատ աղնիւ է՝ կը  
գտնուի այրեցեալ գօտուոյն տակ և ձարոն :

Անոյշ ջրոյ կրայ կը գտնուի հիմա Ամերիկա  
միայն :

Ցամաքային կրայն կրայն կը գտնուի երկրիս ամէն  
մասին մէջ . հասարակ տեսակն է յունական կոչ-  
ուածը որ կը գտնուի Յունաստան , Խոալիա և  
Ապրտենիա :

Հ. Մողէսք քանի՞ տեսակ են և ուր կը դըտ-  
նուին :

Պ. Մողէսք շատ տեսակ են, որոց մեծա-  
գոյն և չարագոյնն է կոկորդիլոս, դազան  
սոսկալի, որ հայերէն կը կոչուի նաև նհանէ  
քեռոց, և է հասարակ Աֆրիկէի գետերուն



ԿՈԿՈՐԴԻԼՈՑ

մէջ. Հնդկաստան ունի գանգէսի կոկորդի-  
լոս, նաև Ամերիկա ունի տեսակ մը կոկորդի-  
լոս, ալեկուտու կոչուած որ երբեմն կը յարձա-  
կի մարդոց և անամսոց վրայ :

Հ. Ուրիշ Բնչ մողէսներ կան :

Պ. Ուրիշ գլխաւոր մողէսք են՝ արտօյն որ  
ունի հովահարի ձեւ կատար գլուխը, մէկ  
տեսակը նաև ելունդ՝ պարանոցը. Քէշո կոչ-

ուածը որ է թեւաւոր . քեռնառներ զորմէ հինք  
կը կարծէին թէ ամէն գոյն կ'առնուր :

Այս ամենայն մողէսք կը դտնուին Ասիոյ ,  
Աֆրիկէի և Ամերիկայի հարաւային տաք մա-  
սերը . գետնառիւծ միայն կը տեսնուի երբե-  
մըն Սպանիա :

Հ. Օձի տեսակներն որո՞նք են և ուր կը  
դտնուին :

Պ. Օձի գլխաւոր տեսակներն են ,  
1. Հերբու , ջրային օձ . ասոր ահագինները  
կը տեսնուին երբեմն Աղլանդեան Ովկիանոսի  
մէջ .

2. Բաժուժաւոր օձ . գլխաւորապէս Միախիթր-  
բիի հովիտը .

3. Բաժուժաւոր օձը , չարաթոյն . հա-  
րաւային Ասիա և Մալեզիա .

4. Թէլ օձ և սեռ օձ , վասակար յոյժ ,  
Աւստրալիա , և Վերջապէս

5. Վէլու օձ՝ (գլ. պոա) , անթոյն , բայց  
վիթխարի . Զախջախելով կը կանէ որոը . կը  
դտնուի հարաւային Ամերիկա , Մալեզիա և  
Հնդկաստան :

## ԴԱՍ ՃԱ.

Հ. Ծովային կաթնատու անասուններէն  
Բնչ ունի Եւրոպա :


Պ. Ծովային կաթնատու անասուններն կը  
բաժնուին երկուքի , Երկանացանց , այսինքն՝ ա-  
նոնք որ կընան թէ ցամաքի վրայ և թէ ջրոյ

մէջ ապրիլ, և կէո՞ւ, (պալէնա) այսինքն՝ ա-  
նոնք որ կէտ ձկան տեսակէն են :

Հ. Որո՞նք են երկակենցաղք :

Պ. Երկակենցաղներու տոհմէն են Ծովարջ  
և Ծովածի : Ասոնց բնակութեան տեղն է բա-  
րեխառն գօտ-  
ոյն ցրտագոյն  
մասը, թէ հիւ-  
սիսային և թէ  
հարաւային կի-  
սագունտին վր-  
րայ : Ծովածին  
որ քան զմեծա-  
գոյն գոմէշը մեծ  
և ահադին է  
շատ կ'որսացուի  
իւղոյն և ժան-  
եաց համար :

Կէո՞ւ (պալէ-  
նա) կը գտնը-  
ւին մեծ բազմու-  
թեամբ հարա-  
ւային սառուց-



ՈՐՍ ՇՈՎԱՐՁՈՒ

եալ ովկիանոսի մէջ : Այս ձկան այն տեսակը  
որոյ գլխէն կելլէ կորի ուրմ (արէրմաչէթ) կոչ-  
ուած պատուական իւղը, կը գտնուի բոլոր  
ովկիանոսի մէջ բաց ի հիւսիսայնէն : Է յաղ-  
թամարմին գաղան, 75 ոտք երկայն, ստէպ  
կ'որսացուի իւղոյն համար, և կ'ըսուի թէ կա-  
տաղաբար կը կոռուի որսորդաց հետ, և կ'ըն-

կը դմէ անոնց նաւերն ահադին որո՞մբը (պոչ)։  
Դիէնն (եօնուղ) որ այնպէս նշանաւոր են  
շատակերութեամբ և արագաշարժութեամբ՝  
կը գտնուին գրեթէ լայնութեան ամէն աս-  
տիճանի տակ, և իրենց թաւալմամբ կ'որսան  
մանր մանր ձուկեր : Գրամբ ձուկը դիմինի  
տեսակներուն մեծագոյնը և վայրենագոյնն  
է, որ կէտ ձկան հետ անգամ կը համարձակի  
կոռուիլ:

Մանաս, տկու և աստեղուկ կոչուած ա-  
նասունք, ըստ ռամկաց ծովագուշակապա-  
րիկ և համբարու, ծովային կաթնասուաց  
կարգէն խոտակեր անասուններ են, որ ծո-  
վու գաղձ (ծովային խոտ) և գետերուն յա-  
տակը բուսած խոտեր կ'ուտեն : Կանգուն նըս-  
տելով կը գիեցունեն իրենց ձագերը, և աս-  
կէ ելած կը թուի համբարուց և յուշէպարէնց  
(տէնիզ գլղը) առասպելը : Փոկ (տէնիզ տա-  
նասը), որ հիւսիսային ծովեղերքը միայն կը  
տեսնուի :

Հ. Զկունք ունին իրենց յատուկ ծովեր :

Պ. Ինչպէս թուչունք, նոյնպէս ձկունք ընդ-  
հանրապէս որոշ սահման չունին . Ջրոյն մէջ  
կրնան գէւրաւ երթեւեկել, իրարու հետ ի  
կոռուի են միշտ, շատ տեսակները նաեւ կը  
գաղթեն ծովէ ծովը սահմանակին, բայց և  
այնպէս կան տեսակներ որ ընդ հանրապէս  
այս ինչ կամ այն ինչ ծով կը գտնուին :

Հ. Զկան գլխաւոր տեսակներն որո՞նք են :

Պ. Զկան գլխաւոր տեսակներն են .

1. Շանայուկն և սղցայուկն , և կը գտնուին գրեթէ ամէն ծով , մանաւանդ ընդարձակ ծովեր , հեռու ցամաքէն .

2. Պայ (գղ. շիմէր) , կը յարձակի խումբ խումբ տարեխներու (բնակ պալեա) վրայ հիւսային սառուցեալ ծովոն մէջ :

3. Տափայուկն (փիսի) , կը գտնուի գրեթէ ամէն ծով . այս տեսակէն է նմբայուկն (բաատ) որ անուանի է ելեկտրականութեամբ , կը գտնուի Ափրիկէ . ուրիշ ահագին տեսակը կը գտնուի Գալիֆոռնիոյ ծոցը , ուր երբեմն կ'ուտէ մարգարիտ որսացողներ .

4. Թառափ (մէրսին պալըղը) . կը գտնուի գրեթէ ամէն ծով և մեծամեծ գետեր . ասոր ձուէն կը շինեն Բուսը աղչէն (խաւեար) .

5. Սաղոն , կը գտնուի գրեթէ ամէն ծով և գետ .

6. Ծաղյին առբեկ (ըինկա պալըղը) , տարւոյն մեծ մասը կը կենայ հիւսիսային ծովին խորը , բայց տարին երեք անգամ , գարնան , ամառը և աշնան , ելլելով այն ծովին անթիւ բազմութեամբ , կ'երթայ գէպ արեւմուտք՝ Ամերիկա , և գէպ արեւելք՝ մինչեւ Պալդիկ , Գաղիոյ , Անդզիոյ և Սպանիոյ եղբայրը :

7. Անէր (սարտէլա պալըղը) , կը գտնուի Ովկիանոսի և Միջերկրականին մէջ , մանաւանդ Սարտենիոյ մօտ , որմէ առած է առբանին կամ առբանի անունը :

8. Անջրու (խամսի) , որմէ մեծ բազմու-

թեամբ կ'որսան չոլանտա և Միջերկրականին մէջ , աղծելու համար .

9. Գայլայուկն (թուրնա պալըղը) , անոյշ ջրը ձուկ է .

10. Ծածան , կը գտնուի ամէն լայնութեան տակ . ոսկեգոյն կարմիր տեսակը որ կը գտնուի բուն Զինու կողմը՝ ընտանեցած է առ մեզ .

11. Ջառայուկն (պագդալա) , կը գտնուի մանաւանդ Աղլանդեան Ովկիանոսի մէջ , և կ'որսացուի մեծ բազմութեամբ :

12. Վահանայուկն (եայրն պալըղը) , վահանայուկն , հասարակ են ամէն ծով .

13. Օյայուկն , ծովու միանգամայն անոյշ ջրոյ ձուկն , կը գտնուի լայնութեան գրեթէ ամէն աստիճանի տակ . նոյնպէս է Դուենէ (մօրէնա պալըղը) , որոյ ընտիրն է իտալիոյ միւռենէն .

14. Թառառ (թէքիր) , կը գտնուի Միջերկրականին մէջ . անուանի է համոյն համար .

15. Թէւանի (իւսկիւմիւ), Անոս (փալամուտ) կը գտնուին գրեթէ ամէն ծով . Երկոքին մեծ նիւթ են որսոյ Միջերկրականին մէջ .

16. Թբրյուկն (գըլլճ պալըղը) , առատ Միջերկրականին մէջ :

Թուրքիոյ ծովեզերքը ձկունք առատ են : Կոստանդնուպոլսոյ նեղցին կամ Բոսֆորոսի մէջ կ'որսացուի աւելի քան եօթանասուն տեսակ ձուկ : Նաեւ գետերու մէջ կը գտնուին խայտկի նման համեղ ձկունք :



ԴԱՍ ԾՐ ·

Հ. Գլխաւոր խեցեմորթք որո՞նք են և ո՞ւր կը գտնուին :

Պ. Աշխարհիս հնագոյն անասուններն են էեցեմբնեւ, որոց անթիւ տեսակներուն խեցիները կամ պատեանները կը գտնուին ցարդ, զարմանալի ձեւերով և գոյներով։ Արդի խեցեմորթաց օգտակարագոյն տեսակներն են,

1. Ուորեւ (ըսթրիտեա) որոց ազնուագոյններն են Անդղիոյ և Օսդէնտէի ոստրէք, բայց կը գտնուին ուրիշ շատ ծովերու մէջ, և կ'ուտուին նաեւ հում.

2. Ուտելի խեցեմորթ է յիշան ականջ (միտիա)։

3. Գողդակուր կոչուած խեցեմորթք որ կուտան մարգարիտ, և կ'որսացուին գլխաւորապէս Պարսից ծոցը, Սէյլան կղզւոյն և Հընդկաստանի մէջտեղ և գալիֆոռնիոյ ծոցը։

4. Պէնայ (փինէղ), կը գտնուի Միջերկրականին մէջ։ Ասոր մետաքսանման թելերէն գալապրացիք և Սիկիլիացիք կը գործեն բեհեղ։

5. Խլւաջ (սայլանկէօղ), շատ երկիրներ կ'ուտուի ախորժանօք, մանաւանդ գերմանիա :

6. Ծէւանաբեր խլւաջ։ ունին փամիուշտ լի հիւթով որ կու տայ մանուշակագոյն ծիրանի, ընտիր տեսակը կը գտնուի Միջերկրականին մէջ։

7. Մեռէ կամ լր+ (միւրէքքէպ պալրզ), յարդի է սեւ ներկին համար ։ ընտիր տեսակը կը գտնուի նոյնպէս Միջերկրականին մէջ, մանաւանդ իտալիոյ մօտ։ Զիսու մէլն կոչուած ներկին գլխաւոր մասն այս ձկան ներկէն կը կարծուի։

ԴԱՍ ՄԳ ·

Հ. Գլխաւոր միջատներ որո՞նք են :

Պ. Միջատ կ'ըսուին այն անասունք որոց մարմինը յօդուած յօդուած է։ Այս տեսակ անասնոց գլխաւորներն են,

1. Տչոր-է, բժշկութեան մէջ յարդի է, մանաւանդ Ունկարիոյ տղրուկը։ Հնդկաստան կը գտնուի տեսակ մը ցամաքային տղրուկ, վնասակար յոյժ։

2. Խելչէռնէ (չաղանօս) և էեցէռնէ (ըսթագօս) տեսակները որ շատ ծովերու և գետերու մէջ կը գտնուին.

3. Սարդ (մամուկ), ունի մեծ տեսակներ որոց ոստայնը բաւական ուժեղ է մինչեւ արգելուլ մանր թռչուններ իբրեւ ի վարմի։ Ունի նաեւ վնասակար տեսակներ.

4. Կարէն (ագրէպ), կը գտնուի տաք երկիրներ, և ընդհանրապէս կը տեսնուի ամառուան ջերմագոյն օրերը.

5. Փառուրայ (աթէշ պէօճէյի), մեծագոյն և լուսաւոր տեսակները կը գտնուին հասա-

բակածի կողմերը, մանաւանդ Պրաղիլիս .

6. Մարտ (Հէքիրկէ), ունի շատ տեսակ-ներ . կը գտնուի տաք երկիրներ, և երբեմն անժիւ բազմութեամբ տեղալով հեռաւոր երկիրներու վրայ, կ'ուտէ կը լափէ ամէն կանաչ, և դիակամբը կ'ապականէ օդը . ի վաղուց հետէ սոսկալի աղէտ համարուած է մարախը : Անապատի բնակիչներէն ոմանց կերակուրն է մարախ :

7. Մրջեա (գարընճա), սպիտակ ապականիչ տեսակը կը գտնուի Ափրիկէ, մանաւանդ կուինէա և Սենեկամպիա : Մրջնոյ մեծամեծ տեսակներ կը գտնուին բուն Աւստրալիա մեծ բազմութեամբ .

8. Մելու, անուանի իւր աղնիւ հիւթոյն համար որ է մեղք . կը պահուի ամէն տաք և բարեխառն երկիր .

9. Ուրտան հորդը (գըրմըզ), կու տայ գեղեցիկ կարմիր ներկ . աղնուագոյն տեսակը կը գտնուի Մեքսիկոյ, կրնայ յառաջ դալ նաեւ հարաւային Եւրոպա, մանաւանդ Ապանիս .

10. Շերտ (իփէ.ք պէօճէ.յի), անուանի որդն կերպասաբեր . է բուն յարեւելեան Ասիոյ, մանաւանդ Զինաստանէ : Ա.ա Յուստիանոսիւ, Հնդկաստան զրկուած միաձունք այս պատուական որդը պահելու գաղտնիքը սորվեցան, որդը քերին Եւրոպա, յետոյ Արաբացիք մուծին շերամի մշակութիւնը Սպանիա և հիւսիսային Ափրիկէ, ապա մոտ Սիկիլիա և հարաւային Խտալիա, վերջապէս Խաչակ-

րաց ժամանակ բերուեցաւ նաեւ գաղիս .

11. Մէկիւ (Սիվրի սինէ.ք), հասարակածին կողմերն արդարեւ պատուհաս են մարդոց և անսամոց մմիւսք : Զարմանալի է որ նաեւ հիւսիսային երկիրներ, ինչպէս Լաբոնիա, իսլանաա կարճ ամառներն այնպէս սոսկալի են այս միջատք ինչպէս հասարակածին երկիրները :

### ԴԱՍ ԾՂ.

Հ. Գլխաւոր կենդանաբոյսք որո՞նք են :

Պ. կենդանաբոյսք տեսակ մը ստորին աստիճանի տձեւ անասուններ են, որ բոյսերու պէս փակած կը մնան ընդհանրապէս ջրային կամ խոնաւ տեղեր, ոմանք նաեւ մարդուս փորոտեաց մէջ : Գլխաւոր տեսակներն են,

1. Ունուր (գ.դ. հօլոթիւրի), կը գտնուի Աւստրալիոյ մօտ ծովուն մէջ քարերու վրայ : Զինացիք ախորժելով կ'ուտեն այս որդը, և է մեծ առեւտրոյ նիւթ Մալեզիա և արեւելեան հարաւային Ասիոյ եղերքը .

2. Փուրուր (ոօղուճան), կը գոյանայ մարդոց փորոտեաց մէջ, և տեղ տեղ մեծ ֆասներ կու տայ մարդոց, զորօրինակ Մերինէի կամ կուբայի որդը, որ Արաբիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի, Հապէշի և կուինէայի բնակչաց մեծ հարուած կու տայ : Փորորդան մէկ տեսակն է երեւ կոչուած որդը զոր ունին

ընդհանրապէս բնակիչք հարաւային եւրոպա ,  
և գնջուած կոչուած որդը զոր ունին բնակիչք  
հիւսիսոյ .

Յ. Պողէո (ըխտափօթ) , կապրի ջրոյ մէջ ,  
ուր բազմանալով և կրային նիւթով մածեալ  
կը կազմէ ահագին կոյտեր : Պողիպի պատ-  
ուական տեսակն է բուռու (մէրճան) որ աճե-  
լով կ'առնու անտերեւ թփոյ ձեւ , և կը գըտ-  
նուի գլխաւորապէս Միջերկրական և կարմիր  
ծովերուն մէջ : Բուռտը կարեւոր նիւթ է որ-  
սոյ հիւսիսային Ավրիկէի բնակչաց : Տեսակ  
մը պողիպ է նաեւ արունէ (սիւնկէր) , կը գըտ-  
նուի Միջերկրական ծովուն արեւելեան կողմը  
և հարաւային Ամերիկայի եղերքը : Ընդհան-  
րապէս Արքիպեղագոսի կղզիներէն կը բերուի  
սունկ :

## ՑԱՆԿ

### ԹՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԻ ԹԵՇԵՑՆ

|                            |    |
|----------------------------|----|
| ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԲՆԱԿԱՆ     | 3  |
| Ա. ԵՐԿՐԻՍ ԵՐԵՍԸ            | 3  |
| Յամաք                      | 3  |
| 1. Լերնե+                  | 5  |
| 2. Դաշուր+                 | 14 |
| 3. Կոչուկ+                 | 14 |
| Զուր                       | 15 |
| Ա. Ցամաքային ջուր          | 15 |
| 1. Ակուն+                  | 16 |
| 2. Գերեր                   | 18 |
| 3. Ծովակներ                | 24 |
| Բ. Ծովային ջուրք կամ ծովեր | 25 |
| 1. Խաղոց+                  | 31 |
| 2. Ցույնեն+                | 32 |
| Բ. ՄԹՆՈԼՈՐՏ                | 37 |
| Կլիմայ                     | 37 |
| Ջերմութիւն                 | 37 |
| Հողմ                       | 45 |
| Օդերեւոյքք                 | 50 |
| 1. Ջրային օդերեւոյքք+      | 50 |
| 2. Հրային օդերեւոյքք+      | 56 |
| 3. Մայիսական օդերեւոյքք+   | 62 |

|                                              |     |
|----------------------------------------------|-----|
| <b>Գ.</b> ԵՐԿՐԱԳՈՒՆՏԸ ԲԱՂԿԱՑՆՈՂ ԵՒ ԵՐԿՐԻՄ Ե- |     |
| ՐԵՍԸ ԶԱՐԴԱՐՈՂ ՄԱՐՄԻՆՔ . . . . .              | 63  |
| <b>1.</b> Անգործարան մարմինք . . . . .       | 65  |
| <b>Ա.</b> Քարինք . . . . .                   | 71  |
| 1. Կըտին +աբեր . . . . .                     | 71  |
| 2. Գայլախոչեայ +աբեր . . . . .               | 72  |
| 3. Խառար +աբեր . . . . .                     | 74  |
| 4. Կառեր և հողեր . . . . .                   | 75  |
| 5. Հեքեսքեան +աբեր . . . . .                 | 76  |
| 6. Պարուսիսն +աբեր . . . . .                 | 76  |
| <b>Բ.</b> Գլխաւոր մետաղ . . . . .            | 78  |
| <b>Գ.</b> Այրելի կամ վառելի հանք . . . . .   | 97  |
| <b>2.</b> Գործարանաւոր մարմինք . . . . .     | 82  |
| 1. Բայս + . . . . .                          | 82  |
| 2. Շնառութ + . . . . .                       | 103 |

## Բ Ա Ռ Ք

|                       |                |               |                  |
|-----------------------|----------------|---------------|------------------|
| Ագելազ .              | cangarou .     | Երփնարար .    | spath-fluor .    |
| Աղամաթզենի .          | bananier .     | Զառնակ .      | cobalt .         |
| Ալպեան մուկն .        | marmote .      | Զերկոն .      | zircon .         |
| Աղտոր , տես Քացխենի . | .              | Ծնծուկ .      | cougouar .       |
| Աղումակ .             | sel gemme .    | Թհւատ .       | manchot .        |
| Այզոն .               | ampélite .     | Թմբի .        | tileul .         |
| Այժմարդ .             | orang-outang . | Թմբրածուկն .  | torpille .       |
| Այծեամն .             | antilope .     | Թօն .         | orage .          |
| Այծուղտ .             | lama .         | Ժանտահոտ .    | moufette .       |
| Անկէզ .               | amiante .      | Ժոռատ .       | édenté .         |
| Անուշաղր .            | sel ammoniac . | Լաստենի .     | aune .           |
| Ապրսամ .              | balsamier .    | Լեզուածուկն . | sole .           |
| Արարոդ .              | arrow-root .   | Լուսաբար .    | mica .           |
| Արեւակն .             | opale .        | Լրթարար .     | lapis lazuli .   |
| Արծին .               | émeril .       | Լրջահաւ .     | argus .          |
| Արքայիսնձոր .         | ananas .       | Խիւսենի .     | maranta .        |
| Արքայիկ .             | basilic .      | Խնկենի .      | bosvellia .      |
| Բովածուխ .            | houille .      | Խոյժ .        | tourbe .         |
| Բուռ .                | calcaire .     | Մածան .       | carpe .          |
| Գազի խիժ .            | abragant .     | Մարիք .       | antimoine .      |
| Գայլախազ .            | silex .        | Միւտ .        | tangaras .       |
| Գայլածուկն .          | brochet .      | Մորենի .      | guttier .        |
| Գետակինճ .            | cabiai .       | Կահենի .      | acajou .         |
| Գերմանիկ մուկն .      | hamster .      | Կարկեհան .    | rubis .          |
| Գիրուկ .              | pingouin .     | Կարմրասարդ .  | bots de Cam-     |
| Գորշուկ .             | blaireau .     | պէche .       | .                |
| Գրածուխ .             | graphite .     | Կաւ .         | argile .         |
| Գառնիճ հող .          | magnésie .     | Կզարիս .      | martre .         |
| Գեղնակն .             | jargon .       | Կնզում .      | hermine .        |
| Գոճ , դոճի խիժ .      | laque .        | Կողէզ .       | colza .          |
| Գրախտավարդ .          | hortensia .    | Կոճ .         | astragale .      |
| Եղնզնարար .           | onyx .         | Կոսիճ .       | sable siliceux . |
| Երաստ .               | feld-spath .   | Կուղը .       | castor .         |
| Երէզ .                | ténia .        | Կոփենի .      | cafier .         |
| Երոյր .               | manganèse .    | Կպրամիւթ .    | asphalte .       |

|                   |                              |                            |                     |
|-------------------|------------------------------|----------------------------|---------------------|
| Կարի կամ կուենի . | մելèze.                      | Չանաձուկն .                | requin .            |
| Համեմուկ .        | vanille.                     | Չիկակաւ .                  | argile ocreuse .    |
| Հատաքար .         | granite .                    | Չիկենի .                   | brésil .            |
| Հացենի .          | arbre à pain .               | Ոսկեհաւ .                  | faisan dore .       |
| Հացի .            | érable .                     | Ոսպնակն .                  | corindon .          |
| Հաւամրզի .        | bruyère .                    | Ործաքար .                  | quartz .            |
| Հաւառունզն .      | ornithorhynque .             | Ոփի .                      | hêtre .             |
| Հետահան .         | ichneumon .                  | Չեչաքար .                  | ponce .             |
| Հերծի .           | lentisque .                  | Պարկերէ .                  | sarigüe .           |
| Հեւենի .          | hévéa .                      | Պիսակ եւ ոսկեխայտ սեւ մար- |                     |
| Հեվիստեհան .      | volcanique .                 | մարիոն .                   | portor noir, tache- |
| Հնդկանուշ .       | cacao .                      | Պրազիլեան շափիւզա .        | tour-               |
| Հնդիկ ճաքար .     | gerboise .                   | մալine .                   |                     |
| Հնդիկ ռետին .     | gomme gutte .                | Ջրաղուկս .                 | loutre .            |
| Հնդիկ ջայլասմն .  | casoar .                     | Սամոյը .                   | xibeline .          |
| Հնդկեղէզն .       | bambou .                     | Սարդիոն .                  | cornaline .         |
| Հրկենի .          | roucouyer .                  | Սեւարդ .                   | ardoise .           |
| Հրուկ .           | roucou .                     | Սուտակն .                  | spinelle .          |
| Զարխոտ .          | fougère .                    | Սրբնի .                    | acacia .            |
| Զողաձուկն .       | perche .                     | Վագերակուզ .               | serval .            |
| Ճանդան .          | sandal .                     | Վազերամի .                 | zèbre .             |
| Ճարսենի .         | croton sébifère կամ<br>արե . | Վահանաձուկն .              | turbot .            |
| Մաղծենի .         | ipécacuana .                 | Վանակն .                   | cristal de roche .  |
| Մատուտակ .        | réglinse .                   | Տափաձուկն .                | raie .              |
| Մարդաքաղ .        | gibbon .                     | Տենդի .                    | quinquina .         |
| Մարմուկն .        | campagnol .                  | Տորոն .                    | garance .           |
| Մեղրածուծ .       | colibri .                    | Ցախ .                      | frêne .             |
| Միածանի .         | narwhal .                    | Ցարասի .                   | bouleau .           |
| Մշկան .           | rat musqué .                 | Փայտեղ .                   | lignite .           |
| Մշկենի .          | muscadier .                  | Փնչասար .                  | betryocéphale .     |
| Մշուկ .           | ricin .                      | Քաղկիղեան ակատ .           | calcé-              |
| Յախիճ .           | kaolin .                     |                            | doine .             |
| Յամրուկ .         | paresseux .                  | Քարածուխ .                 | anthracite .        |
| Նորուեկան մուկն . | lemming .                    | Քարիւղ .                   | pétrole .           |
| Չազր .            | jagouar .                    | Քնարոտուն .                | lyre .              |



Պաշտպանութեալ առկա է ըստ միջին քայլ գործոց  
Հայ ժողով ու ազգ Պահպանութեալ ու շատ համառօս  
Օրդեն ազգական բարձրագույն մակարդակից բարձր ու  
բարձրագույն պարագաներ ու պարագաներ ու առողջութեալ համար

10. The author's name is not mentioned.

Presto! Presto!